Հավելված N 2

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2023թ [illegible] N 27-Ն հրամանի

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման հիման վրա անձի ֆունկցիոնալության գնահատման ժամանակ անձի գործունեության և մասնակցության (d ծածկագրեր) գնահատման

Այս ուղեցույցը ստեղծվել է ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների գործընկերության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսական աջակցությամբ, ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության և ՄԱԿ-ի գործակալությունների հետ համագործակցության շրջանակներում: Ուղեցույցում ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն Ռուսաստանի Դաշնության և ՄԱԿ-ի գործակալությունների քաղաքականությունը կամ տեսակետները:

© ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 2023թ.
© ՅՈՒՆԻՍԵՖ, 2023թ.

Ուղեցույցի ցանկացած հատված վերարտադրելու համար անհրաժեշտ է թույլտվություն: Թույլտվությունն ազատ կտրվի կրթական կամ ոչ առևտրային կազմակերպություններին

Գրավոր հարցումները պետք է ուղղվեն ՀՀ ԱՍՀՆ-ի info@mlsa.am և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակին, էլ. yerevan@unicef.org,
ՅՈՒՆԻՍԵՖ 14 Պետրոս Ադամյան փողոց, Երևան 0010, Հայաստան

# Բովանդակություն


Մեթոդական ուղեցույցը մշակող փորձագիտական թիմը ....... 6

Մեթոդական ուղեցույցի կառուցվածքը ....... 8

ԱՀԿ ՖՄԴ «d1» ծածկագրեր՝ Սովորելը և գիտելիքը կիրառելը ....... 11

ԱՀԿ ՖՄԴ «d2» ծածկագրեր՝ Ընդհանուր առաջադրանքներ և պահանջներ ....... 49

ԱՀԿ ՖՄԴ «d3» ծածկագրեր՝ Հաղորդակցությունը ....... 58

ԱՀԿ ՖՄԴ «d4» ծածկագրեր՝ Շարժունակությունը ....... 88

ԱՀԿ ՖՄԴ «d5» ծածկագրեր՝ Ինքնասպասարկումը ....... 111

ԱՀԿ ՖՄԴ «d6» ծածկագրեր՝ Կենցաղը ....... 125

ՀԿ ՖՄԴ «d7» ծածկագրեր՝ Միջանձնային շփումը և հարաբերությունները ....... 133

ԱՀԿ ՖՄԴ «d8» ծածկագրեր՝ Կյանքի հիմնական բնագավառները ....... 144

ԱՀԿ ՖՄԴ «d9» ծածկագրեր՝ Համայնքային կյանքը ....... 164

Հավելվածներ ....... 168

Հավելված 1 - dl Ստիմուլային նյութեր ....... 168

Ստիմուլային նյութ N1 ....... 168

Ստիմուլային նյութ N2 ....... 169

Ստիմուլային նյութ N3 ....... 170

Ստիմուլային նյութ N4 ....... 173

Ստիմուլային նյութ N5 ....... 175

Ստիմուլային նյութ N6 ....... 176

Ստիմուլային նյութ N7 ....... 177

Ստիմուլային նյութ N8 ....... 178

Ստիմուլային նյութ N9 ....... 179

Ստիմուլային նյութ N10 ....... 180

Ստիմուլային նյութ N11 ....... 181

Ստիմուլային նյութ N12 ....... 181

Ստիմուլային նյութ N13 ....... 182

Ստիմուլային նյութ N14 ....... 183

Ստիմուլային նյութ N15 ....... 186

Ստիմուլային նյութ N16 ....... 187

Ստիմուլային նյութ N17 ....... 188

Ստիմուլային նյութ N18 .................... 190
Ստիմուլային նյութ N19 .................... 193
Ստիմուլային նյութ N21 .................... 194
Ստիմուլային նյութ N22 .................... 196
Ստիմուլային նյութ N23 .................... 196
Ստիմուլային նյութ N24 .................... 197
Ստիմուլային նյութ N25 .................... 197
Ստիմուլային նյութ N26 .................... 198
Ստիմուլային նյութ N27 .................... 198
Ստիմուլային նյութ N28 .................... 199
Ստիմուլային նյութ N29 .................... 199
Ստիմուլային նյութ N30 .................... 201
Ստիմուլային նյութ N31 .................... 202
Ստիմուլային նյութ N32 .................... 203
Ստիմուլային նյութ N33 .................... 205
Ստիմուլային նյութ N34 .................... 206
Հավելված 2 - d1 Աշխատանքային նյութեր .................... 206
Աշխատանքային նյութ N1 .................... 206
Աշխատանքային նյութ N2 .................... 207
Աշխատանքային նյութ N3 .................... 207
Աշխատանքային նյութ N4 .................... 207
Աշխատանքային նյութ N5 .................... 209
Աշխատանքային նյութ N6 .................... 210
Աշխատանքային նյութ N7 .................... 210
Աշխատանքային նյութ N8 .................... 211
Աշխատանքային նյութ N9 .................... 212
Աշխատանքային նյութ N10 .................... 213
Աշխատանքային նյութ N11 .................... 214
Աշխատանքային նյութ N12 .................... 214
Աշխատանքային նյութ N13 .................... 214
Աշխատանքային նյութ N14 .................... 215
Աշխատանքային նյութ N15 .................... 215
Աշխատանքային նյութ N16 .................... 216
Աշխատանքային նյութ N17 .................... 216
Աշխատանքային նյութ N18 .................... 217

Աշխատանքային նյութ N19 ..... 218
Աշխատանքային նյութ N20 ..... 218
Հավելված 3. d2 ..... 219
d210 ..... 219
D240/250 ..... 220
Հավելված 4. d3 ..... 224
d310. ..... 224
d315. ..... 225
D325 ..... 235
d330 ..... 237
d 335 ..... 243
d345 ..... 246
d350 ..... 248
d355 ..... 250
d360 ..... 252
Հավելված 5 d 530 ..... 259
Հավելված 5 d540 ..... 262
Հավելված 6 d8 ..... 267

# Մեթոդական ուղեցույցը մշակող փորձագիտական թիմը

Սույն մեթոդական ուղեցույցը մշակվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) պատվերով՝ անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի ներդրման շրջանակում ապահովելու ֆունկցիոնալության գնահատման ստանդարտ մոտեցումը և անաչառությունը:

**Ուղեցույցը մշակվել է երեք փուլով՝** ուղեցույցի առաջին տարբերակը մշակվել է 2016 թվականին ՀՀ ԱՍՀՆ փորձագետներ՝ էրգոթերապիստ Մարիաննա Հարությունյանի և մնասվածքաբան Լևոն Գրիգորյանի կողմից, հիմք ընդունելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության Ֆունկցիոնալության, Հաշմանդամության և Առողջության միջազգային դասակարգչի (ԱՀԿ ՖՄԴ) գործունեություն և մասնակցություն ոլորտի ծածկագրերի նկարագրությունը և ՀՀ ԱՍՀՆ կողմից ձևավորված փորձագիտական թիմի կողմից առանձնացված անձի ֆունկցիոնալության գնահատման ծածկագրերի ցանկը:

2022 թվականին մեթոդական ուղեցույցը լրամշակվել է և համալրվել է ծածկագրերի գնահատման պարզաբանումներով՝ հիմք ընդունելով անձի գործունեության և մասնակցության ոլորտը գնահատելու համար միջազգայնորեն կիրառվող ստանդարտ թեստերի մոտեցումները, որոնք տեղայնացվել են Հայաստանյան համատեքստին համապատասխան: Մեթոդական ուղեցույցը մշակող փորձագետները ուղեցույցը փորձարկել են տարբեր տարիքային խմբերի և հաշմանդամություն ունեցող 73 անձանց գնահատելու ժամանակ:

Մեթոդական ուղեցույցը լրամշակող փորձագիտական թիմը ղեկավարել է Մարիաննա Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր, լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դոցենտ, էրգոթերապիայի մագիստրոս, վերականգնողաբան-էրգոթերապիստ:

Մեթոդական ուղեցույցի լրամշակումն իրականացրել են.

- Մերի Ավետիսյանը, էրգոթերապիստ, ՀՊՄՀ, Հարթշլական Հայկական Ասոցիացիայի մասնագիտական ծրագրերի համակարգող
- Լիլիթ Սարատիկյանը, մ.գ.թ., դոցենտ, լոգոպեդ, հատուկ հոգեբանի, ՀՊՄՀ
- Անահիտ Իսախանյան, բ.գ.թ., դոցենտ, Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտի բժիշկ-վերականգնողաբան
- Արաքսիա Սվաջյանը, մ.գ.թ., դոցենտ, լոգոպեդ, հատուկ մանկավարժ, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն
- Գոհար Հովյանը, մ.գ.թ., դոցենտ, լոգոպեդ, ՀՊՄՀ
- Արփինե Աշոտյանը, մանկավարժ-հոգեբան , «Քայլ առաջ» ՀԿ հոգեբան
- Աննա Մալխասյանը, լոգոպեդ
- Նունե Մելիքյանը, հոգեբան:

2023 թվականի հունվարին մեթոդական ուղեցույցը կրկին լրամշակվել է, այս անգամ անձի ֆունկցիոնալության գնահատման մասնագետների ոեբստրում գրանցված մասնագետների վերապատրաստման դասընթացների[1] ժամանակ փորձնական գնահատումների արդյունքների

---

[1] Վերապատրաստման դասընթացները կազմակերպվել են 2022 թվականի դեկտեմբերին ՀՀ ԱՍՀՆ պատվերով Աշխատանքի և սոցիալական հարցերի ազգային ինստիտուտի կողմից՝ ԱՄՆ-ի Զարգացման Գործակալության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ:

հիման վրա: Վերանայվել են ինչպես մեթոդական ուղեցույցի դիզայնը, այնպես էլ ծանկագրերի գնահատման համար կիրառվելիք թեստերի ցանկը և առաջարկանքները:

Մեթոդական ուղեցույցի երրորդ վերանայումն իրականացրել են 2022 թվականի հոկտեմբերին ՀՀ ԱՍՀՆ կողմից ընտրված անձի ֆունկցիոնալության գնահատող մասնագետներ վերապատրաստող մասնագետները.

| [illegible] | [illegible] |
|---|---|
| d110-d199 Սովորելը և գիտելիքը կիրառելը | Հայկուհի Ադամյան՝ հոգեբան, ՀՀ ԿԳՄՍՆ Հանրապետական Մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրենի պաշտոնակատար<br>Լիանա Մարգարյան՝ հատուկ մանկավարժ լոգոպեդ, ՀՀ ԿԳՄՍՆ Հանրապետական Մանկավարժահոգեբանական կենտրոն |
| d210; d220; d230;<br>d440; d445;<br>d510-d599 Ինքնասպասարկում<br>d620, d630; d640; d650;<br>d910-d920 Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանք: | Տաթևիկ Ղազարյան, էրգոթերապիստ, ՀՊՄՀ, «Լիարժեք կյանք» ՀԿ<br>Մերի Ավետիսյան, էրգոթերապիստ, ՀՊՄՀ, Հարբժշկական Հայկական Ասոցիացիայի մասնագիտական ծրագրերի համակարգող |
| d310-d399 Հաղորդակցություն | Մերի Շաբոյան, մ.գ.թ., ՀՊՄՀ, «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի պոլիկլինիկայի լոգոպեդ,«Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի նյարդավիրաբուժության և կաթվածի կենտրոնի լոգոպեդ<br>Աննա Մախսասյան, լոգոպեդ, Հարբժշկական Մասնագետների Հայկական Ասոցիացիայի համահիմնադիր |
| d410-d499 Շարժունակություն<br>d410, d415, d420, d430, d450, d455, d460, d465, d470, d475 | Անահիտ Խասխանյան, բ.գ.թ., դոցենտ, Երևանի Մ Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտի բժիշկ-վերականգնողաբան |
| d240; d250<br>d710-d799 Միջանձնային հարաբերություններ<br>d810-d899 Կյանքի հիմնական բնագավառներ | Արփինե Աշոտյան, մանկավարժ-հոգեբան , «Փոքր առաջ» ՀԿ հոգեբան |

Մեթոդական ուղեցույցի մշակման և փորձարկման աշխատանքները հնարավոր են դարձել ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Ի.ԷՍ.ԱՅ. խորհրդատվական խումբ ՀԿ-ի հետ համագործակցությամբ իրականացվող «Բարելավված ծառայություններ հավասար մասնակցության և ներառական զարգացման համար» ծրագրի շրջանակում: Մեթոդական ուղեցույցի խմբագրական աշխատանքներին աջակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը, ՀՀ ԱՍՀՆ Հավասար հնարավորությունների ապահովման վարչության Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետ Աննա Հակոբյանը, ՅՈՒՆԻՍԵՖ-ի կրթական և հաշմանդամության հարցերով մասնագետ Մայա Սիմոնյանը և Ի.ԷՍ.ԱՅ. խորհրդատվական խումբ ՀԿ սոցիալական հարցերով փորձագետ Հասմիկ Ղուկասյանը:

Մեթոդական ուղեցույցը նախատեսված է Միասնական սոցիալական ծառայության ներքո ձևավորվող անձի ֆունկցիոնալության գնահատման հանձնաժողովների հարբժշկական անդամների համար: Ուղեցույցը կարող են կիրառել նաև անձի գործունեությունը և մասնակցությունը ԱՀԿ ՖՄԴ մոտեցմամբ գնահատող բոլոր մասնագետները:

## Մեթոդական ուղեցույցի կառուցվածքը

Սույն մեթոդական ուղեցույցը ներկայացնում է ԱՀԿ ՖՄԴ «Գործունեություն և մասնակցություն» բաղադրիչի այն ծածկագրերի գնահատման մոտեցումները, որոնք ներառված են ՀՀ ԱՍՀՆ կողմից անձի ֆունկցիոնալության գնահատման համար կիրառվող արձանագրություններում և առանձնացված են ըստ տարիքային խմբերի և հաշմանդամության տեսակի:

ԱՀԿ ՖՄԴ «Գործունեություն և մասնակցություն» ոլորտը ներառում է 9-ը ենթաոլորտներ, որոնցից d1- d6 ոլորտները վերաբերում են անձի գործունեությանը, իսկ d7- d9 ոլորտները՝ անձի մասնակցությանը:

Ըստ ԱՀԿ ՖՄԴ սահմանման, «**գործունեությունը**» անձի կողմից առաջադրանքի կամ գործողության կատարումն է, իսկ «**մասնակցությունը**»՝ անձի ներգրավվածությունն է կյանքի տարբեր իրավիճակներում:

ԱՀԿ ՖՄԴ գործունեության և մասնակցության բաղադրիչի ոլորտները ներկայացված են հետևյալ բաշխվածությամբ.

1. d110-d199 Սովորելը և գիտելիքը կիրառելը
2. d210-d299 Ընդհանուր առաջադրանքներ և պահանջներ
3. d310-d399 Հաղորդակցություն
4. d410-d499 Շարժունակություն
5. d510-d599 Ինքնասպասարկում
6. d610-d699 Կենցաղի կազմակերպում
7. d710-d799 Միջանձնային հարաբերություններ
8. d810-d899 Կյանքի հիմնական բնագավառներ
9. d910-d999 Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանք:

**Գործունեության և մասնակցության բաղադրիչները նկարագրում են, թե ինչ է կատարում անձը առկա միջավայրում:** Առկա միջավայրն իր մեջ ներառում է նաև սոցիալական

սոցիալական հարաբերություններով. հետևաբար այս բաղադրիչի կիրառումը ենթադրում է մարդկանց ներգրավվածությունը կյանքի տվյալ իրավիճակում կամ կենսափորձը այն իրական միջավայրում, որում նրանք ապրում են:

Այս ծածկագրերը գնահատելիս պետք է հաշվի առնել անձի **առողջական խնդրով պայմանավորված** տվյալ գործողությունները կատարելու սահմանափակումները: Անձի խնդիրները դիտարկելիս պետք է հաշվի առնել, **թե նախորդ 12 ամիսների ընթացքում** որքան հաճախ է նա առնչվել տվյալ խնդրին, և արդյոք տվյալ խնդիրը անձի համար մեծ, կամ փոքր դժվարություն է ներկայացնում իր գործունեությունն իրականացնելու ընթացքում: Հարցերի պատասխանները գնահատման արձանագրության մեջ գրանցվում են 0-4 որակիչներով՝

- *0 - երբ անձը կարողանում է **առանց դժվարության** կատարել այդ գործողությունը, այդ իսկ պատճառով որակիչների նկարագրության մեջ ներառված չէ:*
- *1 - երբ անձը կարողանում է կատարել այդ գործողությունը **ինքնուրույն, բայց դժվարությամբ**.*
- *2 - երբ անձը տվյալ գործողությունը կարողանում է կատարել որոշակի աջակցության պայմանում՝ համապատասխան պարագայի/աջակցող սարքի առկայության դեպքում կամ այլ անձի **մասնակի** աջակցությամբ.*
- *3 - երբ դժվարությունը/խնդիրը ծանր է և անձը դա կարող է կատարել **միայն/մշտապես** այլ անձի օգնությամբ և/կամ համապատասխան պարագայի/աջակցող սարքի առկայության դեպքում.*
- *4 - երբ անձը այդ գործողությունը ընդհանրապես կատարել չի կարող կամ գործողության կատարման մեջ ընդհանրապես մասնակցություն չունի, անգամ օգնության պայմանում:*

Մեթոդական ուղեցույցը մշակելիս փորձագետների թիմն օգտվել է հետևյալ միջազգային թեստերից.

| Թեստի անվանումը | Գնահատման ոլորտը |
|---|---|
| RAVEN | Միջազգային IQ թեստ բոլոր տարիքային խմբերի համար |
| SFA | School function Assessment, դպրոցական գործունեության գնահատում |
| AFLS | Assessment of functional living skills, կենսագործունեության ֆունկցիոնալ գնահատում |
| Expressive Vocabulary Test EVT-3 | Նորմատիվ հղումով և անհատապես կառավարվող արտահայտիչ բառապաշարի և բառերի որոնման թեստ |
| GMFM | Gross Motor Function Measure, խոշոր մոտորիկայի ֆունկցիոնալության գնահատում |
| Berg Balance Tests and Rating Scale | Հավասարակշռության գնահատման թեստ |
| PEDI-cat | Pediatric Evaluation of Disability Inventory Computerized Adaptive Test, մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների հաշմանդամության գնահատման թեստ |
| Battelle Developmental Inventory | 0-7 տարեկան երեխաների զարգացման գնահատման թեստ |
| Barthel test | Առօրյա կյանքում անձի կատարողականը գնահատելու սանդղակ |
| FIM | Functional Independence Measure, ֆունկցիոնալ անկախության սանդղակ |
| COPM | Canadian Occupational Performance Measure, առօրյա կյանքում անձի կատարողականի գնահատման թեստ |



| Թեստի հապավումը | Գնահատման ոլորտը |
|---|---|
| ABLLS-R | Assessment of Basic Language and Learning Skills, խոսքի և ուսումնառության գնահատման թեստ |
| Wolf Motor Function Test (WMFT) | Վոլֆի շարժողական ֆունկցիաների գնահատման թեստ |
| Bruininks-Oseretsky Test of Motor Proficiency (BOT™-2 | Համակարգային շարժումների գնահատման թեստ |
| Action research arm test | Ձեռքի շարժունակության հետազոտության թեստ |

Բոլոր կիրառված թեստերի հղումները նշված են համապատասխան բաժիններում: Մասնագետները մշակել են թեստերի տրամաբանության հիման վրա հայկական տարբերակները՝ հիմք ընդունելով իրենց մասնագիտական փորձը և ոլորտային մասնագետների հետ խորհրդատվությունները:

ՀՀ ԱՍՀՆ նախատեսում է ուղեցույցում օգտագործված թեստերի պաշտոնական թարգմանությունը, արդյունավետ կիրառումը և վավերացումը առաջիկա տարիների ընթացքում:

Յուրաքանչյուր բաժնում բերված է ԱՀԿ ՖՄԴ ծածկագիրը, ծածկագրի բացատրությունը և 1 թեթևից - 4 խորը դժվարությունների աստիճանի գնահատման պարզաբանումը, գնահատման համար կիրառվող թեստը և անձին ուղղվելիք հարցադրումները և առաջադրանքները, ինչպես նաև թեստի արդյունքների փոխակերպումը ՖՄԴ որակիչների: Ըստ անհրաժեշտության տրված են ծածկագրերի գնահատման տարիքային առանձնահատկություններին համապատասխան առաջադրանքներ:

Գործունեություն և մասնակցություն ոլորտը գնահատվում է երկու որակիչներով՝ անձի կատարողականը և կարողությունը: Քանի որ անձի ֆունկցիոնալության աստիճանի գնահատման բանաձևի մեջ հաշվի է առնվելու միայն անձի կատարողականի որակիչը, այս մեթոդական ուղեցույցում տրված են միայն անձի կատարողականի գնահատման մոտեցումները: Անձի կարողության որակիչները գնահատող մասնագետները պետք է նշեն ըստ իրենց մասնագիտական պրակտիկայի և տվյալ անձի կատարողականի հիման վրա՝ գնահատման ժամանակ:

Յուրաքանչյուր ծածկագրի համար բերված են հուշող հարցեր, թեստեր/առաջադրանքներ: Իսկ հավելվածում առաջարկվում են նաև ստիմուլային և աշխատանքային նյութերը կամ լրացուցիչ թեստեր և առաջադրանքներ: Գնահատող մասնագետի համար պարտադիր է առաջնորդվել ուղեցույցում առաջարկվող թեստերի և առաջադրանքների կիրառմամբ և տվյալ ծածկագրի որակիչը դնել ՄԻԱՅՆ հիմնվելով կիրառված թեստի արդյունքների հիման վրա: Թեստերի և առաջադրանքների կիրառումը ապահովագրում է գնահատող մասնագետին հետագա բողոքներից, իսկ բողոքարկման դեպքում տալիս ապացուցողական հիմք, միևնույն ժամանակ գնահատում անցնող անձի համար գնահատման գործընթացը դարձնում է թափանցիկ:

Մեթոդական ուղեցույցում գունային կոդավորման նշանակությունը՝

| | |
|---|---|
| | ՖՄԴ ծածկագիրը և նկարագրությունը |
| | Գնահատող մասնագետների համար հուշող հարցերը |
| | Թեստը և առաջադրանքը, որը պետք է կիրառել գնահատման ժամանակ |
| | ՖՄԴ որակիչները |
| | Աղյուսակներ |

# ԱՀԿ ՖՄԴ «d1» ծածկագրեր՝ Սովորելը և գիտելիքը կիրառելը

Ուղեցույցի այս բաժնում ներկայացված են սովորելը, ձեռք բերված գիտելիքները կիրառելը, մտածելը, խնդիրներ լուծելը և որոշումներ կայացնելը:

Յուրաքանչյուր ծածկագրի գնահատման համար բերված են թեստեր կամ առաջադրանքներ, ինչպես նաև հավելված 1-ում և 2-ում ներկայացված են սարքավորային և աշխատանքային նյութերը, որոնք բխում են ուղեցույցում նշված առաջադրանքներից և օգտագործման հեշտության համար ունեն համապատասխան համարակալում:

Յուրաքանչյուր ծածկագրի համար որակիչ սահմանելիս՝ կարևոր է, որ գնահատող մասնագետը օգտվի համապատասխան ծածկագրի որակչի նկարագրություններից:

| | |
|---|---|
| **d110**<br>**Դիտելը (նայելը)** | *Տեսողական ազդակներն ընկալելու նպատակով կենտրոնացված զգայարանը նպատակաուղղված/միտումնավոր կերպով օգտագործելը, ինչպես օրինակ՝ սպորտային հանդեսը, մարդկանց դիտելը, մարզական խաղարկություն, որևէ անձի կամ խաղացող երեխաների նայելը* |
| **Հուշող հարցեր** | • *Ճանաչում է արդյո՞ք ամենօրյա կիրառման իրերը, առարկաները, խաղալիքները և դրանց պատկերները.*<br>• *Անսխալ ցույց կտա արդյո՞ք իր մարմնի մասերը.*<br>• *Անսխալ կգտնի արդյո՞ք, թե որտեղ է դրված հագուստի որևէ բաղադրիչ, խաղալիք, առարկա և այլն.*<br>• *Ինչպե՞ս է հետևում այլոց գործողություններին, հասկանում է արդյո՞ք դրանց իմաստը. օրինակ, Ձեր կատարած գործողությունների արդյունքում կռահո՞ւմ է, թե ի՞նչ եք անելու. (Եթե թուղթ և մատիտներ եք հանում դարակից, կհասկանա արդյոք, որ ուզում եք նկարել և այլն):*<br>• *Եթե սեղանին դրված նրա երեք խաղալիքներից կամ դրանց նկարներից մեկը բացակայի, կգտնի, թե ո՞րը չկա.*<br>• *հայացքով արձագանքում է արդյո՞ք անվանը կամ ցույց տալիս, թե ի՞նչ է ցանկանում.*<br>• *համարժեք գործողությունների և խաղերի ժամանակ հաղորդակից է հայացքով, թե՞ նման հաղորդակցումից խուսափողական վարքագիծ եք նկատում:* |
| **Թեստ/**<br>**Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1.** Դիտել թե ինչպես է երեխան հետևում շարժվող առարկաներին *(պարագաներ «մեքենա, գնդակ»):*<br>**Առաջադրանք 2.**<br>***3 և 4 տարեկանների համար***<br>«Որտե՞ղ է մյուս մասը»: Երեխային տրամադրել երկու մասի բաժանված երկու տեսակի միրգ, որպեսզի նա ամբողջացնի դրանք- |

(պարագաներ «Կպչուկով մրգերի հավաքածու»):

***5 տարեկանների համար***

Գտնում է համապատասխան մասը, ամբողջացնում է պատկերը *(հավելված 1, ստիմուլային նյութ N3)*:

**Առաջադրանք 3.** Ցուցադրել նկար, որտեղ պատկերված է 7 երեխա՝ նրանցից յուրաքանչյուրի ձեռքին կա իր հագուստի գույնին համապատասխան ծաղիկ (կարմիր, կապույտ, դեղին, կանաչ, սև, սպիտակ): Նրանք ունեն նաև պահարաններ, որոնց վրա պատկերված են ծաղիկներ, որոնց գույները համապատասխանում են երեխաներից յուրաքանչյուրի ձեռքին եղած ծաղիկների գույներին: Ելնելով դրանից՝ առաջարկել գտնել երեխաներից յուրաքանչյուրի պահարանը: Ի դեպ կարմիր գույնի ծաղիկ ունեցող աղջիկները երկուսն են: Կարելի է հարցնել, ո՞ր գույնն է, որ կրկնվում է: Նույն խաղի տարբերակ կարող է հանդիսանալ հինգ երկրաչափական պատկերներով (եռանկյունի, ուղղանկյունի, շեղանկյունի, շրջան և քառակուսի) շապիկ հագած երեխաների համապատասխան սրբիչների համադրումը *(հավելված 1, ստիմուլային նյութ N 1, 2)*:

**Առաջադրանք 4.** Ցուցադրել անավարտ նկար և առաջարկել ավարտել այն, կամ ասել, թե առարկայի ո՞ր մասն է անավարտ *(հավելված 1, ստիմուլային նյութ N4)*:

**Առաջադրանք 5.** Ի՞նչ առարկաներ կան թաքնված նկարում *(հավելված 1, ստիմուլային նյութ N5)*

Այստեղ կիրառելի է d131 ծածկագրի 3-5 տարիքային խմբի համար նախատեսված Առաջադրանք 3-ը:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

**Առաջադրանք 1.** Հաշվում է միանման պատկերների քանակը և լրացնում աղյուսակում *(հավելված 2, աշխատանքային նյութ N1)*: Հաշվել չիմացող երեխաների դեպքում՝ ցույց է տալիս միանման պատկերները:

**Առաջադրանք 2.** Ի՞նչ առարկաներ կան թաքնված նկարում: Կիրառել Ի.Մ. Տոնկոնոգի և Ի.Ի. Ցուկերմանի «Տեսողական աղմուկի» սկզբունքով և Վալտեր Փոփելռոյթերի (Вальтер Поппельрейтер) իրար վրա նկարված պատկերները ճանաչելու մեթոդը *(հավելված 1, ստիմուլային նյութ N6)*:

**Առաջադրանք 3.** Սյուժետային նկարում գտնում է տարբերությունները *(հավելված 1, ստիմուլային նյութ N7)*:

**Առաջադրանք 4.** 32, 89, 10, 113, 998 թվերը գտնել նշված թվաշարքերում և վերցնել շրջանակի մեջ կամ ընդգծել *(հավելված 2, աշխատանքային նյութ N2)*.

998783251989982101111356

<table>
<tr>
<td></td>
<td>

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 15-18 ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**

**Առաջադրանք 1.** Հաշվում է միանման պատկերների քանակը և լրացնում աղյուսակում *(հավելված 2, աշխատանքային էջ N1):*

**Առաջադրանք 2.** Ի՞նչ առարկաներ կան թաքնված նկարում: Կիրառել Ի.Մ. Տոնկոնոգի և Ի.Ի. Ցուկերմանի «Տեսողական ագնոզիա» սկզբունքով և Ըստ Փոփելռոյթեր (Вальтер Поппельрейтер) իրար վրա նկարված պատկերները ճանաչելու մեթոդը *(հավելված 2, աշխատանքային էջ N1):*

**Առաջադրանք 3.** Սյուժետային նկարում գտնում է տարբերությունները *(հավելված 1, սյուժետային էջ N7):*

**Առաջադրանք 4.** 32, 89, 10, 113, 998 թվերը գտնել հետևյալ թվաշարքերում և վերցնել շրջանակի մեջ կամ ընդգծել *(հավելված 2, աշխատանքային էջ N2).*

998783251989982101111356

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 18-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**

**Առաջադրանք 1.** Հաշվում է միանման պատկերների քանակը և լրացնում աղյուսակում *(հավելված 2, աշխատանքային էջ N1):*

**Առաջադրանք 2.** Սյուժետային նկարում գտնում է տարբերությունները *(հավելված 1, սյուժետային էջ N7):*

**Առաջադրանք 3.** Թվաշարքում գտնել ճիշտ պատասխանը կամ սխալը (կարելի է նաև օգտվել հաշվիչից. *հավելված 2, աշխատանքային էջ N2).*

11 + 21=78325<br>
53+36=198998<br>
2022-11=12011<br>
100+13=13113<br>
1000-11=9989

</td>
</tr>
<tr>
<td>ՖՄԴ ՈՐԱԿԻՉ</td>
<td>

- Անձը տեսողական ազդակների ընկալման համար հազվադեպ, սակայն ունենում է առաջադրանքները լրացուցիչ կրկնություններով կամ լրացուցիչ գրավչությամբ (ձայնի, լույսի) զուգակցելու կարիք - 1 **թեթև դժվարություն**
- Անձը տեսողական ազդակների ընկալման համար մշտապես օժանդակող սարքերի, սարքավորումների, այլընտրանքային հաղորդակցման միջոցների և արտաքին ազդանշանների կարիք ունի - **2 միջին դժվարություն**
- Անձը տեսողական ազդակների ընկալման համար մշտապես լրացուցիչ ուղղորդման (ֆիզիկական, խոսքային) կարիք ունի: Դիտումը կարճատև է, արագ շեղվում է: Հաճախ նկ[illegible]

</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| | «հատվածային տեսողություն» (այսինքն՝ տեսնում է առարկայի որոշ մասեր՝ չընկալելով ամբողջական առարկան): Հայացքով հաղորդակցումը (աչք-աչք կոնտակտ) տևում է վայրկյաններ՝ մոտավորապես մինչև 5 վրկ - 3 ծանր դժվարություն<br>• Անձը չի կարողանում ընկալել մարդկանցից, ծանոթ և անծանոթ առարկաներից, ինչպես նաև իրադարձություններից եկող տեսողական ազդակները (բացարձակ կուրություն): Հայացքով հաղորդակցումը (աչք-աչք) կոնտակտը բացակայում է - 4 լիակատար դժվարություն: |
| ԱՂԲՅՈՒՐԸ | • *Методические рекомендации к психолого-педагогическому изучению детей (2-3 лет): ранняя диагностика умственного развития. //Альманах института коррекционной педагогики РАО. - М., 2001 № 4. https://pedlib.ru/Books/4/0011/4_0011-3.shtml#book_page_top.*<br>• *А. Р. Лурия Высшие корковые функции человека и их нарушения при локальных поражениях мозга. http://gatchina3000.ru/literatura/luria_a_r/luria-3_06b.htm*<br>• *Անավարտ նկարներ և «Փոփելռեյթերի մեթոդով իրար վրա պատկերված նկարներ» https://docs.google.com/document/d/13vy4NOIRI2wzfnEHkOaEpQxT-MIk62m/edit#, https://cyberleninka.ru/article/n/valter-poppelreyter-1886-1939-zhizn-i-nauchnoe-tvorchestvo*<br>• *Ռավենի պրոգրեսիվ մատրիցաներ. https://psycabi.net/testy/717-test-ravena-progressivnye-matritsy-raven-progressiv-matrices-metodiki-dlya-diagnostiki-intellekta-vzroslykh*<br>• *Պիերոն-Ռուզերի թեստ*<br>• *Ա.Գ. Զաքրամանյանի և Օ.Վ. Բորովիկի երեխաների հոգեբանամանկավարժական հետազոտության մեթոդիկաներ*<br>• *Ե.Ա.Ստրեբելևայի «Մտավոր զարգացման վաղ ախտորոշման մեթոդիկա» (հարմարեցված տարբերակ)*<br>• *Ի.Մ. Տոնկոնոգի և Ի.Ռ. Ցուկերմանի «Տեսողական ագնոզիա», Փոփելռեյթերի իրար վրա պատկերված նկարների մեթոդ* |
| **d 115**<br>**Լսելը** | *Լսողական զգայարանի միջոցով խոսքային ազդակների գիտակցված ընկալում, օրինակ՝ մարդու ձայնը լսելը (դասախոսություն, պատմվածք, զրույց), ռադիո, երաժշտություն ունկնդրելը:* |
| **Հուշող հարցեր** | • *Ինչպե՞ս է անձը/ երեխան արձագանքում լսված ձայներին:*<br>• *Ասեք՝ մեկից է անձը/երեխան դժվարանում ընկալել լսածը, և ինչից եք հասկանում, որ դժվարանում է այդ հարցում:*<br>• *Կայուն է արդյո՞ք անձի/երեխայի լսողական ընկալումը:*<br>• *Կենցաղում ինչպե՞ս է անձը/երեխան գործում՝ բացի խոսքային հրահանգի. ձայնին, մեղեդուն, թե բովանդակին չի կողմնորոշվում:*<br>• *Ունեցե՞լ է արդյոք անձը լսողական սուր կորստի փորձ, և ինչպե՞ս է դա ազդել նրան:*<br>• *Արդյո՞ք անձը/երեխան ոչ խոսքային ձայներին ավելի լավ է հակազդում:* |

| | |
|---|---|
| | • *Արդյո՞ք շշուկով խոսքն ավելի ընկալելի է նրա համար:*<br>• *Արդյո՞ք բարձր ձայներն ավելի վատ է լսում, քան ցածրերը:*<br>• *Բախվում եք արդյո՞ք այնպիսի իրավիճակների, երբ թվում է, թե երեխան խոսքին չի արձագանքում՝ կարծես չի լսում, սակայն զարմանալիորեն լավ է արձագանքում ցածր խոսքին կամ անձայն ձայները խանգարում են նրան:*<br><br>*Հարցեր ծնողին.*<br>• *Մեծը/երեխան հեռախոսով ճանաչում է արդյո՞ք հարազատների ձայները:*<br>• *Մեծը/երեխան ընկալում է արդյո՞ք կանչը հեռվից առօրյա խոսակցությունների ժամանակ:* |
| **Թեստ/ Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br><br>**Առաջադրանք** 1. Անաղմուկ, ձայնային այլ ծանրաբեռնվածություն չունեցող միջավայրում՝ 6-12 մետր հեռավորությունից հնչեցնել դռան թակոց, զանգակ, ծափեր, թմբուկ, շվի, դոփյուններ և այլն և առաջարկել որ երեխան ասի թե ի՞նչ ձայն է լսել կամ նմանակի. Կրկնել լսածը (բարձր, միջին, ցածր հաճախականություն ունեցող ձայների): Խոսքով պատասխանել չկարողանալու դեպքում թույլատրել, որ ցույց տա ժեստով, նկարով կամ իրականում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան նկարներ և մանկական նվագարաններ: Խաղի տարբերակ կարող է հանդիսանալ կենդանիների, տրանսպորտային միջոցների, կենցաղային տեխնիկայի ձայների ձայնագրություններով նրանց ճանաչելը, «Խոսող պլանշետների» կիրառումը *(պարագաներ «նվագարաններ, զանգակ, ձայնագրիչ», Հավելված 1, սլայդային նյութ N8).*<br><br>**Առաջադրանք 2.** Անաղմուկ, ձայնային այլ ծանրաբեռնվածություն չունեցող միջավայրում՝ 6-12 մետր հեռավորությունից կարդալ մանկական «խոսերգ». Օրինակ՝ «Կլորիկ թմբլիկ, պոչը կլորիկ, քթիկը պստլիկ, ո՞վ կա ինձ պես սիրունիկ...չկա՜, չկա՜, չկա՜» (ժող.). այնուհետև հարցնել «Ինչի՞ մասին էր խոսում»: Երեխան պետք է պատասխանի խոսքով. խոսքով չկարողանալու դեպքում՝ տրամադրել 4-5 նկար, որոնցից մեկը համապատասխանում է ասվածի թեմային և առաջարկել, որ երեխան ցույց տա այն նկարը, որը համապատասխանում էր հնչած «խոսերգին» կամ ոտանավորին: Հաշվի առնել՝ արդյո՞ք երեխան օգտվեց պատկերային հուշումից: Արձանագրել այդ փաստը և գնահատելիս հաշվի առնել: Նախապես ունենալ պատասխանին համապատասխան նկար՝ բոցնիկ *(Հավելված I, սլայդային նյութ N9):*<br><br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br><br>**Առաջադրանք 1.** Անաղմուկ, ձայնային այլ ծանրաբեռնվածություն |

չունեցող միջավայրում 6-12 մետր հեռավորությունից հնչեցնել դռան թակոց, զանգակ, ծափեր, թմբուկ, շվի, դուդուկներ և այլն և առաջարկել որ երեխան ասի թե ի՞նչ ձայն է լսել կամ նմանակի, կրկնի լսածը (բարձր, միջին, ցածր հաճախականություն ունեցող ձայներ): Խոսքով պատասխանել չկարողանալու դեպքում թույլատրել, որ ցույց տա ժեստով, նկարով կամ իրականում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան նկարներ և մանկական նվագարաններ: Խաղի տարբերակ կարող է հանդիսանալ կենդանիների, տրանսպորտային միջոցների, կենցաղային տեխնիկայի ձայների ձայնագրություններով դրանց ճանաչելը, «Խոսող պլանշետների» կիրառումը *(պարագաներ «նվագարաններ, զանգակ, ձայնագրիչ», հավելված 1, արիմոլայի կոյթ N8)*:

**Առաջադրանք 2.** Անհրաժեշտ հեռավորությունից տալ որոշակի հրահանգներ, հնչեցնել պատմվածքների ձայնագրություններ կամ կենդանի խոսքով ընթերցանություն *(Պարագաներ «Ռադիո, հեռահաղորդակցման միջոցներ»)*:

**ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ**

*Հուշում.* Գործողությունները իրականացնել անաղմուկ, ձայնային այլ ձայնաբեռնվածություն չունեցող միջավայրում 6-12 մետր հեռավորությունից:

*Ուշադրություն դարձնել, թե.*

- ինչպե՞ս է երեխան արձագանքում լսած ձայներին, քանի՞ մետրից է երեխան դժվարանում ընկալել լսածը, և ինչից եք հասկանում, որ դժվարանում է այդ հարցում:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 15-18 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**

**Առաջադրանք 1.** Անհրաժեշտ հեռավորությունից տալ որոշակի հրահանգներ, հնչեցնել պատմվածքների ձայնագրություններ կամ կենդանի խոսքով ընթերցանություն *(Պարագաներ «Ռադիո, հեռահաղորդակցման միջոցներ»)*:

**ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ**

*Հուշում.* Գործողությունները իրականացնել անաղմուկ, ձայնային այլ ձայնաբեռնվածություն չունեցող միջավայրում 6-12 մետր հեռավորությունից:

*Ուշադրություն դարձնել, թե.*

- ինչպե՞ս է անձը արձագանքում լսած ձայներին, քանի՞ մետրից է երեխան դժվարանում ընկալել լսածը. և ինչից եք հասկանում, որ դժվարանում է այդ հարցում:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 18-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**

**Առաջադրանք 1.** Անհրաժեշտ հեռավորությունից տալ որոշակի

| | |
|---|---|
| | հրահանգներ, հնչեցնել պատմվածքների ձայնագրություններ կամ կենդանի խոսքով ընթերցանություն *(Պարագաներ «Խաղեր, հեռահաղորդակցման միջոցներ»):*<br>**ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ**<br>*Հուշում.* Գործողությունները իրականացնել անաղմուկ, ձայնային այլ ծանրաբեռնվածություն չունեցող միջավայրում 6-12 մետր հեռավորությունից:<br>*Ուշադրություն դարձնել, թե.*<br>• ինչպե՞ս է անձը արձագանքում լսված ձայներին, քանի՞ մետրից է երեխան դժվարանում ընկալել լսածը, և ինչից եք հասկանում, որ դժվարանում է այդ հարցում:<br><br>**Կիրառելի են d310 ծածկագրի առաջադրանքները:** |
| ՖՄԴ ՈՐԱԿԻՉ | • Անձը արտաքին աշխարհից փոխանցվող խոսքային ազդակները, ինչպես օրինակ՝ մարդու ձայնը, երաժշտությունը, ռադիոն, կարողանում է ընկալել անաղմուկ, ձայնային այլ ծանրաբեռնվածություն չունեցող միջավայրում 6-12 մետր հեռավորությունից – **1 թեթև դժվարություն**<br>• Անձը արտաքին աշխարհից փոխանցվող խոսքային ազդակները, ինչպես օրինակ՝ մարդու ձայնը, երաժշտությունը, ռադիոն, կարողանում է ընկալել լուռ միջավայրում 4-5 մետր հեռավորության վրա: Ձայնի աղբյուրը որոշելու, և այն տեղորոշելու համար անձը ունի օժանդակող սարքերի և սարքավորումների կարիք (օրինակ՝ հեռուստացույց դիտելու համար նախատեսված ձայնը բարձրացնող ականջակալներ, լսողական սարքավորումներ և այլն - **2 միջին դժվարություն**<br>• Անձը կարողանում է ընկալել արտաքին աշխարհից եկող իրեն ծանոթ խոսքային ազդակները (ինչպես օրինակ՝ մարդու ձայնը, երաժշտությունը, ռադիոն) 2-4 մետր հեռավորությունից՝ բացարձակ լռության պայմաններում: Ձայնի աղբյուրը որոշելու և այն տեղորոշելու համար անձը օժանդակող սարքերի և սարքավորումների, ինչպես նաև այլ անձի մշտական բառային խոսքի և ֆիզիկական օժանդակության (ուղղորդման) կարիք ունի: Կարող է խոսքը ընկալել որպես աղմուկ (զգայական ալալիա) – 3 **ծանր դժվարություն**<br>• Անձը չի կարողանում լսել, ընկալել, վերլուծել մարդկանցից, սարքերից, իրադարձություններից եկող խոսքային ազդակները (բացարձակ խլություն) - **4 լիակատար դժվարություն** |
| ԱՂԲՅՈՒՐԸ | • *Катаева А.А., Стребелева Е.А. Дидактические игры и упражнения в обучении умственно отсталых дошкольников: Кн. для учителя. — М.: «БУК-МАСТЕР», 1993. – 191 с.*<br>• *Методические рекомендации к психолого-педагогическому* |

| | |
|---|---|
| | *изучению детей (2-3 лет): ранняя диагностика умственного развития. // Альманах института коррекционной педагогики РАО - М., 2001.*<br>▪ *Իմ մանկության բանաստեղծությունները. Գիրք երկրորդ: Կազմող՝ Վահագն Աբրահամյան, Երևան «Հաշ ըմ հաշ պրինտ», ՍՊԸ, 2015, էջ՝ 8* |
| **Վ 130. Ընդօրինակելը** | *Նմանակելը կամ դիմախաղը՝ որպես սովորելու հիմնական բաղադրիչ, ինչպես օրինակ՝ ընդօրինակելը, դեմքի արտահայտությունը, ժեստը, ձայնը կամ արտաքին պատկերը կրկնօրինակելը՝ ներառյալ գործողության կամ վարքագծի անմիջապես նմանակելը:* |
| **Հուշող հարցեր** | *Այս ծածկագիրը գնահատելու համար հարցեր տալու անհրաժեշտություն չկա, անձի հետ առաջադրանքների կատարումը լիովին բավարար է այն գնահատելու համար և հասկանալու, թե արդյո՞ք անձը կարող է առարկաների հետ գործողություններ կատարելու միջոցով սովորել:* |
| **Թեստ/ Առաջադրանք** | **<u>ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ</u>**<br>**Առաջադրանք** 1. Կառուցի՛ր իմ նման (3-6 տարեկանների համար) Խնդրել, որպեսզի երեխան նույնությամբ՝ փայտիկներով, լուցկու տուփերով, պլաստիլինով և թելերով կառուցի քառակուսի, եռանկյուն, շրջան և ուղղանկյուն՝ հաշվի առնելով օգտագործված գույների ճիշտ հաջորդականությունը: Շրջանը ստանալ թելով կամ պլաստիլինով: Տարիքի տարբերակ կարող է հանդիսանալ պարզագույն նախշերի կառուցումը *(պարագաներ՝ «Կարմիր, կապույտ, դեղին, կանաչ հաշվեձողիկներ», հավելված I, սթիմուլյացիոն նյութ N10):*<br>**Առաջադրանք 2.**<br>Ինչ պետք է լինի հաջորդը:<br><br>**Առաջադրանք 3.**<br>Մնջախաղ<br>• **Ցույց տալ, թե** ինչպե՞ս են գրում, լողում, դահուկ քշում, «կրակում», շնիկին կամ փիսիկին մոտ կանչում, թաշկինակով սրբում քիթը, աղմուկից պաշտպանվելու համար փակում ականջները (տես՝ «Մատների լեզու»):<br>• **Ցույց տալ, թե** ինչպես են ողջունում՝ հեռվից, զինվորականները, օդային համբույրով, ձեռքսեղմումով:<br>• **Բաց թողնված բառերը ցույց տալ ժեստով.**<br>  ◦ Երբ մարդիկ հանդիպում են, նախ և առաջ միմյանց ձեռք են սեղմում և…………………… …..(ժեստը)<br>  ◦ Շնիկը ցրտից……………………………………<br>  ◦ Երբ շոգում ենք հովհարով……………<br>  ◦ Երբ մարդիկ լավ տրամադրություն ունեն, և … երաժշտություն են լսում, ձեռքերը բարձրացնում են … |

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

**Առաջադրանք 1.** Կառուցի՛ր իմ նման (6-7 տարեկանների համար) խնդրել, որպեսզի երեխան նույնությամբ՝ փայտիկներով, լուցկու չոփերով, պլաստիլինով և թելերով կառուցի քառակուսի, եռանկյուն, շրջան և ուղղանկյուն՝ հաշվի առնելով օգտագործված գույների ճիշտ հաջորդականությունը: Շրջանը ստանալ թելով կամ պլաստիլինով: Ավագի տարիքում կարող է հանդիսանալ պարզագույն նախշերի կառուցումը *(պարագաներ՝ «Կարմիր, կապույտ, դեղին, կանաչ հաշվեձողիկներ», հավելված 1, ցուցադրական նյութ N10):*

**Առաջադրանք 1. Ծոռ Հայեի**

Հրահանգ. Կատարի՛ր հակառակը

Ցույց տալ ժեստը և պահանջել, որ հետազոտվողը կրկնի դրա հակառակը *(ծանրաշարժական, լսողական խնդիրների դեպքում հրահանգը կրկնել խոսքով).*

- գլխի շարժումով ցույց տալ այո, ակնկալել՝ ոչ
- բութով ցույց տալ «լավ է», ակնկալել՝ «վատ է»
- գրել տպագիր «Ն»՝ ակնկալել «Դ» *(հավելված 2, աշխատանքային նյութ N3)*
- գրել տպագիր «Ա»՝ ակնկալել «Ռ»
- ասել «գիտեմ», ակնկալել «չգիտեմ»:

**Առաջադրանք 2.** Կատարել պարային շարժում (օրինակ՝ երկու քայլ աջ՝ կանգ, երկու քայլ ձախ կանգ) կամ ֆիզիկական վարժությունների հաջորդական շարք (ձռնկը ծալած վիճակում ձախ ոտքը բարձրացնել և դիպչել աջ ձեռքի ծալված արմունկին և՝ հակառակը) և պահանջել, որ անձը կրկնի *(առաջադրանքը չի կիրառվում ծանրաշարժական խնդիրների դեպքում):*

**Առաջադրանք 3.** Պահանջել, որ անձը նույնությամբ գրի կամ նկարի Ձեր կողմից գրված տառերը, թվերը կամ նախշերը *(հավելված 2, աշխատանքային նյութ N4):*

1) 1, 1, 2, 2, 4, 4, 8, 8, _, _, _, _
2) 2, 4, 6, 8, 10, _, _, _, _

*(Առաջադրանքը չի կիրառվում ծանրաշարժական, լսողական խնդիրների դեպքում).*

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 15-18 ՏԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

**Առաջադրանք 1. Ծոռ Հայեի**

Հրահանգ. Կատարի՛ր հակառակը

Ցույց տալ ժեստը և պահանջել, որ հետազոտվողը կրկնի դրա հակառակը *(ծանրաշարժական, լսողական խնդիրների դեպքում հրահանգը կրկնել խոսքով)*

- գլխի շարժումով ցույց տալ այո, ակնկալել՝ ոչ

- բութով ցույց տալ «լավ է», ակնկալել՝ «վատ է»
- գրել տպագիր «Ն»՝ ակնկալել «Ղ» *(հավելված 2, աշխատանքային նյութ N3)*
- գրել տպագիր «Ա»՝ ակնկալել «Ո»
- ասել «գիտեմ», ակնկալել «չգիտեմ»:

**Առաջադրանք 2.** Կատարել պարային շարժում (օրինակ՝ երկու քայլ աջ՝ կանգ, երկու քայլ ձախ կանգ) կամ ֆիզիկական վարժությունների հաջորդական շարք (ծունկը ծալած վիճակում ձախ ոտքը բարձրացնել և դիպչել աջ ձեռքի ծալված արմունկին և՝ հակառակը) և պահանջել, որ անձը կրկնի *(առաջադրանքը չի կիրառվում ծանրաշարժական խնդիրների դեպքում)*:

**Առաջադրանք 3.** Պահանջել, որ անձը նույնությամբ գրի կամ նկարի Ձեր կողմից գրված տառերը, թվերը կամ նախշերը *(հավելված 2, աշխատանքային նյութ N4)*.

ա) 1, 1, 2, 2, 3, 3, 4, 4, _, _, _, _

բ) 1, 1, 2, 2, 4, 4, 8, 8, _, _, _, _

*(Առաջադրանքը չի կիրառվում ծանրաշարժական, տեսողական խնդիրների դեպքում)*:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 18-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

**Առաջադրանք 1. Ծուռ Հայելի**

Հրահանգ. Կատարի՛ր հակառակը

Ցույց տալ ժեստը և պահանջել, որ հետազոտվողը կրկնի դրա հակառակը *(ծանրաշարժական, տեսողական խնդիրների դեպքում հրահանգը տալ խոսքով)*.

- գլխի շարժումով ցույց տալ այո, ակնկալել՝ ոչ
- բութով ցույց տալ «լավ է», ակնկալել՝ «վատ է»
- գրել տպագիր «Ն»՝ ակնկալել «Ղ» *(հավելված 2, աշխատանքային նյութ N3)*
- գրել տպագիր «Ա»՝ ակնկալել «Ո»
- ասել «գիտեմ», ակնկալել «չգիտեմ»:

**Առաջադրանք 2.** Կատարել հարվածներ սեղանին՝ որոշ հաջորդականությամբ (I-II-I, I-II-II-I, II-II-II-I) և պահանջել, որ անձը կրկնի *(առաջադրանքը չի կիրառվում ծանրաշարժական խնդիրների դեպքում)*:

**Առաջադրանք 3.** Պահանջել, որ անձը նույնությամբ գրի կամ նկարի Ձեր կողմից գրված տառերը, թվերը կամ նախշերը *(հավելված 2, աշխատանքային նյութ N4)*:

| | |
|---|---|
| | ա) 2, 3, 5, 8, 12, _, _, _, _<br>բ) 1, 4, 3, 6, 5, 8, _, _<br>*(Առաջադրանքը չի կիրառվում ծանրաշարժական, տեսողական խնդիրների դեպքում):* |
| **ՖՄԴ ՈՐԱԿԻՉ** | • Անձը դեմքի արտահայտությունը, ժեստը, ձայնը, այբուբենի տառերը, հնչյունները, սիմվոլները, պարզ և բարդ համակցված գործողությունը և վարքագիծը ընդօրինակում է 2 անգամ ցուցադրելուց և կրկնելուց հետո- 1 **թեթև դժվարություն**<br>• Անձը դեմքի արտահայտությունը, ժեստը, ձայնը, այբուբենի տառերը, հնչյունները, սիմվոլները, պարզ համակցված գործողությունները և մեկ-երկու գործողությունից կազմված վարքագիծը կրկնօրինակում է անճշտություններով՝ մանրամասներին (դետալներին) ուշադրություն չդարձնելով, և/կամ դժվարանում է ընդօրինակել գործողությունը՝ սկսել, շարունակել և ավարտել այն՝ ելնելով ֆիզիկական, մտավոր զարգացման առանձնահատկություններից /օրինակ՝ մկանային բարձր լարվածություն կամ թուլություն, դիրքի պահպանման անկարողություն, ուշադրության կենտրոնացման և պահպանման դժվարություն և այլն/: Ունի օժանդակ սարքերի և սարքավորումների, այլընտրանքային հաղորդակցման միջոցների, դիրքավորման, ինչպես դասասեղան/բազկաթոռը ֆիքսելու, գրելու/նկարելու համար նախատեսված հատուկ հարմարանքներ - **2 միջին դժվարություն**<br>• Անձը դեմքի արտահայտությունը, ժեստը, ձայնը կամ այբուբենի տառերը, հնչյունները, սիմվոլները, պարզ գործողությունները և մեկ գործողությունից կազմված պարզ վարքագիծը դժվարությամբ է ընդօրինակում՝ բազմակի կրկնություններից հետո կամ սկսում է ընդօրինակել պարզ գործողությունը, սակայն այն իր ավարտին չի հասցնում: Ընդօրինակումը, որպես կանոն, լինում է էական անճշտություններով և աղավաղումներով՝ մշտական խոսքային (վերբալ) և ոչ խոսքային (ոչ վերբալ), ֆիզիկական ուղղորդմամբ: Միաժամանակ ունի օժանդակ սարքերի և սարքավորումներ կարիք /տեսողական, այլընտրանքային հաղորդակցման միջոցների, դիրքավորման, ինչպես նաև դասասեղան/բազկաթոռը ֆիքսելու, գրելու/նկարելու համար նախատեսված հատուկ հարմարանքներ/ **- 3 ծանր դժվարություն**<br>• **Անձը բոլորովին անկարող է ընդօրինակել և կրկնօրինակել կամ դրանք սոսկ մեխանիկական բնույթ են կրում, ունի էխոպրաքսիա կամ էխոլալիա- 4 լիակատար դժվարություն** |
| **ԱՂԲՅՈՒՐԸ** | • *Մ.Գ. Զաքարյանյանի և Օ.Կ. Բորոսինի երեխաների հոգեբանամանկավարժական հետազոտության մեթոդիկա* |

| | |
|---|---|
| | *գործիքը՝ Ս.Դ. Զաբրամնայայի և Օ.Վ. Բորովիկի «Երեխաների հոգեբանամանկավարժական հետազոտության գործնական նյութերի ալբոմ»:*<br>• *Ե.Ա.Ստրեբելևայի «Մտավոր զարգացման վաղ ախտորոշման մեթոդիկա» (համառոտված տարբերակ)* |
| **d 131. Առարկաների հետ գործողություններ կատարելու միջոցով սովորելը** | *Մեկ, երկու կամ երկուսից ավելի առարկաներով պարզ գործողությունների, խորհրդանիշային խաղերի և սյուժետադերային խաղի միջոցով սովորելը, ինչպես օրինակ՝ առարկային խփելը, խորանարդիկները քանդելը և տիկնիկներով կամ մեքենաներով խաղալը:* |
| **Հուշող հարցեր** | *Այս ծածկագիրը գնահատելու համար հարցեր կազմելու անհրաժեշտություն չկա, անձի հետ առաջադրանքների կատարումը զննումը բավարար է այն գնահատելու համար և հասկանալու, թե արդյո՞ք անձը կարող է առարկաների հետ գործողություններ կատարելու միջոցով սովորել:* |
| **Թեստ/ Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1.** Սեղանին դնել բռնակավոր մեքենա և 4-5 հիմնական գույներ ունեցող 10-15 խորանարդիկ. դիտել, ինչ է անում երեխան *(Պարագաներ «Բռնակավոր մեքենա, 10-15 խորանարդիկ»):*<br>**Առաջադրանք 2.** Դիտել ինչպես է աշխատում Սեգենի տախտակով *(Պարագաներ «Սեգենի տախտակ»):*<br>**Առաջադրանք 3.** Քանդել-հավաքել 5-10 օղակից բաղկացած բուրգ *(Պարագաներ «Բուրգ՝ 5-10 օղակով»):*<br><br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br>**Տես՝ d175 ծածկագիրը և համապատասխան ծածկագրի որակիչներից:**<br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 15-18 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br>**Տես՝ d175 ծածկագիրը և համապատասխան ծածկագրի որակիչներից:**<br><br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 18-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br>**Տես՝ նաև ծածկագիրը և համապատասխան ծածկագրի որակիչներից:** |
| **ԲԱՆԱԼԻ-ԲՆՈՐՈՇԱԳՐԻՉՆԵՐ** | • Անձը մեկ, երկու կամ երկուսից ավելի տարբեր նշանակություն և գործողություններ պահանջող առարկաներով կարողանում կատարել պարզ գործողություններ, սովորում է խոսքային (վերբալ) ուղղորդման արդյունքում՝ սիմվոլիկ խաղերի և սյուժետադերային խաղի միջոցով: Խաղերի միջոցով սովորելու ընթացքում ունի հրահանգների, հավելյալ ցուցադրության կարիք. |

| | |
|---|---|
| | - 1 թեթև դժվարություն<br>• Անձը մեկ, երկու միևնույն նշանակություն ունեցող առարկաներով պարզ գործողություններ կատարում է. մեկից ավել տարբեր նշանակության և գործողություններ պահանջող առարկաների առկայության դեպքում, ինչպես նաև սիմվոլիկ խաղերի և սյուժետադերային խաղի միջոցով սովորելու ընթացքում ունենում է դժվարություններ՝ ելնելով ֆիզիկական, մտավոր զարգացման առանձնահատկություններից (օրինակ՝ մկանային բարձր լարվածություն կամ թուլություն, դիրքի պահպանման անկարողություն, ընկալման, ուշադրության կենտրոնացման կամ պահպանման դժվարություն և այլն): Ունի օժանդակ սարքերի և սարքավորումների կարիք /տեսողության և լսողության համար նախատեսված սարքեր. այլընտրանքային հաղորդակցման միջոցներ, դիրքավորման, ինչպես դասատակը (բազկակը ֆիքսելու, առարկաները բռնելու համար նախատեսված հատուկ հարմարանքներ) - **2 միջին դժվարություն**<br>• Անձը դժվարանում է մեկ կամ երկու միևնույն նշանակության առարկաներով պարզ գործողություններ կատարել, ինչպես նաև խորհրդանիշային կամ սյուժետադերային խաղի միջոցով սովորելու ընթացքում մշտապես ունի այլ անձի խոսքային (վերբալ), ֆիզիկական ուղղորդման, ցուցադրության, ինչպես նաև օժանդակ սարքերի և սարքավորումների կարիք - **3 ծանր դժվարություն**<br>• Անձը չի կարողանում որևէ առարկայական գործողություն կատարել - **4 լիակատար դժվարություն** |
| **ԱՂԲՅՈՒՐԸ՝** | • *Մ.Ա. Կարապետյանի և Ե. Ա. Մկրտչյանի, Դիդակտիկ խաղերի և վարժությունների մեթոդ.*<br>• *Ռ.Ա Նեմովի Հոգեախտորոշիչ մեթոդիկաներ* |
| **d 132 Լեզու սովորելը** | *Անձանց, առարկաները, իրադարձությունները և զգացմունքները բառերի, խորհրդանիշների, բառակապակցությունների և նախադասությունների միջոցով ներկայացնելու հմտությունը զարգացնելը* |
| **Հուշող հարցեր** | *Գնահատվողին տրվող հարցեր*<br>• *Հե՞շտ եք նոր բառերը հիշում:*<br>• *Ինչպիսի՞ հնարքներ եք կիրառում նոր բառը մտապահելու և տեղին գործածելու համար:*<br>• *Ի՞նչ եք կարծում՝ ինչը՞ կհեշտացնի նոր բառերը, արտահայտությունները յուրացնելու գործընթացը:*<br>• *Ըստ Ձեզ՝ անձանց, առարկաները, իրադարձությունները և զգացմունքները բառերի, խորհրդանիշների, բառակապակցությունների և նախադասությունների միջոցով ներկայացնելու հմտությունը զարգացնելը հա[illegible] որևէ* |

| | |
|---|---|
| | *աջակցող միջոցի. լրացուցիչ մեթոդի կամ հնարքի կիրառության կարիք:* |
| **Թեստ/ Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br><br>**Առաջադրանք 1.**<br>Ցույց տուր սեղանը:<br>Ցույց տուր գնդակը:<br>Ցույց տուր տիկնիկը:<br>Ցույց տուր մեքենան:<br>Ցույց տուր լույսը:<br><br>**Առաջադրանք 2.**<br>Ի՞նչ է սա (աթոռ):<br>Ի՞նչ է սա (շուն):<br>Ի՞նչ է սա (խնձոր):<br>Ի՞նչ է սա (գնդակ):<br>Ի՞նչ է սա (հեռախոս):<br><br>**Առաջադրանք 3.**<br>Ինչի՞ց է պատրաստված աթոռը:<br>Ինչից է պատրաստված հացը:<br>Ինչից է պատրաստված ձվածեղը:<br>*6-ից բարձր տարիքային խմբի անձանց գնահատելու համար օգտվել հուշող հարցերից: Այն դեպքում, երբ անձի առողջական խնդիրներով պայմանավորված՝ առկա է խոսքի բացակայություն հուշող հարցերը տալ խնամք իրականացնող անձին:* |
| **ՖՄԴ ՈՐԱԿԻՉ** | • Անձը յուրացնում է բառերով, բառակապակցություններով անձանց, առարկաները իրադարձությունները և զգացմունքները ներկայացնելու հմտությունները, սակայն նախադասություններ յուրացնելիս կարիք ունի հուշումների, օժանդակող մեթոդների և միջոցների - **1 թեթև դժվարություն**<br>• Անձը բազմակի կրկնությունների և հեշտացված մեթոդներով կիրառելու արդյունքում յուրացնում է բառերով, անձանց և առարկաները ներկայացնելու հմտությունները - **2 միջին դժվարություն**<br>• Անձը բազմակի կրկնությունների և տարբեր լրացուցիչ խթանիչ նյութերի, մեթոդների հնարքների միջոցով յուրացնում է միայն առօրյայում շատ գործածվող բառերը, որոնք բնորոշում են իր հետ հաճախ առնչվող անձանց և առարկաները - **3 ծանր դժվարություն**<br>• Անձը չի կարողանում յուրացնել բառեր, բառակապակցություններ և նախադասություններ գործածելու հմտություն - **4 [illegible]** |

| | |
|---|---|
| | դժվարություն |
| ԱՂԲՅՈՒՐԸ | • *Williams, K. T. (2019). Expressive Vocabulary Test (3rd ed.) [Measurement instrument]. Bloomington, MN: NCS Pearson.* |
| d135 Կրկնելու միջոցով սովորելը | *Իրադարձությունների կամ խորհրդանիշների հաջորդականությունը կրկնելը որպես սովորելու հիմնական բաղադրիչ, ինչպես, օրինակ՝ տասնյակներով հաշվելը կամ ժապավենի կամ երաժշտական գործիքի լարերի միջոցով ոտանավոր արտասանելու մեջ վարժվելը* |
| Հուշող հարցեր | *Այս ծանկագիրը գնահատելու համար հարցեր տալու անհրաժեշտություն չկա. անձի հետ զրույցն ու առաջադրանքների կատարումը լիովին բավարար է այն գնահատելու համար և հասկանալու, թե արդյո՞ք անձը կարող է կրկնելու միջոցով սովորել:* |
| Թեստ/ Առաջադրանք | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք** 1. Մուրճով հարվածելու միջոցով 4 գունավոր գնդիկները գցել համապատասխան անցքով տուփի մեջ: Երեխային հետազոտողը ցույց է տալիս, թե ինչպես է մուրճով հարվածելու միջոցով գնդիկները գցում անցքի մեջ, այնուհետև խնդրում՝ կրկնել գործողությունը *(Պարագաներ «Երկրաչափական անցքերով և մուրճով արկղիկ»):*<br><br>**Առաջադրանք 2.** Հետազոտողը երեխային ասում է փոքրիկ քառատող, որը մի քանի կրկնությունից հետո երեխան պետք է մտապահի և վերարտադրի:<br>**Ձիու, ձիու**<br>**Կարմիր ձիու**<br>**Կարմիր քթին**<br>**Կար մի ծիտ**<br>**Առաջադրանք** 3. Հետազոտվողին խնդրում ենք հաշվել տրված սկզբունքին համապատասխան: Խնդրում ենք հետազոտողի ետևից կրկնել հաշիվը՝ 1-ից մինչև 5, 10-ը:<br><br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1.** Հետազոտողը մի քանի անգամ կարդում է փոքրիկ բանաստեղծություն, որը երեխան պետք է մտապահի և վերարտադրի *(հավելված I, 6-10տ.՝ աղյուսակային նյութ N11, 10-14տ.՝ աղյուսակային նյութ N12 ):*<br>**Առաջադրանք** 2. Հետազոտվողին խնդրում ենք հաշվել տրված սկզբունքին համապատասխան: Օրինակ՝ խնդրում ենք հաշվել տասնյակներով, հետհաշիվ՝ 10-ից 1-ը (7-ից 10 տարիքային խումբ): Հաշվիր զույգերով, տասնյակներով (10-ից 14 տարիքային խումբ):<br><br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 14-18 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1.** Հետազոտողը մի քանի անգամ կարդում է որևէ բանաստեղծությունից հատված (Օրինակ՝ 1-2- տուն) Ե. Չարենցի «Ես |

| | |
|---|---|
| | իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունից), որը անձը պետք է մտապահի և վերարտադրի*(հավելված I, օգնողական նյութ N12):*<br><br>**Առաջադրանք 2.** Հետազոտվողին խնդրում ենք հաշվել՝ ըստ պահանջվող սկզբունքի: Խնդրում ենք հաշվել զույգերով, եռյակներով: 18 տարեկանից բարձր անձանցից պահանջվում է հաշվել **եռյակներով, հնգյակներով:**<br><br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 18-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br><br>**Առաջադրանք 1.** Հետազոտողը մի քանի անգամ կարդում է որևէ բանաստեղծությունից հատված (Օրինակ՝ 1-2- տուն) Ե.Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունից), որը անձը պետք է մտապահի և վերարտադրի *(հավելված I, օգնողական նյութ N12):*<br><br>**Առաջադրանք 2.** Հետազոտվողին խնդրում ենք հաշվել՝ ըստ պահանջվող սկզբունքի: Խնդրում ենք հաշվել **եռյակներով, քառյակներով, հնգյակներով:**<br>Կարելի է օգտվել նաև d131 ծածկագրի որակիչներից |
| **ԾԱՆՐ ՈՐԱԿԻՉ** | • Անձը սովորում է հաշվել տասնյակներով, անգիր անել բառերի և բառակապակցությունների միջոցով կազմված տեքստը. գործողություններ կատարել, սակայն երբեմն ի հայտ են գալիս բառերի, գործողությունների փոփոխությունների/կամ վերջիններիս իմաստային անհամաձայնություններ: Գործողություններ, բանավոր խոսքում՝ բառեր, բառակապակցություններ անգիր անելու, հաշվելու տարրական հմտությունների ամրապնդման համար անհրաժեշտ է սովորելու գործընթացի հավելյալ կրկնություն և/կամ մի քանի մեթոդի կամ միջոցի կիրառում - **1 թեթև դժվարություն**<br>• Անձը կարողանում է անգիր անել և հիշել 2-3 բառակապակցություն կամ պարզ նախադասություն, սակայն օգնող և աջակցող սարքերի-սարքավորումների, այլընտրանքային հաղորդակցման միջոցների, հատուկ մեթոդների, ինչպես նաև դասավանդման նորագույն տեխնոլոգիաների կիրառման կարիք ունի - **2 միջին դժվարություն**<br>• Անձը կարողանում է սովորել և անգիր անել բառերի, թվերի հաջորդականությունը, սակայն այս գործընթացը տևական է և մշտապես օգնող և աջակցող սարքերի, սարքավորումների այլընտրանքային հաղորդակցման միջոցների, հատուկ մեթոդների, դասավանդման նորագույն տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև այլ անձի կողմից մշտական ուղղորդման և վերահսկման պահանջ է ներկայացնում - **3 ծանր դժվարություն**<br>• Անձը կրկնելու միջոցով չի սովորում - **4 լիակատար դժվարություն** |

| | |
|---|---|
| **ԱՂԲՅՈՒՐԸ** | • *Իմ մանկության բանաստեղծությունները. Գիրք առաջին, կազմող՝ Վահագն Արղահանյան: Երևան, «ՀԱՅ ԸՆԴ ՀԱՅ ՊՐԻՆՏ», 2015. էջ՝ 63*<br>• *Իմ մանկության բանաստեղծությունները. Գիրք երկրորդ, կազմող՝Վահագն Արղահանյան: Երևան, «ՀԱՅ ԸՆԴ ՀԱՅ ՊՐԻՆՏ», 2015. էջ՝ 61*<br>• *Մարմնի լեզուն / Ժ.Հ. Պալոզյան, Լ.Հ. Սարաֆիկյան, Ա.Վ. Ավագյան. Եր.- ՎՄՎ-ՊՐԻՆՏ հրատ.2016,-60 էջ:*<br>• *Забрамная С. Д. Психолого-педагогическая диагностика умст-венного развития детей: Учеб. для студентов дефектол. фак. педвузов и ун-тов. — 2-е изд., перераб. — М.: Просвещение: Владос, 1995.— 112 с.— ISBN 5-09-004905-X.* |
| **d 137. Հասկացությունների սովորելը** | *Իրերի, անձանց կամ իրադարձությունների առանձնահատկություններին առնչվող հիմնական կամ բարդ հասկացություններ ըմբռնելու և գործածելու ունակությունը զարգացնելը:* |
| **Հուշող հարցեր** | *Այս ծածկագիրը գնահատելու համար հարցեր պարզելու անհրաժեշտություն չկա, անձի հետ զրույցն ու առաջադրանքների կատարումը լիովին բավարար է այն գնահատելու համար և հասկանալու, թե արդյո՞ք անձը կարող է հասկացություններ սովորել:* |
| **Թեստ/ Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1** Գտնել ավելորդը<br>Հետազոտվողին տրվում են քարտեր, որոնց վրա պատկերված է 4 առարկա. երեխան պետք է գտնի ավելորդ առարկայի պատկերը: Քարտերի վրա կարող են պատկերված լինել 3 միրգ և մեկ կենդանի, 3 ծաղիկ և մեկ խաղալիք, 3 կենդանի և մեկ կահույք, 3 միրգ և մեկ թռչուն *(հավելված I, ստիմուլային նյութ N13):*<br>*Առաջադրանքը կիրառելի չէ տեսողության խնդիրների դեպքում:*<br>**Առաջադրանք 2.** Խմբավորել առարկաները՝ ըստ հասկացությունների<br>Հետազոտվողին տրվում են տարբեր թեմատիկ խմբերի պատկանող պատկերներ, որոնք նա պետք է խմբավորի *(հավելված I, ստիմուլային նյութ N14):*<br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 և 15-18 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1. Գտնել համապատասխան բառը՝ ըստ տրված զուգորդության**<br>Հետազոտվողին ներկայացնել որևէ զուգորդություն, այնուհետև խնդրել, որ տրված բառի համար, անալոգիայի սկզբունքով, գտնի համապատասխան բառը:<br>Գիշերը մութ է, ցերեկը՝....<br>Դպրոցում սովորում են, հիվանդանոցում՝ ....<br>Ոչխարը բուրդ ունի, սագը՝ ..... |

| | |
|---|---|
| | Ականջով լսում ենք, աչքով՝ ....<br>Թեյի մեջ շաքար ենք գցում, ապուրի մեջ՝ .....<br>Դանակը պատրաստված է մետաղից, սեղանը՝ .....<br>Ձմռանը սահում են դահուկներով, ծովում լողում են՝ .....<br><br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 16-ԻՑ ԲԱՐՁՐ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br><br>**Առաջադրանք 1. Գտնել համապատասխան բառը՝ ըստ տրված զուգորդության:**<br>Ծառը կեղև ունի, թռչունը՝...........<br>Ձին սմբակ ունի, ոչխարը՝.......<br>Կայծակը փայլում է, ամպրոպը՝...........<br>Օձը սողում է, վագրը՝....................<br>Արևը ծագում է արևելքից, մայր է մտնում՝...........<br><br>**Օգտվել d163 ծածկագրի առաջադրանք 2-ի տեղեկատվությունից:** |
| **ՖՄԴ ՈՐԱԿԻՉ** | • Անձը կարողանում է իրերին, անձանց կամ իրադարձություններին վերաբերող հասկացությունները ընդունել և գործածել, սակայն յուրացված հասկացությունների ամրապնդման համար պահանջվում է մի քանի մեթոդի կամ միջոցի կիրառում - **1 թեթև դժվարություն**<br>• Անձը կարողանում է ընդունել իրերին, անձանց կամ իրադարձություններին վերաբերող հասկացությունները, սակայն դժվարանում է դրանք գործածելու հարցերում: Սովորելու ընթացքում ծագում են դժվարություններ, որոնք պայմանավորված են անձի զարգացման առանձնահատկություններով (ուշադրության կենտրոնացման կամ պահպանման դժվարություն և այլն): Մշտապես ունի աջակցող սարքերի, այլընտրանքային հաղորդակցման միջոցների կարիք - **2 միջին դժվարություն**<br>• Անձը դժվարանում է իրերի, անձանց կամ իրադարձություններին վերաբերող հասկացություններ սովորել և գործածել, մշտապես ունի խոսքային (վերբալ), ֆիզիկական ուղղորդման, ցուցադրության, ինչպես նաև աջակցող սարքերի կիրառման կարիք - **3 ծանր դժվարություն**<br>• Անձը որևէ հասկացություն սովորել չի կարողանում – **4 լիակատար դժվարություն** |
| **ԱՂԲՅՈՒՐԸ** | • *Ս.Դ. Զաբրամնայայի և Օ.Վ. Բորովիկի երեխաների հոգեբանամանկավարժական հետազոտության մեթոդիկա, գործիքը՝ Ս.Դ. Զաբրամնայայի և Օ.Վ. Բորովիկի «Երեխաների հոգեբանամանկավարժական հետազոտության գործնական նյութերի ալբոմ»:* |
| **d 140.**<br>**Կարդալ սովորելը** | *Գրավոր նշանները (այդ թվում Բրայլի այբուբեն և այլ խորհրդանիշներ) սահուն և անսխալ կարդալու հմտությունը զարգացնելը, ինչպես* |

| | |
|---|---|
| | *օրինակ՝ նշեր և պատկերներ ճանաչելը, գրված բառերը ճիշտ արտասանելը և բառեր ու բառակապակցություններ հասկանալը:* |
| **Հուշող հարցեր** | *Գնահատվողին ուղղվող հարցեր*<br>• *Ինչպիսի՞ դժվարություններ եք նկատում կարդալ սովորելիս:*<br>• *Ըստ Ձեզ՝ ինչը՞ առավել դյուրին կդարձնի Ձեր կարդալ սովորելու գործընթացը.*<br>• *Ըստ Ձեզ՝ կարդալ սովորելու համար ունե՞ք որևէ աջակցող միջոցի, ցուցադիչ մեթոդի կամ հնարքի կիրառության կարիք:* |
| **Թեստ/ Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br>**(Կիրառելի է նաև այլ տարիքային խմբերի համար)**<br>**Առաջադրանք 1.** Նկարների միջից վերցրու բոլոր այն պատկերները, որոնք սկսվում են ա հնչյունով *(հավելված 1, աղյուսակային նյութ N15)*:<br>**Առաջադրանք 2.** Թվարկիր բառեր, որոնք սկսվում են տրված հնչյունով (ն - նապաստակ, նուռ, նկար և այլն (5-6 տարեկանների համար):<br>**Առաջադրանք 3.** Որոշիր արտասանված բառերի առաջին հնչյունը (5-6 տարեկանների համար):<br>**Առաջադրանք 4.** Մեծահասակն ասում է. «քա-ղաք», իսկ երեխան վանկերը միացնելով, ասում է. «քաղաք» (կատու, սեղան, գնդակ):<br>**Առաջադրանք 5.** Մեծահասակն ասում է. «տ-ու-ն», իսկ երեխան հնչյունները միացնելով, ասում է. «տուն» (ձուն, մուկ, ծառ): |
| **ՖՄԴ ՈՐԱԿԻՉ** | • Անձը յուրացնում է բառ առ բառ կարդալու տեխնիկաները, սակայն բառերը որպես բառակապակցություն ընկալելու և իմաստը հասկանալու համար ունի հուշումների, օգնող և աջակցող մեթոդների և միջոցների կարիք - **1 թեթև դժվարություն**<br>• Անձը բազմակի կրկնություններ և պարզեցված մեթոդներ կիրառելու արդյունքում յուրացնում է միայն վանկերով կարդալու տեխնիկան, ինչը դանդաղեցնում է ընթերցածը ընկալելու գործընթացը - **2 միջին դժվարություն**<br>• Անձը բազմակի կրկնություններից, աջակցող սարքերի, մեթոդների, ցուցադիչ հնարքների և այլ անձանց օգնությամբ կարողանում է սովորել կարդալ միայն միավանկ և առօրյայում հաճախ գործածվող բառեր - **3 ծանր դժվարություն**<br>• Անձը չի յուրացնում կարդալու տեխնիկաները և չի կարողանում սովորել կարդալ - **4 բացարձակ դժվարություն** |
| **ԱՂԲՅՈՒՐ** | • *"Логопедический альбом для обследования способности к чтению и письму. ФГОС",- Смирнова И. А., Детство-Пресс, 2020 г.* |
| **d 145. Գրել սովորելը** | *Ձայներ, բառեր կամ բառակապակցություններ ներկայացնող խորհրդանիշներ (այդ թվում՝ Բրայլի այբուբեն կամ այլ խորհրդանիշներ) արտադրելու հմտության զարգացում, օրինակ՝ ուղղագրության և քերականական կանոնների կիրառում:* |

| | |
|---|---|
| **Հուշող հարցեր** | *Գնահատվողին ուղղվող հարցեր*<br>• *Ինչպիսի՞ դժվարություններ եք նկատում գրել սովորելիս:*<br>• *Ըստ Ձեզ՝ ինչը՞ ավելի դյուրին կդարձնի Ձեր գրել սովորելու գործընթացը:*<br>• *Ըստ Ձեզ՝ գրել սովորելու համար ինչ՞ն ունի՞ աջակցող միջոցի, ցուցադրիչ մեթոդի կամ հնարքի կիրառության կարիք:* |
| **Թեստ/ Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ (Կիրառելի է նաև այլ տարիքային խմբերի համար)**<br>**Առաջադրանք 1.** Կգրե՞ս անունդ (տպագիր տառերով փորձում է գրել իր անվան որոշ տառեր):<br>**Առաջադրանք 2.** Կտրվածքները իրար միացնելով ստանում է շրջան, աստղ *(հավելված 2, աշխատանքային նյութ N4):*<br>**Առաջադրանք 3.** Ներկում է առաջադրված նկարը՝ չխախտելով պատկերի սահմանները *(հավելված 2, աշխատանքային նյութ N4):*<br>**Առաջադրանք 4.** «Լ», «Ու», «Ն» տառաքարտերը համադրում է «Լուն» բառաքարտի հետ *(հավելված 1, ցուցադրային նյութ N16):*<br>**Առաջադրանք 5.** Թվերի շարքում գրում է բաց թողնված թիվը՝ 1 2 - - 5 (3-4 տարեկանների դեպքում՝ մեծահասակի օգնությամբ, *(հավելված 2, աշխատանքային նյութ N6):*<br>*Առաջադրանքները կիրառելի չեն տեսողության խնդիրների դեպքում:* |
| **ՖՄԴ ՈՐԱԿԻՉ** | • Անձը յուրացնում է տառ առ տառ գրելու տեխնիկաները, սակայն բառերը որպես բառակապակցություն ընկալելու և գրելու համար ունի հուշումների, բարձրաձայն ինքնաթելադրության, ցուցադրիչ մեթոդների և միջոցների կարիք - **1 թեթև դժվարություն**<br>• Անձը բազմակի կրկնությունների և պարզեցված մեթոդներ կիրառելու արդյունքում սովորում է գրել միայն հաճախ գործածվող պարզ, միավանկ բառեր - **2 միջին դժվարություն**<br>• Անձը բազմակի կրկնություններից, աջակցող սարքերի, մեթոդների, ցուցադրիչ հնարքների և այլ անձանց օգնությամբ կարողանում է սովորել գրել միայն միավանկ և առօրյայում հաճախ գործածվող բառեր, այն էլ՝ կտրվածքների միջոցով - **3 ծանր դժվարություն**<br>• Անձը չի յուրացնում գրելու տեխնիկաները և չի կարողանում սովորել գրել - **4 լիակատար դժվարություն** |
| **ԱՂԲՅՈՒՐԸ** | • *Методы обследования речи у детей / Под ред. И.Т. Власенко, Г.В. Чиркиной / Сост. Т.П. Бессонова. - М., 1996.*<br>• *"Логопедический альбом для обследования способности к чтению и письму. ФГОС",- Смирнова И. А., Детство-Пресс, 2020 г.* |
| **d150.** | *Թվերով աշխատելը և պարզ ու բարդ մաթեմատիկական* |

| | |
|---|---|
| **Հաշվել սովորելը** | *գործողություններ կատարելու այնպիսի հմտությունները զարգացնելը, ինչպիսիք են գումարման և հանման մաթեմատիկական նշանները գործածելը և խնդիր լուծելիս ճիշտ մաթեմատիկական գործողություններ կիրառելը։* |
| **Հուշող հարցեր** | *Գնահատվողին ուղղվող հարցեր*<br>• *Ինչպիսի՞ դժվարություններ եք նկատում հաշվել սովորելիս։*<br>• *Ըստ Ձեզ՝ ինչը՞ ավելի դյուրին կդարձնի Ձեր հաշվել սովորելու գործընթացը։*<br>• *Ըստ Ձեզ՝ հաշվել սովորելու համար ունե՞ք որևէ աջակցող միջոցի, լրացուցիչ մեթոդի կամ հնարքի կիրառության կարիք։* |
| **Թեստ/ Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ (Կիրառելի է նաև այլ տարիքային խմբերի համար)**<br>**Առաջադրանք 1. Հաշվել տրված առարկաների քանակը։**<br>Հետազոտվողը հաշվելով պետք է ասի տրված առարկաների քանակը։ Ստուգվում է, ոչ թե հաշվելու, այլ քանակի ընկալման կարողությունը (3-4 տարեկանների դեպքում՝ 5-ի սահմաններում, իսկ 5-6 տարեկանների դեպքում՝ 10-ի սահմաններում, *պարագաներ «մատիտներ, խորանարդիկներ, խաղալիքներ, փայտիկներ»*)։<br>**Առաջադրանք 2.** Հաշվելով, 5-ի սահմաններում, կատարել պարզ թվաբանական գործողություններ։ Հետազոտվողին տրվում են պարզ առարկաներ (խաղալիքներ, փայտիկներ և այլն), որոնց միջով նա պետք է կատարի այդ գործողությունները. Առաջադրանքը տրվում է հետևյալ սկզբունքով. «Դու ունես 2 արջուկ, 3-ն էլ ես եմ քեզ տալիս, քանի՞ արջուկ կունենաս» կամ «Դու ունես 7 փայտիկ, բայց ես 4-ը վերցրեցի քանի՞ փայտիկ մնաց քեզ մոտ» (3-4 տարեկանների դեպքում՝ առարկաներով, իսկ 5-6 տարեկանների դեպքում՝ բանավոր. *պարագաներ «մատիտներ, խորանարդիկներ, խաղալիքներ, փայտիկներ»*)։<br>**Առաջադրանք 3.** Առարկաները բաժանել հավասար մասերի (2-2, 3-3, *պարագաներ «մատիտներ, փայտիկներ»*)։<br>**Կիրառելի են նաև ԺՖՏՕ-ի 6-14 տարեկանների համար կիրառվող հետևյալ առաջադրանքները.**<br>1. Առաջարկվում է երեխային անվանել մետաղադրամները և թղթադրամները։<br>2. Առաջարկվում է երեխային հաշվել և անվանել մի քանի մետաղադրամից կազմված գումարը (6-7 տարեկան՝ 10, 20, 50 դրամանոցներ)։<br>3. Առաջարկվում է երեխային հաշվել թղթադրամից և մետաղադրամից կազմված գումարը (8-ից բարձր տարիքի՝ երեխաներ). |
| **ՖՄԴ ՈՐԱԿԻՉ** | • Անձը սովորում է աշխատել թվերով և կատարել [illegible] |

| | |
|---|---|
| | համապատասխան պարզ ու բարդ մաթեմատիկական գործողություններ, սակայն այս գործընթացը վարժեցնելու համար է անհրաժեշտ է կիրառ հավելյալ մեթոդներ, միջոցներ և/ կամ կրկնել գործընթացը - **1 թեթև դժվարություն**<br>• Անձը դժվարությամբ է սովորում թվերով աշխատել և պարզ ու բարդ մաթեմատիկական գործողություններ կատարել՝ տարիքին համապատասխան (օրինակ՝ երեխան սովորում է ուղիղ և հետ հաշվել, կարողանում է 5-ի սահմանում գումարել և հանել): Անձը կարող է շփոթել թիվ-քանակ հասկացությունները, գրելաձևով նման թվերը, ինչն էլ կդժվարեցնի այս գործընթացը: Անձը կարիք ունի օգնող -օժանդակող սարքերի և սարքավորումների (օրինակ՝ տեսողական, լսողական սարքեր և սարքավորումներ և այլն, հարմարեցված տետրեր և գրիչներ, նորագույն տեխնիկաներ և տեխնոլոգիաներ, դիրքավորման, դասատակը և բազմակը ֆիքսող հարմարանքներ և այլն) - **2 միջին դժվարություն**<br>• Անձը սովորում է հաշվել մինչև 5-ը, սովորում է ճանաչել թվերը, հաճախ շփոթում է թվանշանները, դժվարությամբ է յուրացնում քանակ հասկացությունը, թիվ- քանակ կապը, ոչ մի թվաբանական գործողություն կատարել չի կարողանում: Այս գործընթացը մշտապես պետք է ուղղորդել, կիրառել օգնող և օժանդակող սարքերի-սարքավորումների (օրինակ՝ տեսողական, լսողական սարքեր և սարքավորումներ և այլն, հարմարեցված տետրեր, գրիչներ, նորագույն տեխնիկաներ և տեխնոլոգիաներ, դիրքավորման, դասատակը և բազմակը ֆիքսող հարմարանքներ և այլն), ինչպես նաև դասավանդման այլընտրանքային մեթոդների և միջոցներ - **3 ծանր դժվարություն**<br>• Անձը հաշվել սովորել չի կարող - **4 լիակատար դժվարություն** |
| ԱՂԲՅՈՒՐԸ | • *Забрамная С.Д., О.В. Боровик.Москва, ВЛАДОС, 2008.. Практический материал для проведения психолого-педагогического обследования детей* |
| **d155**<br>**Հմտություններ ձեռք բերելը** | *Գործողությունների կամ առաջադրանքների փոխկապակցված խմբերին առնչվող հիմնական և բարդ հմտությունները զարգացնելը՝ այնպիսի հմտությունների ձեռքբերումը սկսելու և շարունակելու համար, ինչպիսիք են գործիքներ կամ խաղալիքներ գործածելը կամ խաղեր խաղալը* |
| **Հուշող հարցեր** | *Այս ծածկագիրը գնահատելու համար հարցեր տալու անհրաժեշտություն չկա, անձի հետ զրույցն ու առաջադրանքների կատարումը լիովին բավարար է այն գնահատելու համար և հասկանալու, թե արդյո՞ք անձը կարող է հմտություններ զարգացնել:* |
| **Թեստ/**<br>**Առաջադրանք** | • **Դիտել d131-ի 1,3 առաջադրանքների կատարման ընթացքը** ***(Փազլներ «Բնապատկեր մեքենա, 10-15 խորանարդներ», «Սեղանի փախպաակ», «Բուրգ՝ 5-10 օղակով»):*** |

| | |
|---|---|
| | • Օգտվել d440 ծածկագրի հուշող հարցերից |
| ՖԱԴ ՈՐԱԿԻՉ | • Անձը մեկ, երկու կամ երկուսից ավել տարբեր նշանակության և գործողություններ պահանջող առարկաներով կարողանում է պարզ և բարդ գործողություններ կատարել, ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ. սովորել՝ խոսքային (վերբալ) ուղղորդմամբ: Անձը գործիքներ կամ խաղալիքներ կիրառելու միջոցով սովորելու ընթացքում հրահանգների, հավելյալ ցուցադրումներ կարիք ունի - **1 թեթև դժվարություն**<br>• Անձը մեկ, երկու միևնույն նշանակություն ունեցող գործիքներով, առարկաներով, խաղալիքներով պարզ գործողություններ կարող է կատարել, սակայն մեկից ավել տարբեր նշանակության և գործողություններ պահանջող առարկաներ գործածելու դեպքում, ինչպես նաև խաղալիքների, խաղերի միջոցով սովորելու ընթացքում, դժվարություններ է ունենում հմտություններ սովորելու գործընթացում: Պատճառը ֆիզիկական, մտավոր զարգացման առանձնահատկություններն են (օրինակ՝ մկանային բարձր լարվածություն կամ թուլություն, դիրքի պահպանման անկարողություն, ընկալման, ուշադրության կենտրոնացման կամ պահպանման դժվարություն և այլն): Անձն ունի աջակցող սարքերի կարիք (անվտանգության և կայունության համար նախատեսված սարքեր, այլընտրանքային հաղորդակցման միջոցներ, դիրքավորման, ինչպես դասատախտակ/բազուկը ֆիքսելու, առարկաները բռնելու համար նախատեսված հատուկ հարմարանքներ) - **2 միջին դժվարություն**<br>• Անձը դժվարանում է մեկ կամ երկու միևնույն նշանակության առարկաներով, գործիքներով, խաղալիքով պարզ գործողություններ կատարելիս, ինչպես նաև խաղի միջոցով հմտություններ սովորելիս: Մշտապես այլ անձի խոսքային (վերբալ), ֆիզիկական ուղղորդման, ցուցադրության, ինչպես նաև օժանդակ սարքերի և սարքավորումների կարիք ունի - **3 ծանր դժվարություն**<br>• Անձը որևէ առարկայական գործողություն կատարել չի կարողանում – **4 լիակատար դժվարություն** |
| **d 160. Ուշադրությունը կենտրոնացնելը** | *Կոնկրետ ազդանշանի վրա միտումնավոր կերպով կենտրոնանալը, ինչպես օրինակ՝ ուշադրությունը շեղող աղմուկի վրա չեղվելը:*<br>*Միջավայրում փոփոխությունների վրա ուշադրությունը կենտրոնացնելը:*<br>*Միջավայրի որոշակի մասերին միտումնավոր կերպով ուշադրություն դարձնելը, ինչպիսիք են ֆիզիկական կամ սոցիալական ազդակների դրական, բացասական կամ ուժգնության փոփոխությունները:* |
| Հուշող հարցեր | *Այս ծածկագիրը գնահատելու համար հարցեր տալու անհրաժեշտություն չկա, անձի հետ զրույցը լիովին բավարար է այն* |

| | |
|---|---|
| | *գնահատելու համար և համոզվելու, թե արդյո՞ք անձը կարող է ուշադրությունը կենտրոնացնել, լսելով Ձեր հարցերը և պատասխանելով դրանց:* |
| **Թեստ/ Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br><br>**Առաջադրանք 1. Գտի՛ր ում պահարանն է, սրբիչն է** (օգտվել d110 ծածկագրի 3-րդ առաջադրանքից՝ *հավելված 1, ստիմուլային նյութ N 1, 2*):<br><br>**Առաջադրանք 2.** Գտի՛ր տունը *(հավելված 1, ստիմուլային նյութ N17)*:<br><br>**Առաջադրանք 3.** Ուշադրության հետազոտման «Պիեռոն Ռուզերի մեթոդիկա»: Առաջադրանքը կիրառելի է տարբեր տարիքային խմբերի հետազոտվողների համար կիրառելով տարբեր ստիմուլային նյութեր *(հավելված 2, աշխատանքային նյութ N7, պարագաներ «մատիտ, վայրկյանաչափ և ձևաթուղթ»)*:<br><br>**Թեստի նկարագրությունը:**<br>Հետազոտվողին տրվում է ձևաթուղթ, որի վրա միմյանցից հավասար հեռավորության վրա պատկերված են 3 պատկերներ: Տրվում է հրահանգ՝ յուրաքանչյուր պատկերը լրացնել որևէ պայմանական նշանով: Հետազոտողը նմուշի համար առանձնացված տողում ցուցադրում է օրինակը և խնդրում հետազոտվողին շարունակել աշխատանքը: Առաջադրանքի կատարման համար տրվում է 3 րոպե:<br><br>*Առաջադրանքները կիրառելի չեն տեսողության խնդիրների դեպքում.*<br><br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br><br>**6-10 տարեկանների դեպքում**<br><br>**Առաջադրանք 1.** Ուշադրության հետազոտման «Պիեռոն Ռուզերի մեթոդիկա»: Առաջադրանքը կիրառելի է տարբեր տարիքային խմբերի հետազոտվողների համար կիրառելով տարբեր ստիմուլային նյութեր *(հավելված 2, աշխատանքային նյութ N8, պարագաներ «մատիտ, վայրկյանաչափ և ձևաթուղթ»)*:<br><br>**Թեստի նկարագրությունը**<br>Հետազոտվողին տրվում է ձևաթուղթ, որի վրա միմյանցից հավասար հեռավորության վրա պատկերված են 3 պատկերներ: Պատկերները դասավորված են 7 շարքով, յուրաքանչյուր շարքում 10-ական: Հետազոտողը ցույց է տալիս երեխային, թե ինչպես լրացնել պատկերները՝ քառակուսու մեջ դնում է գումարման նշանը, եռանկյունու մեջ՝ հանման, շրջանի մեջ՝ դրվում է կետ, իսկ շեղանկյան մեջ ոչինչ չի դրվում: Այս ամենը մեկ շարքով՝ որպես նմուշ հատկացվում է երեխաներին. Առաջադրանքի կատարման համար |

տրվում է 3 րոպե:

**11-14 տարեկանների դեպքում**

**Առաջադրանք 2.** Հետազոտվողին տրվում է 100 տառերից բաղկացած ձևաթուղթ, համապատասխանաբար 10 շարքով տրված են 10- ական տառեր: Հետազոտվողը խնդրում է «Ա» տառի տակ ընդգծել մեկ տողով, «Կ» տառի տակ՝ 2 տողով, «Ն» տառի տակ 3 տողով, իսկ «Ի» տառը՝ չընդգծել: Առաջադրանքի կատարման համար տրվում է 3 րոպե:
*(հավելված 2, աշխատանքային նյութ N9, պարագաներ «մատիտ, վայրկյանաչափ և ձևաթուղթ»):*

*Առաջադրանքները կիրառելի չեն տեսողության խնդիրների դեպքում:*

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 15-18 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Առաջադրանք 1.** Հետազոտվողին տրվում է 100 տառերից բաղկացած ձևաթուղթ, համապատասխանաբար 10 շարքով տրված են 10-ական տառեր: Հետազոտվողը խնդրում է «Ա» տառի տակ ընդգծել մեկ տողով, «Կ» տառի տակ՝ 2 տողով, «Ն» տառի տակ 3 տողով, իսկ «Ի» տառը՝ չընդգծել: Առաջադրանքի կատարման համար տրվում է 3 րոպե *(հավելված 2, աշխատանքային նյութ N9, պարագաներ «մատիտ, վայրկյանաչափ և ձևաթուղթ»):*

*Առաջադրանքը կիրառելի չեն տեսողության խնդիրների դեպքում:*

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 18-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Առաջադրանք 1.** Հետազոտվողին տրվում է 100 տառերից բաղկացած ձևաթուղթ, համապատասխանաբար 10 շարքով տրված են 10-ական տառեր: Հետազոտվողը խնդրում է «Ա» տառի տակ ընդգծել մեկ տողով, «Կ» տառի տակ՝ 2 տողով, «Ն» տառի տակ 3 տողով, իսկ մնացած տառերը՝ չընդգծել: Առաջադրանքի կատարման համար տրվում է 3 րոպե *(հավելված 2, աշխատանքային նյութ N10. պարագաներ «մատիտ, վայրկյանաչափ և ձևաթուղթ»):*

*Առաջադրանքը կիրառելի չեն տեսողության խնդիրների դեպքում:*

**Հուշում՝** Հետազոտողը վայրկյանաչափի օգնությամբ արձանագրում է թեստի կատարման ժամանակահատվածը. կարևոր է արձանագրել յուրաքանչյուր տողին հատկացված ժամանակահատվածը: Կարևոր է ուշադրություն դարձնել, թե հետազոտվողը երբ է սկսում տրված նմուշից շեղվել: Կարևոր է ուշադրություն դարձնել, թե սխալները ինչ բնույթ ունեն՝ ցրված են, առաջադրանքի կատարման որոշակի ժամանակահատվածից են հայտնվում, ավելանում են, թե նվազում:

***Սույն կարողության գնահատման համար կարելի է օգտվել նաև***

| | |
|---|---|
| | *d110 ծանկագրի առաջադրանքներից և ՖՄԴ որակիչներից:* |
| ՖՄԴ ՈՐԱԿԻՉ | • Անձը կարողանում է տրված ժամանակահատվածում կատարել առաջադրանքի 80%-ը, առկա են 3-4 սխալ - 1 **թեթև դժվարություն**<br>• Անձը կարողանում է տրված ժամանակահատվածում կատարել առաջադրանքի 50%-ը, առկա են 5-8 սխալ - 2 **միջին դժվարություն**<br>• Անձը կարողանում է տրված ժամանակահատվածում կատարել առաջադրանքի 30%-ը, առկա են 8-ից ավելի սխալներ - 3 **ծանր դժվարություն**<br>• Անձը տրված ժամանակահատվածում չի կարողացել կատարել առաջադրանքը - 4 **փակատար դժվարություն** |
| ԱՂԲՅՈՒՐԸ | • *Պիերոնի-Ռուզերի մեթոդիկա* |
| **d161 Ուշադրության պահպանումը** | *Համապատասխան ժամանակահատվածում կոնկրետ գործողություն-ների կամ առաջադրանքների ուղղված ուշադրությունը մտադրված կերպով պահպանելը:* |
| Հուշող հարցեր | *Այս ծանկագիրը գնահատելու համար հարցեր տալու անհրաժեշտություն չկա, անձի հետ զրույցն ու առաջադրանքների կատարումը բավարար է այն գնահատելու համար և համոզվելու, թե արդյո՞ք անձը կարող է ուշադրությունը պահպանել:* |
| Թեստ/ Առաջադրանք | Այս ծանկագրի գնահատման համար պետք է օգտվել d160, d110 ծանկագրերի առաջադրանքներից և ՖՄԴ որակիչներից: |
| ՖՄԴ ՈՐԱԿԻՉ | • Ուշադրությունը պահպանում է, սակայն մանրամասների նկատմամբ անուշադիր է, կարող է թույլ տալ անուշադրության սխալներ, բայց սկսած գործը ավարտին հասցնել - 1 **թեթև դժվարություն**<br>• Ուշադրությունը չի կարողանում պահպանել մինչև համբերատարության կատարման ավարտը, մինչև վերջ չի կարողանում լսել իրեն ուղղված խոսքը կամ հանձնարարությունը, անընդհատ լրացուցիչ հարցեր է տալիս, ցրված է, առանց հիմնավոր պատճառի շեղվում և ուշադրությունը կենտրոնացնում է այլ ազդակների վրա, միաժամանակ դժվարանում է ուշադրությունը պահպանել մեկ կամ երկու ազդակների վրա, հանձնարարությունը ավարտում է հատկացված ժամանակից բավականին ուշ, սկսած գործը ավարտին հասցնելու համար հուշման և աջակցության կարիք ունի – 2 **միջին դժվարություն**<br>• Ուշադրության պահպանումը խիստ կարճատև է, գրեթե չի պահպանում, շատ արագ հոգնում և ցրվում է, քնոտ է հիվանդագին ձևով շեղվելը: Անձը փորձարկում է և ունի այլ անձի օժանդակության և ուղղորդման կարիք - 3 **ծանր դժվարություն**<br>• Ուշադրությունը ընդհանրապես չի պահպանում - 4 **փակատար դժվարություն** |

| | |
|---|---|
| ԱՂԲՅՈՒՐԸ՝ | • *Պիեռո Մուզելի մեթոդիկա* |
| **d163 Մտածելը** | *Մտքեր, գաղափարներ և պատկերներ ձևակերպելը՝ նպատակաուղղված կամ ոչ նպատակաուղղված կերպով, ինքնուրույն կամ այլոց հետ միասին, մտածելուն առնչվող գործողությունների հետ կապված՝ ինչպես օրինակ՝ մինչ արտահայտելը, ձևանալը, քննարկելը, մտացածին բան սարքելը, թեորեմ ապացուցելը, մտքերով խաղալը, մտագրոհը, մտախորհելը (մեդիտացիա), մտորելը, խորհրդածելը կամ խորհելը:* |
| **Հուշող հարցեր** | *Այս ծածկագրի գնահատման համար հարցեր տալու անհրաժեշտություն չկա, անձի հետ զրույցն ու առաջադրանքների կատարումը լիովին բավարար է այս գնահատման համար և համոզվելու, թե արդյո՞ք անձը կարող է մտքեր ձևակերպել:* |
| **Թեստ/ Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br><br>**Առաջադրանք 1.** Ռավենի պրոգրեսիվ մատրիցա՝ 3-5 տարեկանների համար՝ հարմարեցված՝ ըստ Ս.Դ Զաբրամնայայի և Օ.Վ. Բորովիկի*(հավելված 1, ստիմուլային նյութ N18):*<br><br>**Առաջադրանք 2.** Մեկնաբանել պատճառահետևանքային կապերը Հետազոտվողին ցուցադրել սյուժետային նկարներ, որտեղ ինչ-որ բան է կատարվել օրինակ՝ տղան լաց է լինում, որովհետև շնիկը փախել և կորել է կամ աղջիկը թրջվել է անձրևի տակ, քանի որ անձրևանոց չունի և առաջարկել մեկնաբանել և բացատրել *(հավելված 1, ստիմուլային նյութ N19):*<br><br>**Առաջադրանք 3.** Մեկնաբանել պատմվածքի կամ սյուժետային նկարներով ներկայացված պատմվածքի գլխավոր ասելիքը *(հավելված 1, ստիմուլային նյութ N20):*<br><br>*Առաջադրանքները կիրառելի չեն լսողության խնդիրների դեպքում:*<br><br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br><br>**Առաջադրանք 1.** Ռավենի պրոգրեսիվ մատրիցա՝ 6-8 տարեկանների համար՝ հարմարեցված՝ ըստ Ս.Դ Զաբրամնայայի և Օ.Վ. Բորովիկի*(հավելված 1, ստիմուլային նյութ N18):*<br><br>**Առաջադրանք 2.** Մեկնաբանել պատմվածքի կամ սյուժետային նկարներով ներկայացված պատմվածքի գլխավոր ասելիքը, դրանում գործող գլխավորը միտքը *(հավելված 1, ստիմուլային նյութ N21):*<br><br>*Առաջադրանքը կիրառելի չեն լսողության խնդիրների դեպքում:*<br><br>**Առաջադրանք 3.**<br>**Կռահիր՝ ի՞նչ է պատահել (6-10 տարեկանների համար)**<br>• Երբ մայրիկը ներս մտավ, տեսավ՝ ծաղկամանը կոտրված է: Իսկ Անդրանիկը լաց էր լինում: **Ինչու՞ էր Անդրանիկը լաց լինում:** |

- Անեան շատ էր շտապում. նա տնից դուրս եկավ ու մի քանի րոպեից ետ վերադարձավ, քանի որ մոռացել էր անձրևանոցը: Երբ ներս մտավ, ինչ՜ տեսավ....տեսավ, որ մի փոքրիկ փիսիկ է հայտնվել իրենց տանը և նստել բազկաթոռին: Ինչպե՞ս էր փիսիկը հայտնվել նրանց տանը:

**Նախիր՝ ի՞նչ է պատահել (11-14 տարեկանների համար)**

- Մարիայի քույրիկը՝ Անեան շտապում էր. նա արագ հագավ իր վերարկուն և դուրս եկավ: Քիչ անց, երբ Մարիան ցանկացավ հագնել իր վերարկուն և նույնպես դուրս գալ տանից, տեսավ, որ այն չկա. Այնտեղ կախված էր միայն քրոջ նույն գույնի վերարկուն. Մի պահ մտածեց և ասաց՝ «Հաա՜, ես հասկացա…»: **Ի՞նչ հասկացավ Մարիան:** Բոլոր տարբերակները կատարել պարտադիր չէ *(հավելված 1, ազդանշային նյութ N22)*:

## 15-18 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

**Առաջադրանք 1. Պատասխանել տրված հարցերին (15-18 տարեկանների համար)**

Հետազոտվողներին առաջարկվում են շղթայի շարադասությամբ նախադասություններ, որոնց շուրջ տրվում են հարցեր:

- Անին մեծ է Կարինեից, ո՞վ է աղջիկներից փոքր:
- Արամը բարձրահասակ է Մարկից, ո՞վ է տղաներից ցածրահասակ:
- Զամբյուղում ավելի քիչ խնձոր կա, քան դույլում, որտե՞ղ շատ խնձոր կա:
- Աղջկա հագին մայրիկի զգեստն է, ո՞վ մնաց առանց զգեստի:
- Աղջիկը փրկվեց տղայի կողմից, ո՞վ ում փրկեց:
- Աշխատողը աշխատանքից ազատվեց գործատուի կողմից. Ո՞վ ո՞ւմ ազատեց աշխատանքից *(հավելված 1, ազդանշային նյութ N23)*:

**Առաջադրանք 2. Փոխաբերությունների և ասացվածքների ընկալում**

Հետազոտվողներին առաջարկվում է բացատրել տրված առածների ու ասացվածքների իմաստը *(հավելված 1, ազդանշային նյութ N24)*:

**Առաջադրանք 3. Ասա՛ մեկ բառով.**

Բոլոր տարբերակները կատարել պարտադիր չէ *(հավելված 1, ազդանշային նյութ N25)*:

## 18-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

**Առաջադրանք 1. Փոխաբերությունների և ասացվածքների ընկալում**

Հետազոտվողներին առաջարկվում է բացատրել տրվա[illegible]

| | |
|---|---|
| | ասացվածքների իմաստը (*հավելված 1, ստիմուլային նյութ N24*):<br><br>**Առաջադրանք 2. Ասա՛ մեկ բառով.**<br>Բոլոր տարբերակները կատարել պարտադիր չէ (*հավելված 1, ստիմուլային նյութ N25*):<br>(Որպես այլընտրանք՝ կարելի է կիրառել Ռավենի պրոգրեսիվ մատրիցաները, *պարագաներ «Ռավենի պրոգրեսիվ մատրիցա թեստ»*):<br><br>**6-18 տարեկան և 18 տարեկանից բարձր անձանց գնահատումն իրականացնել d155, d177 ծածկագրերի համապատասխան տարիքային խմբի 1-2 առաջադրանքների անցկացման, լոգոպեդի և հոգեբանի գնահատմանը զուգընթաց՝ մասնավորապես d230 ծածկագրի առաջադրանքների կիրառման ընթացքում:** |
| ՖՄԴ ՈՐԱԿԻՉ | • Անձը կարողանում է կատարել վերլուծահամադրական աշխատանք՝ իր տարիքին համապատասխան գործունեության ծիրում և մտածողության մակարդակում, սակայն մտածողության տեմպը դանդաղած է: Հաճախ ընտանիքի անդամները մտածողության դանդաղումը չեն նկատում մինչ դպրոց հաճախելը: Դպրոցական և հասուն տարիքի անձանց մտքերը կարող են հախուռն լինել, սակայն մտածողության դժվարությունները սոցիալական հարմարվողականության բարդություններ չեն առաջացնում, ինչի պատճառով էլ ցայտուն չեն երևում: Անձը կարող է սակավախոս կամ շատախոս լինել. երկու դեպքում էլ նկատվում է մտքի աղքատիկություն և պարզունակություն, ինչ արտահայտվում է բարդ հասկացություններով մտածելու և արտահայտվելու ժամանակ: Ոչ խոսքային ինտելեկտը ևս հապաղում է - **1 թեթև դժվարություն**<br>• Անձն ինքնուրույն չի կարողանում կատարել վերլուծահամադրական աշխատանք՝ իր տարիքին համապատասխան գործունեության ծիրում և մտածողության մակարդակում, մտածողության տեմպը դանդաղ է: Անձը ընդգծված հապաղումով է ընկալում լսածի իմաստը, խոսելիս կամ արտահայտվելիս (նաև հաղորդակցական միջոցներով) մտքերը խիստ հախուռն են (չի կարող միտքն ավարտել կամ մտքից՝ միտք անցումներ կատարել), բնորոշ է դատարկախոսությունը: Անձը որևէ տեղեկատվություն հաղորդել կամ ընկալել կարող է թերի, աղավաղված կամ սխալ: Մտածողության դժվարությունները սոցիալական հարմարվողականության դժվարություններ են առաջացնում և նկատելի են թե՛ ընտանիքի անդամներ, թե՛ շրջապատի կողմից - **2 միջին դժվարություն**<br>• Մտածողության տեմպը խիստ ընկած է, մեծ դժվարությամբ է ընկալում ասվածի իմաստը, որևէ տեղեկատվություն [illegible] |

| | |
|---|---|
| | էության, հաղորդել կամ ընկալել չի կարող: Անձը կարող է խիստ պարզունակ պահանջմունքներ և ցանկություններ արտահայտել՝ պարզունակ, աղավաղված բառերով կամ հարալեզվական այլ միջոցներով. հաճախ բնորոշ է իմաստազուրկ խոսքը, ինչն արտահայտվում է մտքերն իրականությունից կտրված լինելու հանգամանքով: Ժամանակ առ ժամանակ անձը կարող է ունենալ զառանցական, կպչուն-սևեռուն մտքեր- **3 ծանր դժվարություն**<br>• Անձը մտածելու կամ գաղափարներ արտահայտելու որևէ ունակություն չի դրսևորում - **4 կատարյալ դժվարություն** |
| **d166**<br>**Կարդալը** | *Գրավոր խոսքը (օրինակ, գրքեր, ցուցումներ, թերթեր՝ սովորական բառերի կամ Բրայլյան համակարգով գրված) ընկալելուն և վերծանելուն առնչվող գործողություններ կատարելը՝ ընդհանուր գիտելիք կամ հատուկ տեղեկություն ստանալու համար՝ ներառյալ ստանդարտ տառերով կամ նշաններով կազմված գրավոր խոսքը, ինչպես նաև յուրահատուկ խորհրդանշաններով, օրինակ՝ պատկերանշաններով կազմված բառերի ընկալումը և մեկնաբանումը:* |
| **Հուշող հարցեր** | *Գնահատվողին ուղղվող հարցեր*<br>• *Կարդալիս դժվարանու՞մ եք:*<br>• *Ինչպիսի՞ դժվարություններ եք ունենում կարդալիս:*<br>• *Ըստ Ձեզ՝ կարդալու համար ունե՞ք որևէ աջակցող միջոցի, լրացուցիչ մեծացույցի կամ ակնոցի կիրառության կարիք:* |
| **Թեստ/**<br>**Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br><br>***6-8 տարեկաններ***<br>**Առաջադրանք 1**. Կարդա հետևյալ բառերը՝ սեղան, մատիտ, գիրք, դուռ, պատուհան*(հավելված 1, ստիմուլային նյութ N26)*:<br>**Առաջադրանք 2**. Կարդա՝ հանձնարարված տեքստը *(հավելված 1, ստիմուլային նյութ N26)*:<br>*(Առաջադրանքները կիրառելի չեն 6 տ. այն երեխաների դեպքում, ովքեր դեռևս տառուսուցում չեն անցել. կիրառելի չեն նաև տեսողության խնդիրների, խոսքի բացակայության դեպքում:*<br><br>***9-11 տարեկաններ***<br>**Առաջադրանք 2.** Կարդա հանձնարարված տեքստը *(հավելված 1, ստիմուլային նյութ N27)*:<br>**Առաջադրանք 3.** Մի քանի նախադասությամբ պատմիր տեքստի բովանդակությունը *(հավելված 1, ստիմուլային նյութ N27)*:<br>*1-ին և 2-րդ առաջադրանքները կիրառելի չեն տեսողության խնդիրների դեպքում, իսկ 2-րդ և 3-րդ առաջադրանքները կիրառելի չեն, երբ առկա է խոսքի բացակայություն:*<br><br>***12-14 տարեկաններ*** |

| | |
|---|---|
| | **Առաջադրանք 1.** Կարդա հանձնարարված տեքստը *(հավելված 1, ստիմուլային նյութ N28)*:<br><br>**Առաջադրանք 2.** Մի քանի նախադասությամբ պատմիր տեքստի բովանդակությունը *(հավելված 1, ստիմուլային նյութ N28)*:<br><br>**15-18 ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 18-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br><br>**Առաջադրանք 1.** Կարդա՛ հանձնարարված նախադասությունները *(հավելված 1, ստիմուլային նյութ N29)*:<br><br>**Առաջադրանք 2.** Դասավորի՛ր նախադասությունները ըստ տրամաբանական հաջորդականության *(հավելված 1, ստիմուլային նյութ N29)*:<br>*Տեսողության խնդիրների դեպքում, ինչպես նաև խոսքի բացակայության դեպքում 1-ին առաջադրանքը կիրառելի չէ: 2-րդ առաջադրանքը կիրառելի է նաև d163 ծածկագիրը գնահատելիս:* |
| ՖՄԴ ՈՐԱԿԻՉ | • Անձը վերծանում է գրավոր նյութը, սակայն գրավոր նյութը ընկալելու համար կարիք ունի հարմարեցումների, աջակցող սարքեր, հուշող հարցադրումների կամ լրացուցիչ մեկնաբանման, երբեմն թույլ է տալիս կայուն բնույթի յուրահատուկ սխալներ, կարող է երբեմն շփոթել նման տառերը, չի ընկալում ընթերցված բնագրի պատճառահետևանքային կապերը, բնագրից նոր տեղեկատվություն առանձնացնելու համար անհրաժեշտ է այլ անձի օգնություն - **1 թեթև դժվարություն**<br>• Անձը վերծանում է գրավոր նյութը՝ հարմարեցումներից, հուշումներից և միայն օգնության պարագայում, սակայն չի կարողանում մեկնաբանել այն, հաճախ շփոթում է գրելաձևով նման տառերը, առկա են հնչյունավանկային կառույցների խանգարումներ, վանկերի բացթողումներ, տառերի, վանկերի ավելացումներ, տառերի, վանկերի տեղափոխություններ - **2 միջին դժվարություն**<br>• Անձը կարողանում է կարդալ միայն իրենց ծանոթ բառերը վանկ առ վանկ, սակայն չի կարողանում ընկալել և մեկնաբանել տրված բնագիրը, կարիք ունի աջակցող սարքերի և սարքավորումների - **3 ծանր դժվարություն**<br>• Անձը չի կարողանում վերծանել և ընկալել գրավոր նյութը - **4 լիակատար դժվարություն** |
| ԱՂԲՅՈՒՐԸ | • *https://grapaharan.org/%D5%80%D5%A1%D5%B5_%D5%84%D5%B8%D6%82%D5%AF%D5%A8*<br>*http://books.panarm.info/%D5%BD%D5%BF%D5%A5%D6%83%D5%A1%D5%B6-%D5%A6%D5%B8%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B6%D5%B1%D5%B8%D6%80%D5%A8* |

| | |
|---|---|
| | %D5%A1%D5%B5%D5%A3%D5%AB%D5%B6 |
| d170 Գրելը | Նիշեր կամ տառեր գրելը, պատկերները կամ վերարտադրությունը տեղեկատվության հաղորդման համար, ինչպես օրինակ՝ իրադարձություններ կամ մտքեր գրի առնելը կամ նամակ կազմելը, գրառումներ, նշումներ և գրավոր համաձայնություն կայացնելը, գրելը: |
| Հուշող հարցեր | *Գնահատվողին տրվող հարցեր*<br>• *Արդյո՞ք կարողանում եք գրել կամ գծել առանց դժվարության:*<br>• *Ինչպիսի՞ դժվարություններ եք ունենում գրելիս կամ գծելիս, նկարագրեք դրանք:*<br>• *Ի՞նչն է Ձեզ խանգարում գրել կամ գծել:* |
| Թեստ/ Առաջադրանք | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք** 1. Հետազոտվողին խնդրում ենք գրել իր անունը, ազգանունը և հայրանունը *(հավելված 2, աշխատանքային էջ N11):*<br>***6-8 տարեկաններ***[1]<br>**Առաջադրանք** 2. Գրել բառային թելադրություն *(հավելված 2, աշխատանքային էջ N12):*<br>**Առաջադրանք** 3. Արտագրել տրված նախադասությունը (հատված «Փոքրիկ իշխան»-ից, *հավելված 2, աշխատանքային էջ N13):*<br>***9-14 տարեկաններ***<br>**Առաջադրանք** 4. Տրված տառերից կազմիր 4-5 բառ և գրիր համապատասխան տողի վրա. *(հավելված 2, աշխատանքային էջ N14):*<br>Ա Ի Գ Տ Ն Ե ՈՒ Ր Կ Շ Մ Վ<br>**Առաջադրանք 5.** Կազմում և գրում է նախադասություն՝ նախորդ առաջադրանքի ընթացքում կազմված բառերով *(հավելված 2, աշխատանքային էջ N14):*<br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 15-18 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք** 1. Հետազոտվողին խնդրում ենք գրել իր անունը, ազգանունը և հայրանունը *(հավելված 2, աշխատանքային էջ N11):*<br>**Առաջադրանք** 2. Գրում է թելադրություն հետևյալ նախադասություններով.<br>*Մարդու ուղեղի էլեկտրական իմպուլսները բավարար են լամպ վառելու համար:*<br>*Ագռավները ավելի վարժ են կարողանում բառեր արտաբերել, քան թութակները:* |

[1] 6 տարեկանների դեպքում ուշադրություն դարձնել՝ երեխան արդեն տառաճանաչ է, թե ոչ:

| | |
|---|---|
| | *Կրակայրիչը հայտնագործվել է ավելի վաղ, քան լուցկին (հավելված 2, աշխատանքային նյութ N15):*<br>**Առաջադրանք 3.** Գրիր այն բառը, որը բացակայում է տրված երկու նախադասություններում *(հավելված 2, աշխատանքային նյութ N16):*<br>*3-րդ առաջադրանքը կարելի է կիրառել նաև d170 ծածկագրի գնահատման: Տեսողության խնդիրների դեպքում 1-ին առաջադրանքը կիրառելի չէ, իսկ 1-ին և 2-րդ առաջադրանքները կիրառելի չեն խոսքի բացակայության դեպքում:*<br><br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 18-ից բարձր ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1.** Հետազոտվողին խնդրում ենք գրել իր անունը, ազգանունը և հայրանունը *(հավելված 2, աշխատանքային նյութ N11):*<br>**Առաջադրանք 2.**<br>***Տարբերակ 1.*** Գրեք այն մասին, թե ինչպես կփոխվի Ձեր առօրյան 5 տարի հետո՝ Ձեր կարծիքով:<br>***Տարբերակ 2.*** Գրավոր ներկայացրեք այն ամենը, ինչը կցանկանայք, որ մենք իմանանք *(հավելված 2, աշխատանքային նյութ N17):* |
| **ԳՄԴ ՈՐԱԿԻՉ** | • Անձը յուրացնում է, գրում է ուղղագրությունը, սակայն բառերը որպես բառակապակցություն ընկալելու և գրելու համար ունի հուշումների, բարձրաձայն ինքնաթելադրության, լրացուցիչ մեթոդների և միջոցների կարիք, թույլ է տալիս բառի հնչյունային կազմի սխալներ, կարող է երբեմն չկողմնորոշվել թղթի, տողերի տարածության մեջ - **1 թեթև դժվարություն**<br>• Անձը աջակցող միջոցների, մեթոդների, հնարքների կիրառմամբ գրում է միայն հաճախ գործածվող պարզ, միավանկ բառեր, թույլ է տալիս նաև գրաֆիկական սխալներ, տառերը կարող են լինել անհամաչափ - **2 միջին դժվարություն**<br>• Անձը աջակցող սարքերի, մեթոդների, լրացուցիչ հնարքների և այլ անձանց օգնությամբ կարողանում է գրել միայն միավանկ և առօրյայում հաճախ գործածվող բառեր, այն էլ՝ կետագծերի միջոցով - **3 ծանր դժվարություն**<br>• Անձը չի կարողանում գրել - **4 լիակատար դժվարություն** |
| **ԱՂԲՅՈՒՐԸ** | • *"Логопедический альбом для обследования способности к чтению и письму. ФГОС",- Смирнова И. А., Детство-Пресс. 2020 г.* |
| **d172. Հաշիվը/ հաշվարկը** | *Մաթեմատիկական սկզբունքների հիման վրա՝ բառերով ձևակերպված խնդիրների լուծման համար հաշիվը/հաշվարկներ կատարելը, արդյունքներն արտահայտելը կամ գրելը (ստեղնաշարով գրելը, Բրայլի այբուբենով գրելը), օրինակ՝ երեք թվի գումար հաշվարկելը:* |

| | |
|---|---|
| **Հուշող հարցեր** | *Այս ծածկագիրը գնահատելու համար հարցեր տալու անհրաժեշտություն չկա, անձի կողմից առաջադրանքների կատարումը լիովին բավարար է այդ գնահատելու համար և հասկանալու, թե արդյո՞ք անձը կարող է հաշվել:* |
| **Թեստ/ Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br>6-14 տարեկան անձանց գնահատելու համար կարելի է օգտվել d860 ծածկագրի հետևյալ առաջադրանքներից՝<br>**Առաջադրանք 1. Հաշվել գումարը**<br>• Երեխային առաջարկվում է անվանել մետաղադրամները և թղթադրամները:<br>• Առաջարկվում է հաշվել և անվանել մի քանի մետաղադրամից կազմված գումարը:<br>• Առաջարկվում է հաշվել թղթադրամից և մետաղադրամից կազմված գումարը *(պարագաներ «Իրական մետաղադրամներ, թղթադրամներ»)*:<br>**Առաջադրանք 2. Թվաբանական գործողությունների կատարում**<br>Հետազոտվողին, ըստ իր տարիքի, տրվում են թվաբանական վարժություններ, որոնք նա պետք է լուծի՝ օգտվելով նմուշից. Նմուշը հարկավոր է վերցնել դպրոցական ծրագրով նախատեսված վարժություններից (*հավելված 2, աշխատանքային էջ N18*):<br>**Առաջադրանք** 1. Դատարկ վանդակներում թվերը տեղադրիր այնպես, որ բոլոր ուղղություններով ստացվի 15:<br>**Առաջադրանք 2.** Գտի՛ր արտահայտության արժեքը:<br>**Առաջադրանք 3.** Համեմատի՛ր (տեղադրիր >, = կամ < նշանները):<br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br>Հետազոտվողին, ըստ իր տարիքի, տրվում են թվաբանական վարժություններ, որոնք նա պետք է լուծի՝ օգտվելով նմուշից: Նմուշը հարկավոր է վերցնել դպրոցական ծրագրով նախատեսված վարժություններից (*հավելված 2, աշխատանքային էջ N19*):<br>**Առաջադրանք 1.** Գտի՛ր արտահայտության արժեքը:<br>**Առաջադրանք 2.** Համեմատի՛ր (տեղադրիր >, = կամ < նշանները):<br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 18-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1.** Գտի՛ր թվի տոկոսը. օրինակ՝ որքան կկազմի 70-ի 50%-ը, 10%-ը, 30-%-ը:<br>**Առաջադրանք 2.** Ավտոբուսն ունի 45 նստատեղ: Քանի՞ ավտոբուս է պետք 414 մարդ տեղափոխելու համար (*հավելված 2, աշխատանքային էջ N20*) |

| | |
|---|---|
| ՖՄԴ ՈՐԱԿԻՉ | • Անձը կարողանում է հաշվել և հաշվարկներ կատարել, սակայն խնդիրների լուծման համար լրացուցիչ մեկնաբանման և բացատրության կարիք ունի: Բառերով ձևակերպված խնդիրների լուծման ժամանակ անձը կարողանում է օգտվել մաթեմատիկական պարզ սկզբունքներից, արդյունքներն արտահայտել, գրի առնել կամ տալ ստեղնաշարով՝ հուշելու կամ ևս մեկ անգամ խնդիրը մեկնաբանելու դեպքում - **1 թեթև դժվարություն**<br>• Անձը կարողանում է հաշվել և հաշվարկել՝ ձայնային հոսախոսի, հաշվիչի կամ ձայնային համակարգչի հաշվիչի օգնությամբ, ինչպես նաև դիդակտիկ նյութերի առկայության պայմաններում: Դժվարանում է հաշվարկներ կատարել բառերով ձևակերպված խնդիրների շղթաներում՝ նույնիսկ դրանց պարզեցման դեպքում: Կարիք ունի օգնող-օժանդակող սարքերի և սարքավորումների (օրինակ՝ լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված սարքավորումներ, համակարգված տետրեր և գրիչներ, նորագույն տեխնիկաներ և տեխնոլոգիաներ, դիրքավորման, դաստակը և բազուկը ֆիքսող հարմարանքներ և այլն), ինչպես նաև հավելյալ մեթոդների և միջոցների կիրառման - **2 միջին դժվարություն**<br>• Անձը խիստ դժվարանում է պարզ թվաբանական գործողություններ և հաշվարկներ կատարելու մեջ (նույնիսկ մինչև տասը ինքնուրույն և առանց օժանդակ միջոցների հաշվել չի կարող): Կարողանում է հաշվել տրամադրված առարկաները՝ միայն այլ անձանց հուշումների և օգնության դեպքում: Կարիք ունի օգնող-օժանդակող սարքերի, սարքավորումների (օրինակ՝ լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված սարքավորումներ, համակարգված տետրեր և գրիչներ, նորագույն տեխնիկաներ և տեխնոլոգիաներ, դիրքավորման, դաստակը և բազուկը ֆիքսող հարմարանքներ և այլն), ինչպես նաև հատուկ (հավելյալ) մեթոդների և միջոցների կիրառման – **3 ծանր դժվարություն**<br>• Անձն ամբողջական հաշվել և հաշվարկներ կատարել չի կարողանում - **4 լիակատար դժվարություն** |
| ԱՂԲՅՈՒՐԸ | • *https://www.imdproc.am/p/matematika/5-dasaran/tvabanakan-gortsoghutyunner-9598/mnacordov-bazhanum-9603/re-a732a744-97fb* |
| **d 175. Խնդիրներ լուծելը** | *Հարցադրումների կամ իրավիճակների համար լուծումներ գտնելը՝ հարցերի էությունը որոշելու և վերլուծելու, տարբերակներ և լուծումներ կազմելու, լուծումների հնարավոր արդյունքները գնահատելու և ընտրված լուծումը կատարելու միջոցով, ինչպես օրինակ՝ երկու մարդկանց միջև վեճ լուծելիս՝ ներառյալ պարզ և բարդ խնդիրներ* |

| | |
|---|---|
| | լսելու հմտությունները: |
| Հուշող հարցեր | **Գնահատման գործընթացում գնահատել** յուրաքանչյուր տարիքային խմբի համար առաջադրանքի գործունեության շրջանակներում անձի խնդիրները լսելու կարողությունները՝<br>• ուշադրության կայունությունը խաղի գործընթացում,<br>• արդյունավետ գործունեության ինքնուրույն զբաղվելու ունակությունը,<br>• Գործողության մի ձևից մյուսին անցնելու բնույթն ու առանձնահատկությունները,<br>• 2-3 պարզ հաջորդական գործողություններից բաղկացած խաղային հրահանգների լսման գործընթացը.<br>• մեծահասակի հետ համագործակցելու պահանջմունքներն ու առանձնահատկությունները.<br>• առաջադրանքների կատարման բնույթը և ռազմավարությունը.<br>• հուզական հակազդման առանձնահատկությունները.<br>• օգնության դիմելու դրդապատճառն ու հաճախականությունը: |
| **Թեստ/ Առաջադրանք** | **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 3-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1.** Սյուժետային խաղի համար (տուն-տունիկ, բժիշկ-բժիշկ) հարցնել թե ինչ խաղալիքներ պետք կլինեն կամ հանձնարարել ընտրել համապատասխան խաղալիքներ *(պարագաներ՝ «Տնակ-տունիկ, բժիշկ-բժիշկ խաղերի հավաքածու»):*<br>**Առաջադրանք 2.** «Ի՞նչն է սխալ»: Նկարում պատկերված է վագր և զեբր: Վագրին փոխադրված է զեբրի պոչը և՛ հակառակը: Պահանջել գտնել սխալը: Նույնանման առաջադրանքի այլ տարբերակ. պատկերված են շուն, նապաստակ և կատու. Հետազոտողը պահանջում է նրանցից յուրաքանչյուրին «հատկացնել» իր սիրած ուտելիքը *(Հավելված 1, պատկերային նյութ N30):*<br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 6-14 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1.** Նկարները դասավորիր ըստ տրամաբանական հաջորդականության *(Հավելված 1, պատկերային նյութ N31):*<br>**Առաջադրանք 2.** Նայիր նկարներին և պատմիր, թե ինչպես խուսափել նման վտանգավոր իրավիճակներից *(Հավելված 1, պատկերային նյութ N32):*<br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 15-18 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1.** Դուք նամակ եք ստացել, որի մեջ ասվում է. «Կանանց Միջազգային տոն»-ից մեկ ամիս հետո և «Երեխաների պաշտպանության օրվա տոն»-ից երկու ամիս առաջ հյուր եք ունենալու: Մոտավորապես ե՞րբ են գալու Ձեր հյուրերը (Կարելի է թույլատրել օգտվել օրացույցից) *(Հավելված 1, պատկերային նյութ N33.* |

| | |
|---|---|
| | պարագաներ՝ օրացույց)։<br>**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 18-ԻՑ ԲԱՐՁՐ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ**<br>**Առաջադրանք 1.** Հնչում է հեռախոսազանգ. Դուք վերցնում եք հեռախոսը, որի միջից լսվում է. «Ձեզ զանգահարում է Ձեր հոր մայրական/հայրական տատիկի տղայի որդին»։ Ո՞վ էր Ձեզ զանգահարել *(հավելված I, ստիմուլյար նյութ N34)*։<br>**Օգտվել d230 ծածկագրերի համապատասխան առաջադրանքներից և ՖՄԴ որակիչներից, d230 ծածկագրի հուշող հարցերից, ինչպես նաև d860 ծածկագրի առաջադրանքներից և ՖՄԴ որակիչներից՝ յուրաքանչյուրից մեկ առաջադրանքի սահմանում։** |
| **ՖՄԴ ՈՐԱԿԻՉ** | • Անձն ինքնուրույն պարզ հարցադրումների կամ իրավիճակների համար լուծումներ է գտնում և կարողանում է գնահատել դրանց հնարավոր արդյունքները։ Բարդ խնդիրներ լուծելիս պահանջվում է մեծահասակի օգնություն – **1 թեթև դժվարություն**<br>• Անձը ինքնուրույն կարող է գտնել պարզ հարցադրումների կամ իրավիճակների համար լուծումներ, սակայն չի կարողանում գնահատել դրանց հնարավոր արդյունքները, դրա համար պահանջվում է մեծահասակի օգնություն – **2 միջին դժվարություն**<br>• Անձը պարզագույն խնդիրների լուծման համար պահանջում է այլ անձի օգնություն - **3 ծանր դժվարություն**<br>• Անձն անկարող է խնդիրներ լուծել - **4 լիակատար դժվարություն** |
| **ԱՂԲՅՈՒՐԸ** | • *Забрамная С. Д. Психолого-педагогическая диагностика умст-венного развития детей: Учеб. для студентов дефектол. фак. педвузов и ун-тов. — 2-е изд., перераб. — М.: Просвещение: Владос, 1995.— 112 с.— ISBN 5-09-004905-Х.*<br>• *Семаго М.М, Семаго Н.Я. Типология отклоняющегося развития. Модель анализа и ее применения в практической деятельности.- М., ГЕНЕЗИС, 2011. стр. 39-67.*<br>• *Психо-педагогическая диагностика / И.Ю. Левченко,С.Д. Забрамная,Т.А. Добровольская и др. Под ред.И.Ю. Левченко, С.Д. Забрамной. .М., издательский центр <<Академия>>, 2003.* |
| **d 177. Որոշումներ կայացնելը** | *Ընտրություն կատարել մի շարք տարբերակներից, իրագործել ընտրված տարբերակը և գնահատել ընտրված տարբերակի արդյունքները, ինչպես օրինակ՝ որոշակի իր ընտրելը և գնելը, կամ մի շարք առաջադրանքների թվից որոշել կատարել անհրաժեշտ մեկ առաջադրանք և այն կատարել։* |
| **Հուշող հարցեր** | *Այս ծածկագիրը գնահատելու համար հարցեր կազմելու անհրաժեշտություն չկա, անձի հետ զրույցն ու առաջադրանքների կատարումը լիովին բավարար է այն գնահատելու համար և հասկանալու, թե արդյո՞ք անձը կարող է կայացնել որոշումներ։* |

| | |
|---|---|
| Ռեսուրս/ Առաջադրանք | Օգտվել d175, d230 ծածկագրերի համապատասխան առաջադրանքներից և ՖՄԴ որակիչներից, d230 ծածկագրի հուշող հարցերից, ինչպես նաև d860 ծածկագրի առաջադրանքներից և ՖՄԴ որակիչներից: |
| ՖՄԴ ՈՐԱԿԻՉ | • Անձը կարողանում է ընտրություն կատարել մի շարք տարբերակներից, իրագործել ընտրված տարբերակը, սակայն ընտրված տարբերակի արդյունքների գնահատումը կատարում է մեծահասակի հուշումով - **1 թեթև դժվարություն**<br>• Անձը կարողանում է ընտրություն կատարել մի շարք տարբերակներից, սակայն կարողանում է իրագործել ընտրված տարբերակը և գնահատել ընտրված տարբերակի արդյունքները մեծահասակի օգնությամբ - **2 միջին դժվարություն**<br>• Անձը մի շարք տարբերակներից ընտրությունը կատարում է միայն մեծահասակի օգնությամբ, սակայն անկարող է իրագործել ընտրված տարբերակը և գնահատել ընտրված տարբերակի արդյունքները - **3 ծանր դժվարություն**<br>• Անձը ամբողջովին անկարող է որոշում կայացնել - **4 լիակատար դժվարություն** |

## ԱՀԿ ՖՄԴ «d2» ծածկագրեր՝ Ընդհանուր առաջադրանքներ և պահանջներ

| d210<br>Առանձին առաջադրանքներ կատարելը |
|---|
| Առանձին առաջադրանքի մտավոր և ֆիզիկական բաղադրիչներին առնչվող պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ կատարելը, ինչպես օրինակ՝ առաջադրանքի կատարումը սկսելը, ժամանակի, տարածության և առաջադրանքի համար նախատեսվող նյութերի օգտագործումը կազմակերպելը, առաջադրանքի կատարման ժամանակը սահմանելը և առաջադրանքը կատարելը, ավարտելը և դրա արդյունքներն ամրապնդելը: |

| Տարիքային խումբ | Գործիք | Առաջադրանք | ՖՄԴ որակիչ | Անհրաժեշտ պարագաներ |
|---|---|---|---|---|
| 3-5 տարեկաններ | | Այս ծածկագրի գնահատման ժամանակ ուշադրություն դարձնել հետևյալ ծածկագրերի 3-5 տարեկանների համար նախատեսված առաջադրանքներին՝<br>• d110 Դիտել<br>• d310 Հաղորդակցվելիս բանավոր խոսքը կամ հաղորդագրություններն ընկալելը<br>• d440 - Դաստակի նուրբ շարժումներ կատարելը | Բոլոր նշված երեք ծածկագրերի որակիչների համրագումարի միջինացված արդյունքը դուրս է բերում ծածկագրի վերջնական ՖՄԴ որակիչը:<br>Օրինակ՝<br>*/d110/3 + /d310/2 + /d440/1 = 6/3=2*<br>Վերջնական ՖՄԴ որակիչը *d* 201՝ 2 | |

| Տարիքային խումբ | Գործիք | Առաջադրանք | ՖՄԳ որակիչ | Անհրաժեշտ պարագաներ |
|---|---|---|---|---|
| 6-14,<br>15-18,<br>18 +<br>տարեկաններ | **Համակարգային շարժումների գնահատման թեստ Bruininks-Oseretsky Test of Motor Proficiency (BOT™-2)**<br><br>*"Կարող է կիրառվել նշված տարիքային խմբերի արժանահավատությունների բոլոր փուլերի գնահատման ժամանակ, բացառությամբ՝ վերադարձման:*<br>*"Գնահատող անձը միշտ առաջինը պետք է ցույց տա թե ինչպես պետք է իրականացվեն նշված առաջադրանքները, ապա խնդրի գնահատվող անձին կրկնել*<br><br>*Աղբյուր՝*<br>**https://www.scribd.com/document/394037621/Bot2-Manual** | **Ֆիզիկական բաղադրիչներ**<br>Գնահատվող անձին առաջարկվում է կատարել հետևյալ առաջադրանքները՝<br>1. Մետաղադրամը մեկ ձեռքից փոխանցել մյուս ձեռքին և դնել տուփի մեջ:<br>2. Կապույտ և կարմիր քարտերը տարանջատել միմյանցից և դասավորել երկու շարքով՝ մեկ ձեռքի օգնությամբ:<br>3. Խորանարդիկները անցկացնել թելի վրայով:<br>4. Գնդակը երկու ձեռքով նետել գետնին և բռնել նույն կերպով՝ երկու ձեռքով:<br>5. Մեկ ձեռքով բռնել թուղթը, մյուս ձեռքով նկարել շրջանը: | 0 Անձը կարողանում է կատարել բոլոր առաջադրանքները ինքնուրույն:<br>1 Անձը բոլոր 5 առաջադրանքները կատարում է ինքնուրույն, բայց ավելի դանդաղ, քան սովորաբար. կարիք ունի հուշման կամ վերահսկողության:<br>2 Անձը 5 առաջադրանքներից կատարում է առնվազն 3-ից 4-ը, կարիք ունի որոշակի աջակցության համարժեքված պարագայի/աջակցող սարքի առկայության, կամ այլ անձի մասնակի աջակցության /50-75%-ը/:<br>3 Անձը 5 առաջադրանքներից կատարում է առնվազն 1-2 ը, միայն այլ անձանց օգնությամբ:<br>4 Անձը առհասարակ չի կարողանում կատարել առաջադրանքները: | • Մետաղադրամ<br>• Քարտեր՝ կապույտ և կարմիր գույների<br>• Խորանարդ անցքով և թել<br>• Թղթի վրա նկարած շրջանակ<br><br>*Հավելված 3* |
| | | **Ճանաչողական հմտություններ**<br>Ճանաչողական հմտությունների գնահատման ժամանակ ուշադրություն դարձնել հետևյալ ծածկագրերի 6-ից բարձր տարեկանների համար նախատեսված առաջադրանքներին՝<br>• d110<br>• d160<br>• d163 | Բոլոր նշված երեք ծածկագրերի որակիչների հանրագումարի միջինացված արդյունքը դուրս է բերում ծածկագրի վերջնական ՖՄԳ որակիչը:<br>օրինակ<br>/d110/3 +/d160/2 +/d163/ 1 = 6/3=2<br>Վերջնական ՖՄԳ որակիչը d 210՝ 2 | |

| d220<br>Համալիր առաջադրանքներ կատարելը |
|---|
| Հերթականությամբ կամ միաժամանակ պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ կատարելը՝ որպես համալիր, ինտեգրված և բաղադրյալ առաջադրանքների մասեր: |

| Տարիքային խումբ | Գործիք | Առաջադրանք | ՖԱՄ որակիչ | Անհրաժեշտ պարագաներ |
|---|---|---|---|---|
| 3-5 տարեկաններ | | Այս ծածկագրի գնահատման ժամանակ ուշադրություն դարձնել հետևյալ ծածկագրերի 3-5 տարեկանների համար նախատեսված առաջադրանքներին՝<br>1. d110 Դիտել<br>2. d310 Հաղորդակցվելիս բանավոր խոսքը կամ հաղորդագրություն-ները ընկալելը<br>3. d440 Դաստակի նուրբ շարժումներ կատարելը | Բոլոր նշված երեք ծածկագրերի որակիչների հանրագումարի միջինացված արդյունքը դառնում է տվյալ ծածկագրի վերջնական որակիչը:<br><br>օրինակ *3 /d110/+2 /d310/ +1 /d440/ 6/3=2*<br>*d 220 -ի որակիչը կլինի 2* | |

| Տարիքային խումբ | Գործիք | Առաջադրանք | ՖՄԳ որակիչ | Անհրաժեշտ պարագաներ |
| --- | --- | --- | --- | --- |
| 6-14,<br>15-18,<br>18 + տարեկաններ | *Գնահատող անձը միշտ առաջինը պետք է ցույց տա թե ինչպես պետք է իրականացվեն նշված առաջադրանքները, ապա խնդրի գնահատվող անձին կրկնել:<br><br>* Կարող է կիրառվել նշված տարիքային խմբերի բոլոր կենտրոնների արձանագրությունների գնահատման ժամանակ, բացառությամբ տեսողական: | **Ֆիզիկական հմտություններ**<br>*Գնահատվող անձին առաջարկվում է կատարել հետևյալ առաջադրանքները՝*<br>1. Ուշադրություն դարձնել d450 ծածկագրի թեստ 3. Կետ՝ 70. Կանգնած դիրք՝ քայլել առաջ 10 քայլ, կանգ առնել, շրջվել 180° և վերադառնալ:<br>2. Կանգնած/նստած դիրքից կռանալ և բարձրացնել գետնին դրված ծանրոցը:<br>3. Արկղից վերցնել գնդակը, բարձրացնել վերև, փոխանցել մյուս ձեռքին և հետո դնել սեղանին:<br>4. Մեկ բաժակից ջուրը դատարկել մյուս բաժակի մեջ:<br>5. Սեղանի վրա դրված երեք խաղաքարերը դասավորել իրար վրա, ապա հետ դասավորել: | 0 Անձը կարողանում է կատարել բոլոր առաջադրանքները ինքնուրույն:<br>1 Անձը բոլոր 5 առաջադրանքները կատարում է ինքնուրույն, բայց ավելի դանդաղ, քան սովորաբար, կարիք ունի հուշման կամ վերահսկողության:<br>2 Անձը 5 առաջադրանքներից կատարում է առնվազն 3-ից 4-ը, կարիք ունի որոշակի աջակցության հարմարեցված պարագայի/աջակցող սարքի առկայության, կամ այլ անձի մասնակի աջակցության /50-75%-ը/:<br>3 Անձը 5 առաջադրանքներից կատարում է առնվազն 1-2 ը, միայն այլ անձանց օգնությամբ:<br>4 Անձը առհասարակ չի կարողանում կատարել առաջադրանքները: | Ծանրոց<br><br>Բաժակ<br><br>Խաղաքարեր /3 հատ/ |
| | | **Ճանաչողական հմտություններ**<br>Այս ծածկագրի գնահատման ժամանակ ուշադրություն դարձնել հետևյալ ծածկագրերի առաջադրանքներին՝<br>1. d160 Ուշադրությունը կենտրոնացնել:<br>2. d163 Մտածել<br>3 d175 Խնդիրներ լուծել | Բոլոր նշված երեք ծածկագրերի որակիչների հանրագումարի միջինացված արդյունքը դուրս է բերում տվյալ ծածկագրի վերջնական որակիչը:<br>օրինակ 3 /d110/+2 /d310/ +1 /d440/ = 6/3=2<br>*d 220 -ի որակիչը կլինի 2* | |

**d230**

**Առօրյա կյանքը կազմակերպել**

Պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ իրականացնելը՝ առօրյա կյանքը կամ պարտականությունները պլանավորելու, կառավարելու և կատարելու համար, ինչպես օրինակ՝ օրվա ընթացքում ժամանակը պլանավորելը և առանձին գործողությունների համար ծրագրեր կազմելը:

| Տարիքային խումբ | Գործիք | Առաջադրանք | ՖՄԴ որակիչ | Անհրաժեշտ պայմաններ |
|---|---|---|---|---|
| 6-14,<br>15-18,<br>18 +<br>Տարեկաններ* | | **Ֆիզիկական հմտություններ**<br>Այս ծածկագրի գնահատման ժամանակ ուշադրություն դարձնել հետևյալ ծածկագրերի որակիչներին՝<br>1. d160 Ուշադրությունը կենտրոնացնել<br>2. d450 Քայլել<br>3. d520 Մարմնի խնամք<br>4. d640 Տնային գործեր անել<br>5. d860 Տնտեսական գործարքներ<br>6. d910 Համայնքային կյանք | Բոլոր նշված ծածկագրերի որակիչների հանրագումարի միջինացված արդյունքը դառնում է քննվող տվյալ ծածկագրի վերջնական ՖՄԴ որակիչը: | |
| • *Անձի փոքր տարիքային խմբերի համար ծածկագիրը չի* | | **Հուշող հարցեր**<br>*1. Երբ առավոտյան արթնանում եք գիտե՞ք, թե ինչ պետք է անեք:*<br>*2. Կարողանո՞ւմ եք արդյոք ինքնուրույն պլանավորել Ձեր* | | |

| Տարիքային խումբ | Գործիք | Առաջադրանք | ՖՄԴ սանդղակ | Անհրաժեշտ պարագաներ |
|---|---|---|---|---|
| գնահատում | | առօրյա գործողությունները. և պարտավորությունները, (օր. հագնվել, լվացվել, ուտել, կարդալ գնումներ և այլն):<br>3. Եթե Ձեզ անհրաժեշտ է օգնություն, ապա ի՞նչ ծավալով, անհրաժե՞շտ է արդյոք այլ անձի ցուցում կամ օգնություն, թե ոչ | | |

## d 240
## Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը

Պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ կատարելն այնպիսի հոգեբանական լարվածություն կառավարելու և վերահսկելու համար, որը պահանջվում է զգալի պարտականությունների, սթրեսային ու ճգնաժամային իրավիճակների և ուշադրությունը շեղելու հետ կապված առաջադրանքներ կատարելիս, ինչպես օրինակ՝ քննություններ հանձնելը, ծանրաբեռնված երթևեկության մեջ փոխադրամիջոց վարելը, հագնվելը, երբ ծնողները շտապեցնում են, առաջադրանքը որոշակի ժամկետում ավարտելը կամ երեխաների մեծ խմբի մասին հոգ տանելը՝ ներառյալ պարտականություններ կատարելը, սթրեսը և ճգնաժամը կառավարելը:

| | |
|---|---|
| Հատուկ հարցեր | |
| Ցուցում/ Առաջադրանք | d240 գնահատումը իրականացվում է d250 կոդի գնահատման մեթոդով: |

| d 250. Սեփական վարքը կառավարելը |
|---|
| Պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ հետևողական կերպով իրականացնելը՝ ի արձագանք նոր իրավիճակների, ինչպես օրինակ՝ գրադարանում լռություն պահպանելը, աշխատավայրում կամ դասարանում պահանջվող վարք դրսևորելը: |

| | |
|---|---|
| Հարցող հարցեր | 1. Ինչպե՞ս եք Ձեզ դրսևորում ձեր համար ոչ սովորական իրավիճակներում կամ անծանոթ անձանց ներկայությամբ:<br>2. Կարողանում եք կառավարել Ձեր զայրույթը կամ հույզերը:<br>3. Ձեզ համար հեշտ է իրավիճակին համապատասխան վարքագիծ ունենալ, թե որևէ շատ եք հուզվում, դժվարանում եք կառավարել Ձեր գործողությունները, կամ ունենում եք այլ անձի օգնության կարիք:<br>Հիշե՛ք. գնահատումը իրականացվում է հաշվի առնելով տարիքին համապատասխան կարողությունները: |
| Թեստ/ Առաջադրանք | 3-5 ՏԱՐԵԿԱՆ, 6-14 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ<br>(Ծնողի, խնամակալի հետ) |

| Առաջադրանք/հարց | Օրինակ | ՖԱԳ որակիչ |
|---|---|---|
| Ընդունում է առօրյայի անսպասելի փոփոխությունները: | | 1. Հիմնականում<br>2. Հաճախ<br>3. Երբեմն մշտապես մերժում է<br>4. Մշտապես մերժում է |
| Ոչ ադեկվատ գործողություններ և բառեր է օգտագործում: | • Ինչպես է իրեն տղան(աղջիկը, մայրիկը) զգում, ինչպես կարող է արձագանքել այդ իրավիճակին: | 1. Հիմնականում:<br>2. Հաճախ<br>3. Հազվադեպ<br>4. Մշտապես ադեկվատ գործողություններ և բառեր է օգտագործում |
| Պահպանում է ինքնակառավարումը մարդաշատ խմբերում: | • Ծնողի, խնամակալի, ուսուցչի հետ:<br>• Դրդիչ/կոնֆլիկտային իրավիճակներ պարունակող նկարների դիտարկում: | 1. Հիմնականում<br>2. Հաճախ<br>3. Երբեմն չի կարողանում պահպանել:<br>4. Չի կարողանում պահպանել: |

| | | |
|---|---|---|
| Փնտրում է, դիմում է մեծահասակի օգնությանը, երբ կոնֆլիկտ է ունենում հասակակցի հետ, հասակակիցներ ուժի գործադրմամբ կոնֆլիկտ: | • Զրույց ծնողի, խնամակալի, ուսուցչի հետ:<br>• Պորտֆոլիոյի, կոնֆլիկտային իրավիճակներ պատկերող նկարների դիտարկում: | 1. Հիմնականում դիմում է:<br>2. Հաճախ դիմում է:<br>3. Գրեթե չի դիմում օգնության խնդրանքով:<br>4. Չի դիմում օգնության խնդրանքով: |
| Ավելի հաճախ խոսք է օգտագործում, քան թե ֆիզիկական ուժ, երբ իրեն զայրացնում են: | | 1. Հիմնականում պատասխանում է<br>2. Հաճախ<br>3. Պատասխանում է ժամանակ առ ժամանակ:<br>4. Չի կարողանում պատասխանել |

### 15-18 ՏԱՐԵԿԱՆ, 18+ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*(Զրույց ծնողի, խնամակալի, դաստիարակի հետ, պորտֆոլիոյի իրավիճակների դիտարկում: )*

| Առաջադրանք/հարց | Օրինակ | ՖՄԴ որակիչ |
|---|---|---|
| Կառավարում է ֆրուստրացիան, որը կապված է առաջադրանքի կամ գործողության կատարման դժվարության հետ: | | 1. Հիմնականում<br>2. Հաճախ<br>3. Գրեթե չի կարողանում կառավարել լարվածությունը:<br>4. Չի կարողանում կառավարել լարվածությունը: |
| Ընտրում, հարմարվում է հասարակական նորմերին: | • Ինչպիսի՞ համընդհանուր կանոններ գիտես:<br>• Որ կանոններին [1] պետք է պահպանել:<br>• Որ կանոնը չարժե պահպանել:<br><br>Փողոցն անցնել, հերթ կանգնել, բարևել դիմացինին, | 1. Ընտրում է նվազագույնը 2 համընդհանուր կանոն, որոնք իր համար ընդունելի են:<br>2. Ընտրում է նվազագույնը 1 համընդհանուր կանոն, որն իր համար ընդունելի է:<br>3. Ընտրում է, հարմարվում է այն կանոնների հետ, որոնք առաջարկվում են խնամակալի կամ հեղինակություն ունեցող մարդու կողմից:<br>4. Չի ընտրում, հարմարվում համընդհանուր կանոններին: |

| | | | |
|---|---|---|---|
| | Ընդունում է առաջարկություններ և կարծիքներ իր սխալների վերաբերյալ: | • Հիշի՛ր մի դեպք, երբ ինչ-որ բան սխալ արեցիր:<br>• Մեծերից(ուսուցիչ, ընկեր, խնամակալ) ի՞նչ ասացին:<br>• Դրանից հետո՝ ի՞նչ որոշեցիր:<br>• Հաջորդ անգամ, նմանատիպ իրավիճակում, ի՞նչ արեցիր: | 1. Հանգիստ ընդունում է իր սխալների վերաբերյալ այլոց կարծիքները և փորձում է հաջորդ անգամ՝ նմանատիպ իրավիճակում այն կիրառել<br>2. Հանգիստ է ընդունում իր արարքների, սխալների վերաբերյալ կարծիքները և խուսափելով հուզման արդյունքում փոխում է իր վարքագիծը, գործելու ձևը:<br>3. Հանգիստ է ընդունում իր արարքների, սխալների վերաբերյալ կարծիքներ, եթե այն շատ զգուշությամբ է ասվում:<br>4. Չի ընդունում իր արարքների, գործողությունների վերաբերյալ առաջարկություն, քննադատություն: |
| | Գիտի և հարգում է մյուսների իրավունքները: | • Դու ի՞նչ իրավունքներ ունես:<br>• Այլ մարդիկ ի՞նչ իրավունքներ ունեն:<br>• Գիշեր է, բայց դու ուզում ես բարձր երաժշտություն լսել:<br>• Դուք ուզում եք խորոված անել, բայց փայտ չունեք, իսկ Ձեր հարևանը ունի, ի՞նչ անենք: | 1. Հարգում է ուրիշ ունեցվածքը, անձնական տարածքը, հանգստի իրավունքը:<br>2. Հարգում է ուրիշ ունեցվածքը, անձնական տարածքը:<br>3. Հարցնում է, նախքան ուրիշի իրերն օգտագործելը:<br>4. Թույլտվություն չի հարցնում ուրիշի իրերը, տարածքը, անդորրը խախտելիս: |
| ԱՂԲՅՈՒՐԸ՝ | *SFA. School function Assessment, pg. 135*<br>*AFLS Independent Living skills Assessment protocol. pg. 58-62*<br>*AFLS. Basic Living Skills Assessment protocol. pg. 3, 5* | | |

# ԱՀԿ ՖՄԴ «d3» ծածկագրեր՝ Հաղորդակցությունը

Մեթոդական ուղեցույցի այս հատվածում ներկայացված են «d3» ծածկագրերի գնահատման համար կիրառվող առաջադրանքները, հարցաթերթերը, հուշող հարցերը՝ յուրաքանչյուր տարիքային խմբին համապատասխան, ներկայացված են նաև անհրաժեշտ պարագաներ և գնահատման գործընթացին վերաբերող այլ մանրամասներ:

- Յուրաքանչյուր ծածկագիր ունի առաջադրանքներ կամ հուշող հարցեր, դրանք վեցն են:
- Յուրաքանչյուր 6 առաջադրանքից առաջին չորսը (1,2,3,4) վերաբերում են նշված տարիքային խմբի նվազագույն շեմին, իսկ հաջորդ չորսը՝ (3,4,5,6) առավելագույն շեմին:
- Առաջադրանքներից յուրաքանչյուրը պարգևատրվում է 1 միավոր, որոնց հանրագումարի արդյունքում ստացվում է 4 միավոր, վերջինս էլ համապատասխանաբար վերածվում է որակչի:
- Տրված 4 առաջադրանքների կատարման դեպքում, դուրս է բերվում 4 միավոր, որը համապատասխանում է 0 որակչին (ոչ մի դժվարություն):
- Տրված 3 առաջադրանքների կատարման դեպքում, դուրս է բերվում 3 միավոր, որը համապատասխանում է 1 որակչին (թեթև դժվարություն):
- Տրված 2 առաջադրանքների կատարման դեպքում, դուրս է բերվում 2 միավոր, որը համապատասխանում է 2 որակչին (միջին դժվարություն):
- Տրված 1 առաջադրանքի կատարման դեպքում, դուրս է բերվում 1 միավոր, որը համապատասխանում է 3 որակչին (ծանր դժվարություն):
- Տրված ոչ մի առաջադրանքի կատարման դեպքում, դուրս է բերվում 0 միավոր, որը համապատասխանում է 4 որակչին (լիակատար դժվարություն).
- Յուրաքանչյուր ծածկագրի առաջադրանքները կազմելիս հաշվի են առնվել մասնավոր դեպքերը, որոնք գրված են յուրաքանչյուր ծածկագրի նշումներ բաժնում՝ «*» նշանից հետո:

■ - սույն գույնով նշումները նշանակում են, որ տվյալ ծածկագիրը ներառված չէ տվյալ տարիքային խմբում

| | |
|---|---|
| d310<br>Հաղորդակցվելիս բանավոր խոսքը կամ | *Բանավոր խոսքի բառացի /ուղիղ/ և ենթադրվող /փոխաբերական/ իմաստները ընկալելը, ինչպես օրինակ՝ հասկանալը, որ հայտարարությունը փաստ է հաստատում կամ այն պատկերավոր արտահայտություն է, ինչպես օրինակ՝ բանավոր խոսքին, տեղեկատվություններին արձագանքելը և դրանց ընկալումը տարիքին համապատասխան:* |

| հաղորդագրությունների ընկալումը | |
|---|---|
| d310.1<br>Թեթև դժվարություն | Անձը հասկանում է իրեն ուղղված խոսքը, դժվարանում է վերացական մտքեր, երկիմաստ, փոխաբերական իմաստով արտահայտություններ ընկալելիս: |
| d310.2<br>Միջին դժվարություն | Անձը դժվարանում է գործողությունների կամ բառերի միջոցով համապատասխան արձագանքել (երկու-երեք բառից կազմված) այնպիսի պարզ բանավոր հաղորդագրությունների, ինչպիսիք են խնդրանքները (օրինակ՝ «տու՛ր ինձ») կամ հրահանգները (օրինակ՝ «ո՛չ», «արի՛ այստեղ»): Հասկանում է միայն պարզ խոսքը՝ այն էլ դանդաղ խոսելիս: Բանավոր խոսքի ընկալման և դրան համապատասխան արձագանք ունենալու համար անձը երբեմն կարող է կարիք ունենալ օժանդակ և աջակցող սարքերի և սարքավորումների /օրինակ՝ լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված սարքավորումներ, այլընտրանքային հաղորդակցման սարքավորումներ, մեթոդներ և միջոցներ, հենակներ, քայլակներ, սայլակներ և այլն/: |
| d310.3<br>Ծանր դժվարություն | Անձը հասկանում է միայն իրեն ծանոթ մարդկանց կողմից տրված հրահանգները՝ մեկ-երկու բառով, շատ պարզ կերպով արձագանքում է մարդու ձայնին, ինչը կարող է արտահայտվել է շնչառության ձևի փոփոխություններով, մարմնի զգալի կամ թույլ շարժումներով: Ֆիզիկական ուղղորդման *աջակցման* կարիք է զգացվում (ձեռքը բռնել և իր ձեռքով վերցնել տալով իրը, կամ ձեռքով ցույց տալ, թե ուր պետք է գա կամ գնա անձը): *Աջակցման* կարիք ունի այլ անձի, օժանդակ և աջակցող սարքերի և սարքավորումների /օրինակ՝ լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված սարքավորումներ, այլընտրանքային հաղորդակցման սարքավորումներ, մեթոդներ և միջոցներ, հենակներ, քայլակներ, սայլակներ և այլն/: |
| d310.4 Լիակատար դժվարություն | Անձը բոլորովին անկարող է ընկալել, հասկանալ մյուսների բանավոր խոսքը և արձագանքել դրանց: |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 3 – 5 տարեկան | 1.Գտի՛ր և ինձ տուր գնդակը, մատիտը, մեքենան: | - | 1.Վարսավիրի, նավի, ինքնաթիռի, բժշկի, խոհարարի, ուսուցչի, | *«Ցույց տուր» հրահանգը տրվում է [illegible] դեպքում, երբ անձը [illegible] |

| Տարիքային և խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | 2. Գնդակը դիր սեղանի տակ, մատիտը դիր արկղի մեջ, մեքենան դիր պահարանի վրա:<br>3. Առաջարկվող նկարներից ցույց տուր նկված ասա ո՞վ է պատկերված (վարսավիր):<br>4. Առաջարկվող նկարներից ցույց տուր նկված ասա ինչն է թռչում, ինչն է լողում (ինքնաթիռ, նավ).<br>5 Ցույց տուր նկված ասա ի՞նչ է անում վարսավիրը:<br>6. Առաջարկվող նկարներից տուր նկված ասա այլ մասնագիտություններ: | | պատկերներով նկարներ:<br>2. Գնդակ, մատիտ, մեքենա, արկղ: | ունի խոսելու որևէ դժվարություն: |
| 6 – 14 տարեկան | 1. Եթե բնություն նկարես՝ ինչ գույնի մատիտներ կընտրես:<br>2. Եթե հասնես դպրոց ու պարզվի, որ ուշացել ես, ինչպե՞ս կվարվես:<br>3. Պատկերացրու տան կողքի այգում զբոսնում ես և տեսնում ես, թե ինչպես են վիճում հասակակիցներդ, ինչպե՞ս կվարվես:<br>4. Գալիս ես տուն և տեսնում, որ տան դուռը բաց է: Ինչպե՞ս կվարվես:<br>5. Պատկերացրու պատուհանից տեսնում ես, որ դրսում հրդեհ է: Ինչպե՞ս կվարվես:<br>6. Եթե բացես ջրի ծորակը և այն կոտրվի՝ ինչպե՞ս կվարվես: | | | *Եթե անձը խոսքով մեկնաբանելիս ունի որևէ դժվարություն՝ անձին առաջարկվում է գրելով կամ հաղորդակցման այլընտրանքային միջոցներով մեկնաբանել: |
| 15 – 18 տարեկան | 1. Եթե նկատեք, որ տանը գազի արտահոսք կա՝ ինչպե՞ս կվարվեք: | 1. Ինչպե՞ս է անձը ընկալում և արձագանքում վտանգավոր | - | *Տվյալ ծանրության [illegible] տարիքային խմբի |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հաջորդ հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
| --- | --- | --- | --- | --- |
| | 2. Եթե զգաք, որ երկրաշարժ է՝ ինչպե՞ս կվարվեք: | հանձնաժողովի կողմից բարձրաձայնված պարզ հարցերին (օրինակ՝ ի՞նչ գանգատներ ունեք): 2. Ինչպե՞ս է անձը ընկալում և արձագանքում գնահատող հանձնաժողովի կողմից բարձրաձայնվող բարդ հարցերին (օրինակ՝ ի՞նչ դեղորայք եք ընդունում, օրվա ո՞ր ժամերին): 3. Ինչպե՞ս է գնահատվող անձը ընկալում և արձագանքում այն հարցերին, որոնք պահանջում են պատճառահետևանքային կապեր: (Օրինակ՝ Ինչպիսի՞ փոփոխություններ եք նկատում x-ից հետո): 4. Ինչպե՞ս է անձը ընկալում և արձագանքում իրավիճակին համապատասխան բարձրաձայնված հումորային արտահայտություններին: 5. Ինչպե՞ս է անձը ընկալում և արձագանքում գնահատող հանձնաժողովի կողմից բարձրաձայնված փոխաբերական իմաստ ունեցող պարզ արտահայտություններին: 6. Ինչպե՞ս է անձը ընկալում և արձագանքում գնահատող հանձնաժողովի կողմից բարձրաձայնված փոխաբերական | | գնահատումը իրականացվում է գնահատող մասնագետի դիտարկման ու գնահատման արդյունքում: * Եթե պասիվ դիտարկման արդյունքը չի բավարարում գնահատման պահանջներին, ապա գնահատող մասնագետը կարող է օգտվել նաև «Առաջադրանքներ» բաժնում ներառված առաջադրանքներից որևէ մեկից: * «x» նիշը ենթադրում է տվյալ իրավիճակին համապատասխան հարցադրում: * Եթե անձը չունի խոսք կամ ունի խոսելու որևէ դժվարություն, ապա անձին առաջարկվում է մեկնաբանելիս կամ հարցին պատասխանելիս կիրառել ոչ խոսքային միջոցներ/ մեթոդներ: |

| Տարիքային և խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | | իմաստ ունեցող բարդ արտահայտություններին: | | |
| 18 + տարեկան | - | Տե՛ս 15-18 տարեկանների համար նախատեսված *3, 4, 5, 6* հուշող հարցերը: | - | * Եթե անձը չունի խոսք կամ ունի խոսելու որևէ դժվարություն, ապա անձին առաջարկվում է մեկնաբանելիս կամ հարցին պատասխանելիս կիրառել ոչ խոսքային միջոցներ/ մեթոդներ: |

| | |
|---|---|
| **d 315.** **Հաղորդակցվելիս ոչ վերբալ հաղորդագրություններ ընկալելը** | ***Ժեստերով, նշաններով և նկարներով փոխանցվող հաղորդագրությունների ուղիղ և փոխաբերական նշանակությունների ընկալումը, օրինակ՝ հասկանալ այն, որ երեխան հոգնած է, եթե նա տրորում է աչքերը, կամ ազդանշանը զգուշացնում է հրդեհի մասին:*** |
| **d315.1** **Թեթև դժվարություն** | Անձն առանց դժվարությունների ընկալում է ժեստերով, նշաններով և նկարներով փոխանցվող հաղորդագրությունները, սակայն դժվարանում է ընկալել փոխաբերական իմաստ արտահայտող ոչ վերբալ հաղորդագրությունները, օրինակ՝ այն, որ գլխի աջ ու ձախ թափահարումը նշանակում է ոչ թե «ոչ», այլ արտահայտում է դժգոհություն, գլխի վերև ու ներքև թափահարումը՝ ոչ թե «այո», այլ՝ համաձայնություն, գոհունակություն, ժպիտը՝ ոչ թե ուրախություն, այլ՝ համաձայնություն: |
| **d315.2** **Միջին դժվարություն** | Անձը դժվարանում է ընկալել դեմքի արտահայտությամբ, ձեռքի շարժումով կամ նշանով, մարմնի կեցվածքի և մարմնի այլ շարժումների միջոցով փոխանցվող հաղորդագրության իմաստը, սակայն կարողանում է ընկալել նշաններով, նկարներով, լուսանկարներով փոխանցված հաղորդագրությունները: *Երբեմն* կարող է կարիք ունենալ օգնող և աջակցող սարքերի և սարքավորումների /օրինակ՝ լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված սարքավորումներ, այլընտրանքային հաղորդակցման միջոցներ և այլն/: |
| **d315.3** **Ծանր դժվարություն** | Անձն ընկալում է միայն մի քանի պարզ ժեստեր ու նշաններ (օրինակ՝ «ոչ», «այո», «արի»), չի ընկալում ձեռքի շարժումով կամ նշանով տրվող հաղորդագրության իմաստը, դժվարությամբ է ընկալում նկարների և լուսանկարների միջոցով ներկայացվող հաղորդագրությունների իմաստը: *Մշտապես* կարիք ունի օգնող և աջակցող սարքերի և սարքավորումների /օրինակ՝ լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված |

| | |
|---|---|
| | սարքավորումներ, այլընտրանքային հաղորդակցման միջոցներ, մեթոդներ և միջոցներ և այլն/, ինչպես նաև՝ այլ անձի ուղղորդման և աջակցման: |
| d315.4<br>Լիակատար դժվարություն | Հաղորդակցվելիս անձն առհասարակ չի ընկալում ոչ վերբալ տեղեկատվությունը: |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 3 – 5 տարեկան | 1. Ցույց տուր՝ որ նկարում է երեխան ծիծաղում:<br>2. Ցույց տուր՝ որ նկարում է երեխան զարմանում:<br>3. Ցույց տուր՝ որ նկարում է երեխան բղավում:<br>4. Նկարում պատկերված երեխան ինչու՞ է տրորում աչքերը<br>5. Ի՞նչ է նշանակում նկարում պատկերված կարմիր լույսը<br>6. Ցույց տուր, որ նկարում է պատկերված. «Չի թույլատրվում պաղպաղակ ուտել», «չի թույլատրվում լուսանկարել», «չի թույլատրվում հեռախոսով խոսել»: | - | Նկարներ, որտեղ երեխան լացում է, ծիծաղում, տխրում, բղավում, զարմանում, վախենում, հույզերի պիկտոգրամներ, նկարներ, որտեղ պատկերված են նշաններ՝ «չի թույլատրվում պաղպաղակ ուտել», «չի թույլատրվում լուսանկարել», «չի թույլատրվում հեռախոսով խոսել», «կարմիր լույսի ազդանշան», նկար, որտեղ երեխան տրորում է աչքերը: | *Այս ծածկագրի առաջադրանքների կատարման ժամանակ կարող ենք գնահատվող անձին խնդրել կատարել կամ կրկնել տվյալ գործողությունները (շարժում, դիմախաղ, ձայն), որոնցով և կգնահատվի d 335 ծածկագիրը:<br>* Եթե անձը չունի խոսք կամ ունի խոսելու որևէ դժվարություն, ապա անձին առաջարկվում է մեկնաբանելիս կամ հարցին պատասխանելիս կիրառել ոչ խոսքային միջոցներ/ մեթոդներ: |
| 6-14 տարեկան | 1. Ցույց տուր՝ որ նկարում է պատկերված «չի թույլատրվում հեծանիվ վարել» :<br>2. Ցույց տուր, որ նկարում է անձը օգնություն կանչում:<br>3. Ցույց տուր, որ նկարում է պատկերված ճանապարհային հատված, որտեղ առկա է հետիոտնի | - | Նկարներ «չի թույլատրվում հեծանիվ վարել», «անձը օգնություն է կանչում», նկարում պատկերված է ճանապարհային հատված, որտեղ առկա է հետիոտնի անցում, «ելք շենքից», «մուտք շենք», անձանց | *Այս ծածկագրի առաջադրանքների կատարման ժամանակ կարող ենք գնահատվող անձին խնդրել կատարել կամ կրկնել տվյալ գործողությունները (շարժում, դիմախաղ, ձայն), որոնցով և կգնահատվի d 335 ծածկագիրը: |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | անցում:<br>4. Ցույց տուր, որ նկարում է պատկերված «ելք չենքից», «մուտք չենք»:<br>5. Ինչի՞ց կարելի է ենթադրել կամ հասկանալ, որ դիմացինդ ուրախ է կամ զայրացած:<br>6. Մեկնաբանիր նկարներում պատկերված անձանց գործողությունները: | | գործողություններ պատկերող նկարներ: | * Եթե անձը չունի խոսք կամ ունի խոսելու որևէ դժվարություն, ապա անձին առաջարկվում է մեկնաբանելիս կամ հարցին պատասխանելիս կիրառել ոչ խոսքային միջոցներ/ մեթոդներ: |
| 15-18 տարեկան | 1. Ինչպե՞ս ես հասկանում, որ շրջապատող անձից անհանգիստ են կամ լարված:<br>2. Կարողանու՞մ ես դիմացինից հասկանալ այլ անձանց տրամադրությունը: Ինչպե՞ս:<br>3. Քաղաքում/ բնակավայրում ինչպիսի՞ ցուցանակներ ես ճանաչում, որոնք հուշում են մոտակա հիվանդանոցի, թատրոնի, սրճարանի և այլն մասին:<br>4. Կարո՞ղ է փոխվել մարդու ձայնը՝ կախված տրամադրությունից: Ինչպե՞ս:<br>5. Կարելի՞ է մարդու շարժումներից հասկանալ, որ նա շտապում է: Ինչպե՞ս:<br>6. Ինչպիսի՞ ցուցանակներ կան | 1. Ինչպե՞ս է գնահատվող անձը արձագանքում Ձեր ձայնի փոփոխությանը:<br>2. Ինչպե՞ս է գնահատվող անձը արձագանքում գնահատող հանձնաժողովի անդամների դիմախաղի փոփոխություններին:<br>3. Ինչպե՞ս է գնահատվող անձը արձագանքում Ձեր կողմից կիրառվող ժեստերին (օրինակ՝ նստիր այստեղ): | | *Տվյալ ծածկագրի գնահատման բաժնում ներկայացված են 6 առաջադրանքներ, որոնց պատասխանում է գնահատվող անձը:<br>* «Հուշող հարցեր» բաժնում ներկայացված են 3 հարցեր, որոնց գնահատում/ դիտարկում են գնահատող մասնագետները, այն դեպքում, երբ գնահատվող անձը չի պատասխանում ներկայացված 6 առաջադրանքներից ոչ մեկին կամ պատասխանում է միայն մեկին:<br>* Եթե անձը չունի խոսք կամ ունի խոսելու որևէ դժվարություն, ապա անձին առաջարկվում է մեկնաբանելիս կամ հարցին պատասխանելիս կիրառել ոչ խոսքային միջոցներ/ մեթոդներ: |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | քաղաքում/ բնակավայրում, որոնք օգնում են կողմնորոշվել տեղաշարժվելիս: | | | |
| 18+ տարեկան | Տե՛ս 15-18 տարեկանների համար նախատեսված *3, 4, 5, 6* առաջադրանքները: | - | Տե՛ս 15-18 տարեկանների համար նախատեսված *3, 4, 5, 6* առաջադրանքների անհրաժեշտ պարագաների ցանկը: | * Եթե անձը չունի խոսք կամ ունի խոսքի որևէ դժվարություն, ապա անձին առաջարկվում է մեկնաբանելիս կամ հարցին պատասխանելիս կիրառել ոչ խոսքային միջոցներ/ մեթոդներ: |

| | |
|---|---|
| d 325<br>Հաղորդակցվելիս գրավոր տեղեկատվություն ընկալելը | ***Գրավոր խոսքի (այդ թվում՝ Բրայլի այբուբենի) միջոցով փոխանցվող տեղեկատվության ուղիղ և փոխաբերական իմաստների ընկալումը, ինչպես օրինակ՝ օրաթերթում քաղաքական իրադարձություններին հետևելը կամ կրոնական բնույթի տեքստի էությունը հասկանալը:*** |
| **d325.1**<br>**Թեթև դժվարություն** | Անձն առանց դժվարությունների ընկալում է ձեռագիր գրված և տպագրված բնագիրը (այդ թվում՝ Բրայլի այբուբենով գրված), սակայն դժվարանում է ընկալել փոխաբերական իմաստ արտահայտող հաղորդագրությունները կամ բարդ ստորադասական նախադասություններով ձևակերպված միտքը: |
| **d325.2**<br>**Միջին դժվարություն** | Անձը դժվարանում է ընկալել ձեռագիր գրվածքի միտքը, դանդաղ կարողանում է կարդալ և մեկնաբանել տպագրված բնագրի բովանդակությունը: Բնագիրը կարդալու և ընկալելու համար անձը *երբեմն* կարող է ունենալ աջակցող սարքերի և սարքավորումների /օրինակ՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված սարքավորումներ, այլընտրանքային հաղորդակցման միջոցներ և այլն/ կարիք: |
| **d325.3**<br>**Ծանր դժվարություն** | Անձն ընկալում է միայն տպագրված մի քանի պարզ արտահայտություններ, միտք արտահայտող բառակապակցություններ կամ այնպիսի արտահայտություններ, որոնց հետ առավել հաճախ է առնչվում: Կարդացածը ընկալելու և համապատասխան արձագանքելու համար *մշտապես* կարիք ունի աջակցող սարքերի և սարքավորումների /օրինակ՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված սարքավորումներ, այլընտրանքային հաղորդակցման միջոցներ, մեթոդներ և միջոցներ և այլն/, ինչպես նաև *մշտապես* կարիք ունի այլ անձի ուղղորդման և աջակցման: |
| **d325.4**<br>**Լիակատար դժվարություն** | Հաղորդակցվելիս անձն առհասարակ չի ընկալում գրավոր տեղեկատվությունը: |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 3-5 տարեկան | | | | |
| 6-14 տարեկան | 1. Կարդալ և մեկնաբանել տրված նախադասությունը:<br>***Հին ժամանակներում մրգերը գույն չունեին:***<br>2. Կարդալ և պատասխանել տրված հարցին:<br>***Ամեն գիշեր ի՞նչ ենք տեսնում երկնքում:***<br>3. Կարդալ և գուշակել հանելուկը<br>***Օրը մեկ անգամ***<br>***Գալիս է հուշիկ,***<br>***Ամենուր մթնում***<br>***Աստղով անուշիկ:*** (Պատասխան՝ գիշեր)<br>4. Կարդալ և մեկնաբանել ***«Ո՞ւ քեզ մի՛ գովիր, թող ուրիշները գովեն»*** ասացվածքի իմաստը:<br>5. Կարդալ և կատարել գործողությունները:<br>- ***Բարձրացրեք ձեռքը:***<br>- ***Ցույց տվեք քիթը:***<br>- ***Սեղանից վերցրեք գրիչը:***<br>6. Կարդալ և ներկայացնել բնագրի գլխավոր միտքը:<br>***Անգլիացի գիտնական Ռոբերտ Հուկը մանրադիտակի միջոցով հայտնաբերեց խցանի բջիջները:*** | - | Առաջադրված բնագրերի տպագիր տարբերակներ՝ 12 և 14 տառաչափով, խոշորացույց, Ներկայացված բնագրերը՝ ձեռագիր տպագրությամբ, ինչպես նաև գրված Բրայլի այբուբենով, թուղթ ու գրիչ: | *Եթե գնահատվող անձը չունի խոսք կամ ունի խոսելու որևէ դժվարություն, ապա նա կարող է մեկնաբանել ոչ խոսքային միջոցներով:<br>* 6 տարեկան գնահատվող երեխայի համար տպել ձեռագիրը գնահատելիս հաշվի առնել տառաճանաչության սահմանը: |
| 15-18 տարեկան | 1. Կարդալ և մեկնաբանել տրված նախադասությունը.<br>***Սևից և սպիտակից բացի՝ եգիպտացիները գրելիս ևս մեկ գույն էին օգտագործում:***<br>2. Մեկնաբանել տրված ասացվածքը.<br>***Աղվեսի վկան իր պոչն է:***<br>3. Կարդալ և մեկնաբանել ***«Ո՞ւ քեզ մի՛ գովիր, թող ուրիշները գովեն»*** ասացվածքի իմաստը: | - | Առաջադրված բնագրերի տպագիր տարբերակներ՝ 12 և 14 տառաչափով, խոշորացույց, Ներկայացված բնագրերը՝ ձեռագիր տպագրությամբ, ինչպես | *Եթե գնահատվող անձը չունի խոսք կամ ունի խոսելու որևէ դժվարություն, ապա նա կարող է մեկնաբանել ոչ խոսքային միջոցներով: |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | 4. Կարդալ և կատարել համապատասխան գործողությունները.<br>- ***Բարձրացրեք ձեռքը:***<br>- ***Ցույց տվեք քիթը:***<br>- ***Սեղանից վերցրեք գրիչը:***<br>5. Կարդալ և ներկայացնել բնագրի հիմնական բովանդակությունը:<br>***Գրերի գյուտը. Ոսկեդար***<br>*Մեր ժողովրդի պատմության մեջ մի շատ կարևոր հատված է հինգերորդ դարը, որն անվանում են Ոսկեդար: Հենց այդ դարում տեղի ունեցան վիթխարի նշանակություն ունեցող դեպքեր: Դրանցից առաջինը հայոց գրերի գյուտն էր:*<br>6. Կարդալ և մեկնաբանել տրված բնագիրը.<br>***Հայերի 2-րդ հոդված [illegible] ժամում և Հայաստանի [illegible] գրեթե է ունենալ [illegible]: [illegible] է [illegible] խոսքում [illegible] ապահովվել է ազատ խոսք:*** | | Նաև՝ գրված Բրայլի այբուբենով, թուղթ ու գրիչ: | |
| **18+ տարեկան** | 1. Կարդալ և մեկնաբանել տրված նախադասությունը.<br>***Աշխատողի նպատակն է ներկայացնել ոչ թե իրերի արտաքին կողմը, այլ դրանց ներքին կապակցությունը: Արիստոտել***<br>2. Մեկնաբանել տրված առածը.<br>***Ամեն փայլ ջահոտի չի դառնա, ամեն սար՝ Մասիս:*** | - | Առաջադրված բնագրերի տպագիր տարբերակներ՝ 12 և 14 տառաչափով, խոշորացույց, նկարազարդված նախադասություններ՝ ձեռագրով լուսանկարված, ինչպես | *Եթե գնահատվող անձը չունի խոսք կամ ունի խոսելու որևէ դժվարություն, ապա նա կարող է մեկնաբանել ոչ խոսքային միջոցներով՝ մեթոդներով: |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | 3. Կարդալ և կատարել համապատասխան գործողությունները:<br>- ***Բարձրացրեք ձեռքը:***<br>- ***Ցույց տվեք քիթը:***<br>- ***Սեղանից վերցրեք գրիչը:***<br>4. Կարդալ և մեկնաբանել ***«Դու քեզ մի՛ գովիր, թող ուրիշները գովեն»*** ասացվածքի իմաստը:<br>5. Կարդալ և ներկայացնել բնագրի հիմնական բովանդակությունը:<br>***Գրերի գյուտը. Ոսկեդար***<br>*Մեր ժողովրդի պատմության մեջ մի շատ կարևոր հատված է հինգերորդ դարը, որն անվանում են Ոսկեդար: Հենց այդ դարում տեղի ունեցան միջազգային նշանակություն ունեցող դեպքեր: Դրանցից առաջինը հայոց գրերի գյուտն էր:*<br>6. Կարդալ և մեկնաբանել տրված բնագիրը.<br>*Հուլիսի 2-ին Խաղաղ օվկիանոսի հարավային մասում և Հարավային Ամերիկայում պետք է ունեցել արևի խավարում: Բնակչությունը տեսել է արևի ամբողջական խավարման տեսարանը, այսինքն՝ լուսինն ամբողջությամբ արգելափակել է արևի լույսը:* | | նաև՝ գրված Բրայլի այբուբենով, թուղթ ու գրիչ: | |

| | |
|---|---|
| **d 330. Խոսելը** | ***Բառերի, արտահայտությունների կամ բանավոր խոսքի ավելի երկար հատվածների արտաբերումը, ուղիղ և փոխաբերական իմաստներով պարզ և բարդ հաղորդագրություններ կազմելը:*** |
| **d330.1**<br>**Թեթև դժվարություն** | Խոսքը հասկանալի է բոլորին և խոչընդոտ չի հանդիսանում այլ անձանց հետ հաղորդակցվելու համար: Երբեմն առկա են նաև փոխաբերական իմաստ արտահայտող բառեր, բառակապակցություններ, սակայն՝ կարճ, |

| | |
|---|---|
| | խանգարված լինել խոսքի տեմպը և ռիթմը, կարող է դիտվել կակազություն, կմկմոց, կանգառներ, արագախոսություն (տախիլալիա) կամ դանդաղախոսություն (բրադիլալիա): Կարող են դիտվել առանձին հնչյունների կամ հնչյունախմբերի արտաբերման դժվարություններ (փոխարինումներ, տեղափոխումներ, բացթողումներ, շփոթումներ)՝ թլվատություն, սակայն ուշադրությունը կենտրոնացնելու կամ կրկնելու դեպքում այդ խնդիրները չեն դրսևորվում: Կարող է դիտվել ձայնի ռնգային երանգ, խռպոտություն, մոնոտոնություն, որը սակայն չի խոչընդոտում շրջապատի հետ հաղորդակցվելու գործընթացին: |
| **d330.2**<br>**Միջին դժվարություն** | Անձը խոսում է պարզ նախադասություններով, դժվարանում է կազմել և արտաբերել ավելի երկար պարբերություններ: Բառապաշարը իր ծավալով փոքր է, սակայն այն բավարարում է անձին առօրյայում տարբեր անձանց հետ ազատ հաղորդակցվելիս: Կարող է դիտվել ավտոմատացված խոսք, հնչյունի կամ հնչյունախմբերի արտաբերման դժվարություններ (դիզարթրիա, թլվատություն, ռնգախոսություն), ձայնի փոփոխություն (ռնգային երանգ, խռպոտություն, մոնոտոնություն), հնչյունների, վանկերի, բառերի կրկնություններ (էխոլալիաներ), երբեմն կարող են դիտվել խոսքի արտահայտչական կողմի խանգարումներ: Արտահայտված կերպով կարող է խանգարված լինել խոսքի տեմպը և ռիթմը՝ կակազում է, կմկմում է, արագախոս է կամ դանդաղախոս (տախիլալիա, բրադիլալիա, խոսքային կանգառներ), կարող են դիտվել քերականական, տրամաբանական անհամապատասխանություններ, ընդհանուր առմամբ, կարող է խոսքը դժվարըմբռնելի լինել անծանոթ անձանց համար և հասկանալի լինել միայն ընտանիքի անդամներին, մտերիմներին: Հաճախ կարող է դիտվել շատախոսություն, որը, սակայն տեղեկատվություն չի հաղորդում: Սեփական մտքերը ձևակերպելու և բանավոր շարադրելու համար երբեմն կարող է կարիք ունենալ օգնող և աջակցող հարցերի և հարցադրումների /օրինակ՝ ծավալուն հարցեր և այլն/: |
| **d330.3**<br>**Ծանր դժվարություն** | Անձի բառապաշարը խիստ սահմանափակ է: Բառապաշարում առկա է միայն կենսական անհրաժեշտության մի քանի բառ, կարող են դիտվել ձայնի արտահայտված փոփոխություններ , խոսքը անհասկանալի է կամ դժվարըմբռնելի է նույնիսկ իր ընտանիքի անդամների, մտերիմների համար: Անձը մշտապես կարիք ունի այլ անձի կողմից իր խոսքի մեկնաբանման, ինչպես նաև՝ օգնող և աջակցող հարցերի և հարցադրումների /ծավալուն հարցեր և այլն/: |
| **d330.4**<br>**Լիակատար դժվարություն** | Խոսքը բացակայում է: |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 3-5 տարեկան | 1. Ի՞նչ է սա (Պատասխան՝ գայլ): Ինչպիսի՞ն է (Պատասխան՝ մեծ, գորշ, չար, բարի, խելացի, խորամանկ...): | - | Գայլի մուլյաժ կամ նկար, վայրի կենդանիների մուլյաժներ կամ նկարներ, վայրի կենդանիներների | * Բառով կամ ճշգրիտ նախադասություններով պատասխանած կարող [illegible] |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | 2. Ի՞նչ գիտես գայլի մասին, որտեղ է ապրում, ի՞նչ ձայն է արձակում, արի միասին փորձենք (Պատասխան՝ ապրում է անտառում, ոռնում է «ու, ու, ու...»):<br>3. Ի՞նչ կենդանի է գայլը. վայրի, թե՞ ընտանի (Պատասխան՝ վայրի): Ինչու՞ (Պատասխան՝ որովհետև ապրում է անտառում): Ի՞նչ վայրի կենդանիներ գիտես:<br>4. Արի՛ պատմենք գայլի մասին (ավարտիր նախադասությունը): Սա (*գայլ է*): Գայլը (*գորշ է, խճճված է*): Գայլը ոռնում է (ու. ու, ու...): Գայլը ապրում է (*անտառում*): Գայլը (*վայրի կենդանի է*):<br>5. Պատասխանիր հարցերին.<br>*Ինչպիսի՞ն է ձմեռը:*<br>6. «Մեկն է, շատ են»<br>*Ծառ-...*<br>*Գազար-...* | | ընդհանրական նկար, տիկնիկ, նկար, որում պատկերված է ձմեռ, նկարներ, որոնցում պատկերված են շուն - շներ, գազար - գազարներ: | առաջադրանքի «հերոսը», այն կարող է լինել օրինակ՝ տիկնիկ: ՏԵ՛Ս Հավելված |
| **6-14 տարեկան** | 1. Ավարտե՛լ նախադասությունը<br>*Աշնան ժամանակ ամեն... (ծիտերը, թռչունները, արմատները և այլն):*<br>2. Տրված նկարները դասավորել ըստ տրամաբանական հաջորդականության և պատմել պատմվածքը:<br>3. «Ասա՛ հակառակը»<br>*Պաղպաղակը սառն է, թեյը...(տաք):*<br>4. Կարո՞ղ ես որևէ դեպք պատմել քո կյանքից.<br>5. Սյուժետային նկարի հիման վրա պատմություն կազմել և պատմել:<br>6. Ավարտել տրված առածը:<br>*Չես կարող ասել...:* | - | Սյուժետային նկար, 4 նկարներից կազմված սյուժետային նկար | - |
| **15-18 տարեկան** | 1. Պատմե՛ք Ձեր կյանքի կարևորագույն օրերից մեկի մասին:<br>2. Վերնագրեք այդ օրը: | - | - | - |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | 3. Մանրամասնեք այդ օրվա կարևոր պահերը:<br>4. Փորձեք նկարագրել այդ օրվա մասնակիցներին:<br>5. Նկարագրեք այդ օրվա Ձեր զգացողությունները:<br>6. Եթե հնարավորություն ունենայիք՝ ինչպե՞ս կփոխեիք այդ օրը: | | | |
| 18+ տարեկան | Տե՛ս 15-18 տարեկանների համար նախատեսված 3, 4, 5, 6 առաջադրանքները: | - | - | - |

| | |
|---|---|
| **d 335.**<br>**Ոչ վերբալ հաղորդագրությունների կազմելը** | ***Հաղորդագրության փոխանցման նպատակով ժեստեր, խորհրդանիշներ և նկարներ օգտագործելը, ինչպես օրինակ՝ գլուխը թափահարելը՝ ի նշան անհամաձայնության, կամ նկար, դիագրամ նկարելը՝ փաստ կամ բարդ միտք փոխանցելու նպատակով, այդ թվում՝ ժեստերի լեզու, նշաններ, խորհրդանիշներ, նկարներ և լուսանկարներ օգտագործելը:*** |
| **d335.1**<br>**Թեթև դժվարություն** | Անձը կարողանում է կազմել ոչ վերբալ հաղորդագրություններ ժեստերի լեզվի, նկարների և լուսանկարների օգնությամբ, սակայն դժվարանում է հաղորդագրություններ կազմել նկարելու, խորհրդանիշների միջոցով: |
| **d335.2**<br>**Միջին դժվարություն** | Անձը դժվարանում է նշանների և նկարների օգնությամբ կազմել հաղորդագրություններ, սակայն կարողանում է հաղորդակցվել ժեստերով, դիմախաղի, դաստակի և ձեռքի շարժումների և կեցվածքի դիրքերի (մարմնի լեզվի) միջոցով: *Երբեմն* կարող է կարիք ունենալ օգնող և աջակցող սարքերի և սարքավորումների: |
| **d335.3**<br>**Ծանր դժվարություն** | Անձը դժվարանում է հաղորդակցվել նույնիսկ մի քանի պարզ պատկերների միջոցով, կարողանում է կազմել մեկ պարզ հաղորդագրություն՝ ժեստերով և նշաններով: *Մշտապես* կարիք ունի այլ անձի ուղղորդման և աջակցման, կարող է նաև կարիք ունենալ օգնող և աջակցող սարքերի և սարքավորումների: |
| **d335.4**<br>**Լիակատար դժվարություն** | Անձը առհասարակ չի կարողանում կազմել ոչ վերբալ հաղորդագրություններ: |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 3-5 տարեկան | 1. Նայիր տրված նկարին: Ինչպե՞ս է զարմանում երեխան, փորձիր նմանակել իրեն: | | «Երեխան զարմանում է» գործողություն պատկերող նկար, | * *Այս ենթակարգի գնահատման գործընթացում կարելի է* |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | 2. Տրված նկարներով կազմի՛ր բառակապակցություն:<br>3. Տրված նկարներով կազմիր նախադասություն:<br>4. Շարժումներով ցույց տուր՝ ինչպես են քշում ավտոմեքենան:<br>5. Ցույց տուր, թե ինչպես են զայրանում մարդիկ:<br>6. Ցույց տուր, ինչպես են մարդիկ ուրախանում: | | բառակապակցության սխեմա պարունակող նկար, նախադասության սխեմա պարունակող նկար, «տղան քշում է ավտոմեքենա»: | *լրացուցիչ տեղեկատվության աղբյուր d315 ծածկագրի գնահատման համար:* |
| **6-14 տարեկան** | 1. Վերցրու մատիտը և նկարիր ծաղիկ:<br>2. Ցույց տուր ինչպես ես դու արտահայտում քո բարկությունը:<br>3. Տրված նկարներով կազմիր պատմություն:<br>4. Ի՞նչ շարժումներով կարտահայտես քո վախը:<br>5. Ի՞նչ ձայնով կբնութագրես զարմանքը:<br>6. Տրված պատկերներով փորձիր կազմել քո առօրյայի պատկերը: | - | Թուղթ, մատիտ, հույզեր արտահայտող նկարներ, առօրյան պատկերող նկարների շարք, սյուժետային նկար: | **Այս ծածկագրի գնահատման գործընթացում կարելի է լրացուցիչ տեղեկատվության աղբյուր d315 ծածկագրի գնահատման համար:* |
| **15-18 տարեկան** | - | 1. Կարողանում է արդյոք ոչ խոսքային միջոցներով (դիմախաղ, ժեստեր և այլն) հավելել իր խոսքի բովանդակությունը:<br>2. Կարողանում է արդյոք ձայնի համապատասխան ինտոնացիայով արտահայտել իր | - | ** Տվյալ տարիքային խմբի դեպքում ծածկագիրը գնահատվում է միայն հուշող հարցերի միջոցով, դիտարկվում և գնահատվում է գնահատող մասնագետը:* |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | | զգացմունքները:<br>3. Արդյո՞ք երբեմն նրա ոչ խոսքային վարքը չի համապատասխանում իր խոսքի բովանդակությանը:<br>4. Արդյո՞ք իր դիմախաղը տարբերվում է արտահայտվածությամբ, բազմազանությամբ, ներդաշնակությամբ:<br>5. Կարողանում է արդյոք փոխանցել իր զգացմունքների, հույզերի երանգները՝ կիրառելով ոչ խոսքային տարբեր միջոցներ:<br>6. Կարողանում է արդյոք մարմնի դիրքով ցուցնել իր խոսքի բովանդակությունը: | | |
| 18+ տարեկան | - | Տե՛ս 15-18 տարեկանների համար նախատեսված 3,4, 5, 6 հուշող հարցերը: | - | ** Տվյալ տարիքային խմբի գործառույթը գնահատվում է միայն հուշող հարցերի միջոցով, դիտարկվում և գնահատում է գնահատող մասնագետը:* |

| | |
|---|---|
| **d345<br>Գրավոր հաղորդագրությունների կազմելը** | ***Գրավոր խոսքի միջոցով ուղերձ և փոխաբերական իմաստ ունեցող [illegible] կազմելը, ինչպես օրինակ՝ ընկերոջը նամակ գրելը:*** |

| | |
|---|---|
| **d345.1**<br>**Թեթև դժվարություն** | Անձը կարողանում է գրելու /այդ թվում՝ ստեղնաշարով տպելու/ միջոցով հաղորդել սեփական մտքերը: Երկար պարբերություններ գրելու միջոցով կարող է ներկայացնել իր ցանկությունները, մտքերը, սակայն դրանք կարող են պարունակել արտահայտություններ, որոնք չեն համապատասխանում տվյալ բնագրին: |
| **d345.2**<br>**Միջին դժվարություն** | Անձը կարողանում է գրելու /ստեղնաշարով տպելու/ միջոցով փոխանցել տեղեկատվություն միայն կարճ պարբերությունների կամ նախադասությունների միջոցով, կարող է բաց թողնել բառեր, արտահայտություններ, որոնք դժվարեցնում են անձի կողմից գրված նյութի ընկալումը: *Երբեմն* կարող է օգտագործել գրելու համար նախատեսված հարմարանքներ, կամ *երբեմն* կարիք ունի այլ անձի խոսքային ուղղորդման, որպեսզի օրինակ՝ չկորցնի շարադրանքի միտքը: |
| **d345.3**<br>**Ծանր դժվարություն** | Անձը կարողանում է որոշ բառեր կամ բառակապակցություններ գրելու /ստեղնաշարով տպելու/ միջոցով փոխանցել տեղեկատվություն: *Մշտապես* կարիք ունի հարմարեցումների և/ կամ օգնող, աջակցող սարքերի, սարքավորումների կամ *մշտապես* կարիք ունի այլ անձի օգնության: |
| **d345.4**<br>**Լիակատար դժվարություն** | Անձը բոլորովին անկարող է գրել /ստեղնաշարով տպել/ որևէ տառ կամ խորհրդանիշ: |

| **Տարիքային խումբ** | **Առաջադրանք** | **Հուշող հարցեր** | **Անհրաժեշտ պարագաներ** | **Նշումներ** |
|---|---|---|---|---|
| **3-5 տարեկան** | | | | |
| **6-14 տարեկան** | 1. Գրել անուն, ազգանուն, հայրանուն:<br>2. Ո՞րն է քո սիրելի հեքիաթը/ մուլտֆիլմը:<br>3. Թվիր սիրելի հեքիաթի/ մուլտֆիլմի հերոսներին:<br>4. Տարվա ո՞ր եղանակն ես սիրում:<br>5. Գրելու միջոցով գուշակել տվյալ հանելուկը.<br>*Օրը մեկ անգամ*<br>*Գալիս է հուշիկ,*<br>*Օրը մեկ անգամ* | - | Թուղթ, գրիչ, ստեղնաշարեր, պլանշետ, Բայլի տախտակ, Բրայլի գրիչ, սյուժետային նկար, 2 նկարներից կազմված սյուժետային նկար. | ***6 տարեկան գնահատվող երեխայի համար կիրառել ծանոթագիրը գնահատելիս հաշվի առնել պատրաստվածության աստիճանը:*** |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | *Ասպրով անուշիկ:*<br>6. Գրել այսօրվա ամիսը, ամսաթիվը, տարեթիվը: | | | |
| **15-18 տարեկան** | 1. Գրել անուն, ազգանուն, հայրանուն<br>2. Բնակության հասցե:<br>3. Մարդկային ո՞ր որակն եք ավելի շատ գնահատում:<br>4. Գրել Ձեր ցանկության երկտող:<br>5. Գրելու միջոցով մեկնաբանել տրված ասացվածքը՝<br>*«Ուշ լինի, նաշ լինի»*<br>6. Գրել այսօրվա ամիս, ամսաթիվ, տարեթիվ: | - | Թուղթ, գրիչ, սեղանաշարեր, պլանշետ,Բրայլի տախտակ, Բրայլի գրիչ: | |
| **18+ տարեկան** | Տե՛ս 15-18 տարեկանների համար նախատեսված *1, 2, 3, 5* առաջադրանքները: | - | Տե՛ս 15-18 տարեկանների համար նախատեսված *1, 2, 3, 5* առաջադրանքների անհրաժեշտ պարագաների ցանկը: | - |

| | |
|---|---|
| **d350**<br>**Զրույց - Հաղորդակցություն** | ***Մտքերի ու գաղափարների փոխանակումը սկսելը, շարունակելը և ավարտելը՝ բանավոր, գրավոր խոսքի, ժեստերի լեզվի կամ լեզվական այլ միջոցների օգնությամբ, ծանոթ կամ անծանոթ մեկ կամ մի քանի անձանց հետ, ֆորմալ կամ ոչ ֆորմալ իրավիճակներում:*** |
| **d350.1**<br>**Թեթև դժվարություն** | Անձը մասնակցում է զրույցին, բայց դժվարանում է առաջինը նախաձեռնություն սկսել կամ ակտիվ մասնակցել դրան, կարող է խանգարված լինել խոսքի սահունությունը, ինչը և սահմանափակում է ակտիվ զրուցելու նրա ցանկությունը: Կարողանում է շարունակել և ավարտել զրույցը, սակայն դժվարանում է նախաձեռնել և սկսել խոսակցություն անծանոթ միջավայրում, անծանոթ մարդկանց հետ: Խոսակցության ընթացքում հարցերին պատասխանելու համար պահանջվում է երկար ժամանակ: Կարող են դիտվել մտքերի միջև տրամաբանական դադարներ: Երբեմն կարող է զրույցի ընթացքում շեղվել, բայց կրկին վերադառնալ զրույցի բուն թեմային: |

| | |
|---|---|
| **d350.2**<br>**Միջին դժվարություն** | Անձը դժվարությամբ է ներգրավվում զրույցի մեջ, կարող է շարունակել զրույցը հարցուպատասխանի ձևով, դժվարանում է նախաձեռնել կամ ավարտել զրույցը: Սովորաբար զրույցում ներգրավվելիս կարող է շեղվել հիմնական թեմայից, սակայն մի քանի հուշումներից և ուղղորդումներից հետո վերադառնալ բուն զրույցին, կարող է զրույցի ընթացքում խոսել երկրորդական երևույթներից, որոնք խոչընդոտում են պահել զրույցի բուն էությունը: Կարող է երբեմն կարիք ունենալ խոսքային և/ կամ ոչ խոսքային ուղղորդումների, աջակցող սարքերի, սարքավորումների, հաղորդակցման այլընտրանքային սարքերի, սարքավորումների, միջոցների և մեթոդների: |
| **d350.3**<br>**Ծանր դժվարություն** | Անձը չի կարողանում սկսել, շարունակել և ավարտել զրույցը կամ երկխոսությունը մեկ կամ մեկից ավելի անձանց հետ, ինչպես օրինակ՝ մասնակցել մարդկանց խմբային փոխանակմանը: Կարող է զրույցի մեջ ներգրավվել միայն մեկ բառով պատասխանելու միջոցով: Կարող է *մշտապես* կարիք ունենալ խոսքային և/ կամ ոչ խոսքային ուղղորդումների, աջակցող սարքերի, սարքավորումների, հաղորդակցման այլընտրանքային սարքերի, սարքավորումների, միջոցների և մեթոդների: |
| **d350.4**<br>**Լիակատար դժվարություն** | Անձն առհասարակ չի կարողանում սկսել, շարունակել և ավարտել զրույցը. զրույցին միայն ներգրավվում է մեկ բառից կազմված պատասխաններ տալով: |

| **Տարիքային խումբ** | **Առաջադրանք** | **Հուշող հարցեր** | **Անհրաժեշտ պարագաներ** | **Նշումներ** |
|---|---|---|---|---|
| **3-5 տարեկան** | 1. Հեքիաթներ սիրու՞մ ես: Ի՞սկ դու գիտես «Պապն ու շաղգամը» հեքիաթը:<br>2. Ինչի՞ մասին է հեքիաթը: Պապիկին սկզբում ո՞վ եկավ օգնության:<br>3. Արդյո՞ք կարողացան տատիկն ու պապիկը հանել հողից շաղգամը: Ինչու՞:<br>4. Ո՞վքեր էին նրանց օգնողները:<br>5. Ինչպե՞ս է թոռնիկը խնդրում շնիկին օգնել իրեն:<br>6. Ինչո՞վ ավարտվեց հեքիաթը: | - | Պապն ու շաղգամը հեքիաթի մագնիսային տախտակ<br>Գնդիկ Թոռնիկի մագնիսային տախտակ: | * *Այս ծածկագիրը գնահատելիս առաջադրվում են միայն երկխոսացված հարցադրումները:*<br>* *Այս ծածկագրի առաջին երեք առաջադրանքների բովանդակությունը կարող է փոխվել երեխայի նախասիրությունների և հետաքրքրությունների համապատասխան:*<br>* *Այս ծածկագիրը գնահատելիս լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ d330, d355 ծածկագրերից:* |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 6-14 տարեկան | 1. Ի՞նչն ես ամենաշատը սիրում քո քաղաքում/բնակավայրում:<br>2. Ի՞նչ գիտես քո քաղաքի/ բնակավայրի մասին:<br>3. Կարո՞ղ ես հետաքրքիր պատմություն պատմել քո քաղաքի/ բնակավայրի մասին:<br>4. Հաճա՞խ ես զրուցում մեծահասակների հետ, ո՞ւմ հետ, ինչի՞ մասին:<br>5. Ի՞նչ ես կարծում՝ ինչպես պետք է սկսել զրույցը մեծահասակների հետ:<br>6. Ի՞նչ ես կարծում՝ ինչպես պետք է սկսել զրույցը ընկերների հետ: | - | - | * Այս ծածկագիրը գնահատելիս առաջադրվում են միայն ներկայացված հարցադրումները:<br>* Այս ծածկագիրը գնահատելիս ցուցանիշի փոխլրացվողություն կարելի է ստանալ d330, d355 ծածկագրերից: |
| 15-18 տարեկան | 1. Ի՞նչ մասնագիտություն եք ընտրելու: Ինչու՞:<br>2. Ինչպե՞ս եք Ձեզ պատկերացնում 10 տարի անց Ձեր ընտրած մասնագիտությամբ:<br>3. Ի՞նչ կպատմեք Ձեր մասին:<br>4. Ի՞նչ թեմաների շուրջ եք սիրում զրուցել:<br>5. Ի՞նչ եք կարծում՝ ինչպես է պետք սկսել զրույցը մեծահասակների հետ:<br>6. Ի՞նչ եք կարծում՝ ինչպես պետք է սկսել զրույցը ընկերների հետ: | - | - | * Այս ծածկագիրը գնահատելիս առաջադրվում են միայն ներկայացված հարցադրումները:<br>* Այս ծածկագիրը գնահատելիս ցուցանիշի փոխլրացվողություն կարելի է ստանալ d330, d355 ծածկագրերից: |
| 18+ տարեկան | 1. Ինչո՞վ եք զբաղվում:<br>2. Ո՞րն է Ձեր ծննդավայրը:<br>3 Կպատմե՞ք դրա մասին:<br>4. Ի՞նչ վառ հիշողություններ ունեք այնտեղի հետ կապված: | - | | * Այս ծածկագիրը գնահատելիս առաջադրվում են միայն ներկայացված հարցադրումները: Միավորները դրվում են միայն գնահատողից: |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
| --- | --- | --- | --- | --- |
| | 5. Ի՞նչ թեմաներով եք սիրում զրուցել:<br>6. Ո՞ւմ հետ եք ավելի հաճախ սիրում զրուցել: | | | ** Այս ծածկագիրը գնահատելիս լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ d330, d355 ծածկագրերից:* |

| | |
| --- | --- |
| **d355**<br>**Քննարկումը** | ***Ֆորմալ կամ ոչ ֆորմալ իրավիճակներում ծանոթ կամ անծանոթ մեկ կամ մի քանի անձանց հետ բանավոր, գրավոր խոսքի, ժեստերի լեզվի կամ հաղորդակցման այլ միջոցների օգնությամբ հարցի ուսումնասիրության կամ բանավեճի սկսելը, շարունակելը և ավարտելը՝ ներառյալ մեկ անձի կամ մի քանի մարդկանց հետ քննարկումը:*** |
| **d355.1**<br>**Թեթև դժվարություն** | Անձն, ընդհանուր առմամբ, մասնակցում է բանավեճին, քննարկմանը, բայց դժվարանում է նախաձեռնել կամ ակտիվ մասնակցել դրան, կարող է խանգարված լինել խոսքի սահունությունը, ինչը և սահմանափակում է ակտիվ քննարկման կամ բանավեճում նրա ցանկությունը: |
| **d355.2**<br>**Միջին դժվարություն** | Չի կարողանում նախաձեռնել քննարկում կամ բանավեճ, դժվարությամբ է շարունակում այն, երբեմն չի հասցնում ավարտին, իսկ ուղղված հարցերին տալիս է հակիրճ պատասխաններ: Երբեմն կարող են դիտվել տրամաբանական, քերականական անհամաձայնություններ, կարող է շեղվել բուն թեմայից և խոսել երկրորդական երևույթների վերաբերյալ, որոնց պատճառով երբեմն անձն ունենում է խոսքային և/ կամ ոչ խոսքային ուղղորդման և աջակցության կարիք: Անձը հաճախ օգնող և աջակցող սարքերի և սարքավորումների /օրինակ՝ լսողական, տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված սարքավորումներ, հաղորդակցման այլընտրանքային մեթոդներ և միջոցներ և այլն/ կիրառման կարիք ունի: |
| **d355.3**<br>**Ծանր դժվարություն** | Անձը չի կարողանում սկսել, շարունակել և ավարտել քննարկումը կամ բանավեճը մեկ կամ մեկից ավելի անձանց հետ: Կարող է քննարկման/ բանավեճի մեջ ներգրավվել միայն մեկ բառով պատասխանների միջոցով: Կարող է մշտապես կարիք ունենալ խոսքային և/ կամ ոչ խոսքային ուղղորդումների, աջակցող սարքերի, սարքավորումների, հաղորդակցման այլընտրանքային սարքերի, սարքավորումների, միջոցների և մեթոդների: |
| **d355.4**<br>**Լիակատար դժվարություն** | Անձն առհասարակ չի ներգրավվում որևէ քննարկման կամ բանավեճի: |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող նյութեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
| --- | --- | --- | --- | --- |
| 3-5 տարեկան | ***Քննարկման թեմա՝ «Երեխաները խաղից հետո խաղալիքները պետք է հավաքեն»:***<br>1. Ի՞նչ ես կարծում, պարտադիր է, որ երեխաները խաղից հետո խաղալիքները հավաքեն: Ինչո՞ւ ես այդպես կարծում:<br>2. Ի՞սկ դու հավաքում ես խաղասենյակի խաղալիքները, որոնցով ոչ միայն դու ես խաղացել այլ՝ քո ընկերները:<br>3. Արդարացի է արդյո՞ք, որ խաղալիքները հավաքեն մայրիկը կամ դաստիարակը:<br>4. Ի՞նչ տեղի կունենա եթե մանկապարտեզում բոլոր երեխաները խաղալիքները թափեն հատակին և չհավաքեն: Ըստ քեզ, դա ճիշտ է, թե սխալ:<br>5. Ես կարծում եմ, որ խաղից հետո բոլորը միասին խաղալիքները պետք է հավաքեն: Ի՞սկ դու ինչ ես կարծում:<br>6. Հիմա մենք ի՞նչ որոշեցինք: Որ պետք է խաղից հետո...: Կարելի է ասել, որ այդ արարքով օգնում ենք մայրիկին և դաստիարակին: Կեցցե՛ս: | - | - | **** Այս ծածկագիրը գնահատելիս լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ d330, d350 ծածկագրերից:*** |
| 6-14 տարեկան | ***Քննարկման թեմա՝ «Իմ լավագույն ընկերը»:***<br>1. Ընկերներ ունե՞ս: Ըստ քեզ, ի՞նչ է ընկերությունը:<br>2. Ինչ ես կարծում, քեզ շրջապատող մարդկանցից ով կարող է դառնալ քո լավագույն ընկերը: Ինչո՞ւ ես այդպես մտածում:<br>3. Ինչպիսի՞ն են քո լավագույն ընկերները: Ունե՞ս լավագույն ընկեր: | - | - | **** Այս ծածկագիրը գնահատելիս լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ d330, d350 ծածկագրերից:*** |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | 4. Եթե գաղտնիք չէ, կարո՞ղ ես ասել ինչու քեզ լավ ընկեր համարում ես: Ինչո՞ւ<br>5. Երբ ընկերդ գտնվում է դժվարին իրավիճակում, կօգնե՞ս նրան: Ինչպե՞ս: Ե՞րբ.<br>6. Ե՞րբ ընկերոջդ հասնես օգնության, ըստ քեզ ընկերդ ինչ զգացողություն կունենա: Ի՞սկ դու:<br>7. Համաձայն ես այն կարծիքի հետ, որ լավ ընկերներ ունենալու համար նախ ինքդ պետք է լավ ընկեր լինես: Կեցցե՛ս: | | | |
| 15-18 տարեկան | **Քննարկման թեմա՝ «Ո՞րն է լավագույն մասնագիտությունը»:**<br>1. Մասնագիտություն ընտրելիս ինչն եք կարևորում. հայտնի դառնալը, մարդկանց ծառայելը, բարձր աշխատավարձը, մարդկանց հետ շփվելու հնարավորությունը, գիտելիքներով հարստանալը, աշխատանքային լավ պայմանները, աշխատանքային ժամերը, մասնագիտական բարձր մակարդակը:<br>2. Ի՞նչ եք կարծում, մասնագիտություն ընտրելիս, կարո՞ղ եք սխալվել: Ինչպե՞ս:<br>3. Ձեր նախընտրած ոլորտում, ունե՞ք իդեալներ: Եթե գաղտնիք չէ՝ բնութագրեք նրանց, ինչո՞վ են նրանք Ձեզ օգնում մասնագիտություն ընտրելիս:<br>4. Ինչպիսի՞ մասնագետ եք դառնալու: Ինչո՞ւ եք այդպես կարծում:<br>5. Ձեր կողմից ընտրված մասնագիտությունը, արդյո՞ք համապատասխանում է Ձեր նախասիրություններին: | - | - | ** Այս ծածկագրով գնահատելիս յուրաքանչյուր կողմնորոշվածություն կարելի է սկսել d330, d350 ծածկագրերից:* |

| Տարիքային խումբ | Առաջադրանք | Հուշող հարցեր | Անհրաժեշտ պարագաներ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | 6. Այսպիսով կարո՞ղ եք ասել, որ Դուք ճիշտ որոշում եք կայացրել: | | | |
| 18+ տարեկան | 1 Ի՞նչ ֆիլմեր եք դիտում: Ինչո՞ւ:<br>2. Ըստ Ձեզ՝ ո՞րն է այն ֆիլմը, որը յուրաքանչյուր մարդ պետք է դիտի: Ինչո՞ւ եք այդպես կարծում:<br>3. Համամի՞տ եք այն մտքի հետ, որ յուրաքանչյուր ֆիլմ ուսուցողական բնույթ է կրում: Ինչո՞ւ:<br>4. Կնկարագրե՞ք խնդրեմ որ հատվածն եք առավել կարևորում տվյալ ֆիլմում:<br>5. Ի՞նչն է Ձեզ ավելի շատ տպավորում ֆիլմերում:<br>6. Կարո՞ղ է ֆիլմը ազդել Ձեր օրվա տրամադրության վրա: | - | - | * Այս ծածկագիրը գնահատելիս լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ d330, d350 ծածկագրերից: |

| | |
|---|---|
| **d360**<br>**Հաղորդակցման սարքեր և միջոցներ օգտագործելը** | ***Հաղորդակցման նպատակով սարքեր, միջոցներ և այլ միջոցներ օգտագործելը, ինչպես օրինակ՝ ընկերոջը հեռախոսով զանգահարելը՝ ներառյալ հեռահաղորդակցության սարքեր, տպագրական մեքենաներ և հաղորդակցության միջոցներ օգտագործելը:*** |
| **d360.1**<br>**Թեթև դժվարություն** | Անձը հաղորդակցության նպատակով, գրեթե առանց դժվարության, կիրառում է սարքեր, միջոցներ և այլ միջոցներ, ինչպես օրինակ՝ ընկերոջը հեռախոսով զանգահարելը՝ ներառյալ հեռահաղորդակցության սարքեր, տպագրական մեքենաներ և հաղորդակցության միջոցներ կիրառելը, սակայն կարիք ունի հաղորդակցման սարքի, միջոցի և այլ միջոցների հատուկ հարմարեցման: |
